



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2504

243

U-16

1889

2010

B 2004

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

649

243
U-16

ՀԱՅ
ԿՈՆ
ՍՏԱՆ
(

ՍԱՀՄՈՍԱՐԱՆ

Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

և

Ի ԳՈՀՈՒԹԻՒՆ

ՍՐԲՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ԷՍՏ
-U



Ի ՎԻԵՆՆԵ

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս՝ ԱՍՏՈՒԼԵԱԾԵՆԻ

1884

71048



24749-61

Յ Ա Ն Կ

և ՊԱՏՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ	7
Ա. Յորդորում	—
Բ. Կարմուռ	10
Գ. Գեորգիանցի	11
Դ. Խոնարհանցի	—
Ե. Խոնարհանցի	17
Զ. Զղև	21
Է. Քաղաքացի	28
Ը. Յոյ	33
Թ. Փոփո	36
և ՊՈՏՈՒԹՅՈՒՆ	41
Ժ. Հասարակ	—
ԺԱ. Հեյդուհի	43
ԺԲ. Երկրագործ	45
ԺԳ. Ցնն	46
ԺԴ. Օրհն	48
ԺԵ. Շնորհակալ	60
ԺԶ. Սեր	67
ԺԷ. Առաջնորդ	68
ԺԸ. Խրեյ	73
ԺԹ. Խնորհ	80
Ի. Կարգադր	84
Տեղեք	87
ԱՅԼ ԱՊՕԹԻ ՊԱՏՄԱՍՏՈՒՆ	92
Ա. Պարարկ	93
Բ. Գողթն	146

0 01 5

ՍԵՂՄՈՍԵՐԸՆ

Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻԻՆ

Ս. ՊԵՏԵՐԱԳԻ

Ա. ՍԵՂՄՈՍ

ՅՈՐՊՈՐՈՒՄՆ — ¹ Բարի է խոս-
տովան լինել Տեառն, սաղմնս
ասել անուան քում, Բարձրեալ .
տամնաղեալ սաղմնսարանալ ի
ձայն օրհնութեան գովել: ² Մա-
տիք առ Տէր, եւ առէք լոյս: Ղա-
շակեցէք եւ տեսէք, զի քաղցր
է Տէր: ³ Եռէք պատարագս, եւ
մտէք ի սրահ սրբութեան նորա .
երկիր պաղէք Տեառն ի գաւիթս
սրբութեան նորա: ⁴ Մատու-
ցէք Տեառն, որզիք Եստու-
ծոյ, մատուցէք Տեառն զոր-
դիս խոյոց: Մատուցէք Տեառն

զբառս եւ զպատիւ. մատուցէք
Տեառն զբառս անուան նորա:
⁵ Եւր ժողովուրդ իմ, եւ խօսեցայ
քեզ քեզ. եւ Խորայէլ քեզ
վկայեցից, զի Աստուած Աստուած
քոեմ ես: Աչ թէ վասն պատա-
րագաց քոց կշտամբեմ զքեզ,
զի ողջակէզք քո առաջն իմ են
յամենայն ժամ: Աչ ընդունիմ
ի տանէ քումէ զուարակս եւ ոչ
ի հօտից քոց նոխագս: Իմ է ա-
մենայն զազան անտառի, էրէ լե-
րանց եւ ամենայն անասուն: Պի-
տեմ ես զամենայն թռչունս երկ-
նից. գեղեցկութիւն վայրի ընդ
իս է: Թէ քաղցեայց, քեզ ինչ
ոչ ասացից, զի իմ է աշխարհ
լիւ իւրով: Աչ ուտեմ ես զմիս
զուարակաց քոց, եւ ոչ զարիւն
նոխազաց քոց ընկեմ: Մատ Աս-
տուծոյ պատարազ օրհնութեան.
կատարեա Ռարձրելոյն զուխտս
քո: Պատարազ օրհնութեան

փառաւոր արացէ զիս: ⁶ Իբրեւ
զի սիրելի են յարկք քո, Տէր զօ-
րութեանց. ցանկայ եւ փափաքէ
անձն իմ ի դաւիթս քո: Սիրտ
իմ եւ մարմին իմ ցնծացեն առ
Աստուած կենդանի: Վանդի
ճնճղուկ եզիտ իւր տուն, եւ տա-
տրակ զբոյն ուր դիցէ զձագս իւր:
Սեղան քո, Տէր զօրութեանց,
թագաւոր իմ եւ Աստուած իմ:
⁷ Ես կամօք իմովք պատարագս
մատուցից քեզ: Մտից ի տուն
քո պատարազօք, եւ տաց քեզ
զուխտս իմ զոր խոտացան քեզ
չթուէք իմ: Ողջակէզս ուղղա-
լիցս մատուցից քեզ խոյովք եւ
ինկովք, եւ քեզ մատուցից
զուարակս եւ նոխագս: ⁹ Մտից
առաջն սեղանոյ Աստուծոյ առ
Աստուած որ ուրախ առնէ զման-
կութիւն իմ:

Բ. ՍԵՂՄՈՍ

ԿՈՉՈՒՄՆ — ¹ Աստուած, յօղ-
նել ինձ նայեա. Տէր, յընկերել
ինձ փութա: ² Առաքեա, Տէր,
զոյս քո եւ զճշմարտութիւն
քո, զի առաջնորդեցն ինձ եւ
հանցն զիս ի լեառն սուրբ եւ ի
յարկս քո: ³ Ամենեքեան քեզ
սպասեն, եւ դու տաս նոցա կե-
րակուր ի ժամու: Տաս դու նո-
ցա, եւ կերակրին. բանաս զձեռն
քո եւ լցուցանես զամենեսեան
քաղցրութեան կամօք քովք:
Վարձուցանես զերեսս քո ի նո-
ցանէ, եւ խոովին. հանես զոզի
քո ի նոցանէ, պակասն եւ ի
հող դառնան: Առաքես զոզի
քո, եւ ստանաս զնոսս, եւ նորո-
զես զերեսս երկրի:

Գ. ՍԵՂՄՈՍ

ԿՆՏԱՆՈՐՈՒԹԻՒՆ — ¹ Հայեա, Տէր,
ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց
քոց, եւ առաջնորդեա որդւոց նո-
ցա. եղիցի լոյս հեռոն Աստուծոյ
ի վերայ մեր: Օգործս ձեռաց մե-
րոց ուղիղ արա ի մեզ, Տէր. եւ
զգործս ձեռաց մերոց աջողեա
մեզ: ² Լսելի արա ինձ առաւօ-
տուց զողորմութիւնս քո. ցոյց
ինձ ճանապարհ յոր զնացից:
³ Սիրտ սուրբ հաստեա յիս Աս-
տուած, եւ հողի ուղիղ նորոգեա
ի փորի իմում: ⁴ Հողի քո բարի ա-
ռաջնորդեցէ ինձ յերկիր ուղիղ:

Դ. ՍԵՂՄՈՍ

ԽՈՆԱՐՉՈՒԹԻՒՆ — ¹ Ողորմեա ինձ,
Տէր, զի նեղեալ եմ ես. խոովե-
ցաւ ի սրտմտութենէ ակն իմ,
անձն իմ եւ փոր իմ: Պակասեցին

ի ցաւոյ կեանք իմ եւ ամբ իմ յողոց ելաներջ: Աղքատացաւ ի ակարութենէ զօրութիւն իմ, եւ ոսկերք իմ խռովեցան: ² Աս որպէս ջուր հեղայ, եւ ցրուեցան ամենայն ոսկերք իմ. եւ եղեւ սիրտ իմ որպէս մոմ հալեալ ի մէջ որովայնի իմոյ: Չորացաւ որպէս խեցոյ զօրութիւն իմ. լեզու իմ ի քիմն իմ կցեցաւ, եւ ի հող մահու իջուցին զես: ³ Օխ լցաւ չարչարանօք անձն իմ. եւ կեանք իմ ի դժոխս մերձեցան, եւ համարեցայ ես ընդ այնուսի որ իջանեն ի գուբ: Աղէ ես որպէս մարդ առանց օգնականի, որպէս վերաւորս որ ննջեն ի գերեզմանս զորս դուն ոչ յիշեցեր, եւ նոքա ի ձեռանէ քումէ մերժեցան: Աղին զես ի գբի ներքնում, ի խաւարի եւ ի ստուերս մահու: ⁴ Գուզիտես զնախատինս իմ, զամօթ իմ եւ զպատկառանս իմ: Աղքատ

եւ ցաւած եմ ես. փրկութիւն քո, Աստուած, ընկալցի զես: ⁵ Աս արհամարհեալ եղէ, եւ ոչ գիտացի. որպէս զանասուն համարեցայ առաջի քո: ⁶ Յիս հաստատեցաւ բարկութիւն քո. արհաւիրք քո խռովեցուցին զես: Շքեցան զինեւ որպէս ջուր. զօր ամենայն սաշարեցին զես ի միասին: ⁷ Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, եւ ոսկերք իմ որպէս խոխ չորացան: Աւուրք իմ որպէս հովանի անցին, եւ ես որպէս խոտ ցամաքեցայ: Հարաւ որպէս խոտ եւ ցամաքեաց սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ: Ացեցաւ ոսկր իմ ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալրան յանապատի: Աղէ ես որպէս բու յաւերակի. աքնեցայ, եւ եղէ ես որպէս ձրն ձրուկ միայն ի սանխա: Օմօխիր որպէս հաց կերայ, եւ զըմպելի

իմ արտասուօք խառնեցի: Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր եւ խոնարհեցուցեր զիս: ⁹ Աչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո: Աչ է խաղաղութիւն ոսկերաց իմոյ յերեսաց մեղաց իմոյ: Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ: Անխեցան եւ փառցան վէրք իմ յերեսաց անզբամութեան իմոյ: Տառապեցայ եւ խոնարհեղէ յոյժ. զօր հանապաղ արտում զնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք. եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ: Չարչարեցայ եւ խոնարհեղէ մինչեւ յոյժ. մոնչէի առ հեծութեան սրտի իմոյ: Տէր առաջի քո են ամենայն ցանկութիւնք իմ. եւ հեծութիւնք իմ ի քէն ոչ ծածկեցան: Սիրտ իմ խռովեցաւ

յիս, եւ եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոյ եւ այս ոչ եղև ընդ իս: ¹¹ Օգոր ամենայն նախատինք իմ առաջի իմ են, եւ ամօթ երեսաց իմոյ ծածկեաց զիս: ¹² Աս որդն եմ եւ ոչ մարդ. նախատինք մարդկան եւ արհամարհանք ժողովոցոյ: ¹³ Մոռացեալ եղէ ես, որպէս մեռեալ, ի սրտէ. եւ եղէ ես որպէս զանօթ կորուսեալ: ¹⁴ Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ եւ զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ: ¹⁵ Սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ: Ահ եւ զողումն եկն ի վերայ իմ, եւ ծածկեաց զիս խաւար: ¹⁶ Քան զամենայն թշամիս իմ եղէ ես նախատ զրացեաց իմոյ յոյժ. ահ եւ երկիւղ ծանօթից իմոյ: Ամենեքեան որ տեսանէին զիս, արտաքս փախչէին յինէն: ¹⁷ Մոլորեցայ ես որպէս

զոչխար կորուսեալ. խնդրեա
 զճառայս քո: ¹⁸ Մի թէ մեռելոց
 առնիցես զսքանչելիս քո, կամ
 բժիշկք յարուցանիցեն եւ խոս-
 տովան առնիցին առ քեզ: Մի
 թէ պատմեսցէ որ երբեք ի գե-
 րեզմանի զողորմութիւնս քո, կամ
 զճշմարտութիւնս քո ի կորստեան:
 Մի թէ ճանաչիցին ի խաւարի
 սքանչելք քո, կամ արդարու-
 թիւն քո յերկիր մոռացեալ:
 Բնդէր Տէր մերժես զանձն իմ,
 կամ դարձուցանես զերեսս քո
 յինէն: Տնանկ եւ վաստակաւոր
 եմ եւ ի մանկութենէ, ի բարձրու-
 թենէ խոնարհեցայ եւ ապշեցայ:
¹⁹ Մինչեւ յերբ դարձուցանես
 զերեսս քո ի սպառ. բորբոքեսցի
 որպէս հուր բարկութիւն քո: Իսկ
 արդ յիշեա տես, ո՞վ է իմ հան-
 գիսս. միթէ ի զուր ինչ ստեղծեր
 զամենայն որդիս մարդկան: Ո՞վ
 է մարդ որ կեցցէ եւ ոչ տեսցէ

ԲԵՐԿԻՆ

19-64416

զմահ, կամ փրկեսցէ զանձն ի ձե-
 աաց դժոխոց: Ո՞ւր են ողորմու-
 թիւնք քո Տէր առաջնքն: ²⁰ Թէ
 կամեցեալ էիր պատարագս՝ մա-
 տուցանէաք. բայց դու ընդ ողջա-
 կէզս իսկ ոչ համեցար: Պատա-
 բազ Աստուծոյ հոգի խոնարհ.
 զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ
 Աստուած ոչ արհամարհէ: ²¹ Ի
 բաց զնա յինէն Տէր, զե այր մե-
 զաւոր եմ ես: ²² Աստուած, քաւ-
 եա զիս զմեղաւորս: ²³ Չեմ բաւ-
 ախան եթէ ընդ յարկաւ իմով
 մտանիցես. այլ ասա բանիւ մի-
 այն, եւ բժշկեսցի անձն իմ:

Ե. ՍԱՂՄԱՍ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ — ¹ Տէր, փոր-
 ձեցեր զիս եւ ծանեար զիս. դու
 ծանեար զնաեղ իմ եւ զյառ-
 նել իմ: Ի միտ առեր զխորհուրդս
 իմ ի հեռաստանէ, զչաւիկս իմ



201 112

եւ զվիճակս իմ դու քննեցեր:
 Եւ զամենայն ճանապարհս իմ
 յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ
 նենդութիւն ի լեզուի իմում:
 Եհա դու Տէր ծանեար զյետին
 իմ եւ զառաջին իմ, դու ստեղ-
 ծեր եւ եզիր զձեռն քո ի վերայ
 իմ: Աքանչելի եղև զիտութիւն
 քո յինչն. զօրացաւ, եւ ոչ հան-
 դարտում նմա: Զ^ո երթայց ես
 յոգւոյ քումէ. եւ կամ յերեսաց
 քոց ես յ^ո փախեայց: Թէ ելա-
 նեմ յերկինս, դու անդ ես. եւ
 թէ իջանեմ ի գոփա, եւ անդր
 մօտ ես: Թէ առից զթեւս իմ
 ընդ առաւօտս, եւ բնակեցայց
 յեզերս ծովու, Սակայն եւ անդ
 ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, եւ
 աջ քո ընկալցի զիս: Եսացի թէ
 խաւար ուրեմն արդեւք ծածկես-
 ցէ զիս. կամ զիշեր փոխանակ
 լուսոյ փրկութեան իմոյ: Խաւ-
 արն քեզ ոչ խաւարանայ, եւ

զիշերն որպէս տիւ լուսաւոր եւ
 զիցի. եւ խաւար նորա որպէս լոյս
 նմա: Գու ստացար զերիկամունս
 իմ, եւ ընկալար զիս յորովայնէ
 մօր իմոյ: Խոստովան եղէց քեզ
 Տէր, զի ահեղ եւ սքանչելի ես.
 սքանչելի են գործք քո, եւ անձն
 իմ զիտաց յոյժ: Ոչ թաքեաւ
 ոսկր իմ ի քէն զոր արար ի ծա-
 ծուկ, եւ կար զօրութեան իմոյ
 ընդ ստորինս երկրի: Օ՛անգործս
 իմ տեսին աչք քո, եւ ի զիրս
 քո ամենեքեան գրեցան: ² Ես
 սուած, զկեանս իմ պատմեցից.
 եւ եզից զարտասուս իմ առաջի
 քո: ³ Եստուած, դու ծանեար
 զանդգամութիւն իմ, եւ յան-
 ցանք իմ ի քէն ոչ ծածկեցան:
⁴ Օ՛անօրէնութիւնս իմ պատմե-
 ցից, եւ հոգացայց վասն մեղաց
 իմոյ: ⁵ Օ՛մեղս իմ ցուցից քեզ,
 եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծաճ-
 կեցից ի քէն: Եսացի թէ պատ-

մեցից ինձէն զմեզս իմ, եւ դու
 թողցես զամենայն ամադարչտու-
 թիւնս մեզաց իմոց: ⁶ Օւնօրէ-
 նու թիւնս իմ ես ինձէն զիտեմ,
 եւ մեղք իմ առաջի իմ են յա-
 մենայն ժամ: Արպէս արդար ե-
 ղեցես ի բանս քո, եւ յաղթող
 ի դասել քեզ: Անօրէնութեամբ
 յղացայ, եւ ի մեզս ծնաւ զիս
 մայր իմ: **Գու Տէր** զճշմարտու-
 թիւն սիրեցեր, զանյայտս եւ
 զճաճիկեարս իմաստութեամբ քով
 յայանեցեր ինձ: ⁷ Օյանցուածս
 իւր ո՞վ կարէ առնուլ ի միտ. ի
 դաղանեաց իմոց սուրբ արա զիս,
 եւ յօտարէ պահեա զճառայս քո:
⁸ Թէ զանօրէնութիւնս քննես
Տէր Տէր, իսկ ո՞ կարէ կալ առա-
 ջի քո, զի ի քէն է քաւութիւնս:
⁹ **Մի** մտաներ ոտիս ընդ ծառայի
 քում, զի ոչ արդարանայ առա-
 ջի քո ամենայն մտեղի:

Զ. ՍԱԳՄՈՍ

ՉԳՅՈՒՄՆ — ¹ Հայր, մեզայ յեր-
 կինս եւ առաջի քո. եւ ոչ եւս
 եմ արժանի կոչել որդի քո:
² Օայդ **Տեառն** հատուցանէք
 այդպէս ժողովուրդ յիմար եւ ոչ
 իմաստուն: Աչ նա է հայրն որ
 ստացաւ զքեզ, արար զքեզ եւ
 հաստատեաց զքեզ: Հարց զհարս
 քո, եւ պատմեացին քեզ. եւ
 ցծերս քո, եւ ասացեն քեզ:
³ Օայս ամենայն արարեր, եւ ես
 լռեցի քեզ. կարծեցեր անօրէնդ
 ի մոի քում թէ եւ ես քեզ
 նմանիցեմ: Երդ յանդիմանեցից
 եւ կացուցից զայս ամենայն առա-
 ջի քո: ⁴ Աղորմեա ինձ Աստուած,
 ըստ մեծի ողորմութեան քում.
 ըստ բազում զթութեան քում
 քաւեա զանօրէնութիւնս իմ:
 Առաւել լուա զիս յանօրէնու-
 թենէ իմմէ, եւ ի մեզայ իմոց

սուրբ արա զես: Վեղ միայն մեղայ Տէր, եւ չար առաջի քո արարի: Յօղեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց. լուա, եւ քան զձիւն սպիտակ եղէց: Վարձո զերեսս քո ի մեղաց խնոց, եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յիննէն: Մի ընկենուր զես Տէր յերեսաց քոց, եւ զհօղի քո սուրբ մի հաներ յիննէն: ⁵ Աս ասացի. Տէր, ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: ⁶ Վասն անուան քո Տէր, քաւեա զմեղս իմ, զի բազում եղեն: ⁷ Մի յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղ եկեացէ առ մեզ ողորմութիւն քո, զի աղքատացաք յոյժ: Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր վասն մեծի փառաց անուան քո: Տէր փրկեա զմեզ, եւ քաւեա զմեղս մեր վասն անուան քո: ⁸ Մի դարձուցաներ զերեսս քո յիննէն. նմանիցիմ այնոցիկ որ ի-

ջանեն ի դուբ: ⁹ Աս ի ասնջանս պատրաստ եմ, եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ: ¹⁰ Աւր Տէր աղօթից խնոց, ունկն զիր խնդրուածաց խնոց. արասուաց խնոց մի լուեր: Պանդուխտ եմ ես առաջի քո, նշդեհ եւ անցաւոր որպէս եւ ամենայն հարք իմ: ¹¹ Տէր մի սրամտութեամբ քով յանդիմաներ զես, եւ մի բարկութեամբ քով խրատեր զես: Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ: Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու Տէր մինչեւ յերբ: Վարձ Տէր եւ փրկեա զանձն իմ. կեցո զես Տէր ըստ ողորմութեան քում: Ծի ոչ որ է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժօխս խոստովան առնիցի առ քեզ: Վաստակեցի ես ի հեծութեան իմում. լուացի զամենայն զիշեր զմահիւնս

իմ, եւ արտասուօք խնովք զան-
կողինս իմ թացի: Կռովեցաւ ի
արամտութենէ ակն իմ. մաշեցայ
ես ի վերայ ամենայն թշնամեաց
խնոց: ¹² Արդար ես յամենայնի
զոր ածեր ի վերայ մեր. եւ ամե-
նայն գործք քո ճշմարիտ են: Ծի
մեղաք եւ անօրինեցաք յապա-
տամբ լինելն ի քէն. եւ առաւել
մեղաք յամենայնի, եւ պատուի-
րանաց քոց ոչ անասցաք: Ոչ
պահեցաք եւ ոչ արարաք որպէս
պատուիրեցեր մեզ, զի բարի լե-
նիցի մեզ: Աւ արդ ոչ գոյ մեզ
բանալ զբերանս մեր, զի ամօթ
եւ նախատինք եղաք ծառայից
քոց պաշտօնէից: Այլ մի մասներ
զմեզ ի սպառ վասն անուան քո,
եւ մի ի բացէ առներ զողորմու-
թիւնս քո ի մէնջ: Անձամբք բե-
կելովք եւ հոգւովք առուապանաց
ընդունելի լիցուք իբրեւ զոյժա-
կէզս խոյոց եւ զուարակաց եւ

իբրեւ զբիւրաւորս դառանց պա-
րադտաց: Այնպէս ընդունելի ե-
ղցի պատարագս մեր այսօր ա-
ռաջի քո, լինել կատարեալ զկնի
քո. զի չեք ամօթ յուսացելոցս ի
քեզ: Աւ արդ դամք զհետ քո
ամենայն սրտիւք մերովք, եւ երկն-
չեմք ի քէն, եւ խնդրեմք զերեսս
քո: Մի յամօթ առներ զմեզ.
այլ արա ընդ մեզ ըստ հեղու-
թեան քում եւ ըստ բազում ո-
ղորմութեան քում, եւ փրկեա
զմեզ վասն սքանչելեաց քոց, եւ
տուր փառս անուան քում Տէր:
Աւ յամօթ լիցին ամենեքեան ոյք
յուցանեն չարիս ծառայից քոց,
եւ ամաչեցեն յամենայն բռնու-
թեան իւրեանց եւ զօրութիւն
նոցա խորտակեացի: Աւ ծանիցեն
զի դու ես Տէր Աստուած միայն
եւ փառաւորեալ ի վերայ ամե-
նայն տիեզերաց: ¹³ Տէր ամենա-
կալ Աստուած Արբահամու, Աս-

Հակայ, Յակոբայ եւ զաւակի նոցա արդարոց: Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա: Ապակեցեր զծով բանիւ հրամանաւ քով. փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով: Որ ամենայն ինչ սարսեալ եւ դողայ յերեսաց ահի զօրութեան քո: Անբաւ է մեծփայելչութիւն փառաց սրբութեան քո. սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ի վերայ մեղաւորաց, անչափ եւ անքնին են ողորմութիւնք աւետեաց քոց: **ԳՈՒ**, Տէր բարձրեալ երկայնամիտ բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան: **ԳՈՒ Աստուած** ոչ եղիր ապաշխարութիւն վասն արդարոցն **Աբրահամու**, **Սահակայ**, **Յակոբայ** որք ոչն մեղան քեզ: **Այլ** եղիր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ

աւելի քան զաւազ առ եզր ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ: **Չեմ** արժանի Հայել եւ տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոց: **Աորացեալ եմ** ես ի բռնութենէ կապանաց երկաթեաց, եւ ոչ գոյ ինձ Հանդիստ: **Բարկացուցի** սրտմտութեամբ եւ չար առաջն քո արարի. կանգնեցի պատկեր, եւ բազմացուցի զցատումն: **Աւ** արդ **Տէր** խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոց, եւ խնդրեմ ի քաղցրութենէ քումէ: **Մեղայ Տէր** մեղայ, եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն զիտեմ: **Աղաչեմ** եւ խնդրեմ ի քէն, թող ինձ **Տէր**, թող ինձ, եւ մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոց: **Մի** յաւիտեան բարկանար ինձ, եւ մի յիշեր զչարիս իմ, եւ մի սարտաւորեր զիս ընդ այնտակ որ իջանեն ի ներքոց երկրի չարեօք:

Օ ի դու Աստուած, Աստուած ապաշխարողաց ես, եւ յիս ցոյց զբարերարութիւնդ քո որ անարժանս եմ: Սեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում, եւ ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց: Օ քեզ Տէր օրհնեն ամենայն զուարթունք երկնից, եւ քո են փառք յաւիտեանս. ամէն:

Է. Ս Ա Ղ Մ Ո Ս

Ք Ա Ն Ա Ե Ր Ո Ւ Թ Ի Ն Ե — ¹ Օ արթիր, ընդէր ննջես Տէր, արի եւ մի մերժեր զմեզ ի սպառ: Օ մէ՞ դարձուցանես զերեսս քո ի մէնջ. մոռանաս զաղքատութիւն եւ զնեղութիւնս մեր: Խոնարհ եղեն մինչեւ ի հող անձինք մեր, եւ յերկիր կցեցան մէջք մեր: Արի Տէր օգնեա մեզ, եւ փրկեա զմեզ վասն անուան քո: ² Արի Տէր

Աստուած իմ, բարձր եղիցի ձեռն քո, եւ մի մոռանար զանանկս: Ի քեզ թողեալ է աղքատն եւ ողբոյն դու ես օղնական: ³ Ողորմեա ինձ Տէր, եւ տես զխոնարհութիւն իմ ի թշնամեաց իմոց, ո բարձր արասցես զիս ի զրանց մահուանէ: Արպէս պատմեցից զամենայն օրհնութիւնս քո, եւ յնձացայց ի փրկութեան քում: Ոչ ի սպառ մոռանայ Տէր զաղքատն. համբերութիւն անանկաց մի կորիցէ ի սպառ: ⁴ Արի Տէր բարկութեամբ քով, եւ բարձր լեր ի սպառել թշնամեաց իմոց: ⁵ Օ ի պարծի ի չարութեան հզօր. զանօրհնութիւն: Աստուած կործանեցէ զնա ի սպառ. խլեցէ եւ հանցէ զնա յարկաց իւրոց, եւ զարմատս նորա յերկրէն կենդանեաց: Տեսցեն արդարք, եւ երկիցեն. զտվաւ ծիծաղեցին եւ ասացեն. Այս այր է որ ոչ արար

Վաստուած իւր օգնական, այլ
 յուսացաւ սա ի բազում զօրու-
 թիւն իւր, եւ զօրացաւ ի նան-
 րութեան իւրում: Այլ ես որպէս
 ձիթենի պողպից ի օան Վասու-
 ծոյ. յուսացայց յողորմութիւն
 Վասուծոյ յաւիտեան, եւ յաւի-
 տեանս յաւիտենից: Խոստովան
 եղէց քեզ յաւիտեան, զի արա-
 րեր, եւ համբերից անուան քում,
 զի քաղցր ես առաջի սրբոց քոց:
⁶ Իմ փոքր մի եւս սասանեալ էին
 ոտք սակաւիկ մի եւ զայթակ-
 զեալ էին գնացք: ⁷ Թէ ոչ
 Տեառն օգնեալ էր ինձ, փոքր մի
 եւս եւ բնակեալ էր անձն իմ ի
 դժոխս: Աթէ ասէի թէ ահա սա-
 սանեցան ոտք իմ, ողորմութիւն
 քո Տէր օգնէր ինձ: Բստ բազում
 ցաւոց սրտի իմոյ մխիթարութիւն
 քո ուրախ առնէր զանձն իմ:
⁸ Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն
 իմ, Տէր հաստատիչ իմ, ա-

պաւէն իմ եւ փրկիչ իմ: Ի նե-
 ղութեան իմում ես առ Տէր
 կարգացի, եւ առ Վասուած իմ
 աղաղակեցի: Առաւ ինձ ի տա-
 ճարէ սրբոց իւրմէ ձայնի աղօթից
 իմոց. եւ աղաղակ իմ առաջի նո-
 րա մոցէ յակննջս նորա: ⁹ Աչք
 իմ յամենայն ժամ առ Տէր, եւ
 նա հանէ յորոգայթէ զոտս իմ:
¹⁰ Արդ ընդէ՞ր արտում ես անձն
 իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յու-
 սա առ Վասուած, խոստովանեա
 նմա. փրկիչ երեսաց իմոց Վա-
 սուած է: Վասցի Վասուծոյ.
 ընդունել իմ ես. ընդէ՞ր մերժե-
 ցեր զիս. ընդէ՞ր արտում գնամ
 ես ի նեղել թշնամոց իմոց: Ի
 փշել ոսկերաց իմոց նախասեցին
 զիս թշնամիք իմ, յասել յիս զօր-
 հանապաղ թէ ուր է Վասուած
 քո: Արդ ընդէ՞ր արտում ես անձն
 իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս.
 յուսա առ Վասուած, խոստա-

վանեա նմա. փրկիչ երեսաց ի-
մոց Աստուած է: ¹¹ Ղու Աս-
տուած հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մն-
ռացար զիս. ընդէ՞ր արտում
գնամ ես ի նեղել թշնամոյ ի-
մոց: Մաից առաջի սեղանոյ Աս-
տուծոյ առ Աստուած, որ ուրախ
առնէ զմանկութիւն իմ: Արդ
ընդէ՞ր արտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովեա զիս. յուսա
առ Աստուած, խոստովանեա
նմա. փրկիչ երեսաց իմոց Աս-
տուած է: ¹² Աղօրմութիւն եւ
ճշմարտութիւն պատահեսցին.
արդարութիւն եւ խաղաղութիւն
համբուրեսցին: Ճշմարտութիւն
յերկրէ բուսաւ, արդարութիւն
յերկնից երեւեցաւ: Տէր տացէ
զքաղցրութիւն իւր, եւ երկիր
մեր տացէ զպտուղ իւր:

Ը. ՍԱՂՄՈ

ՅՈՅՍ — ¹ Մինչեւ յե՞րբ Տէր
մոռանաս զիս ի սպառ. մինչեւ
յե՞րբ դարձուցանես զերեսս քո
յինէն: Մինչեւ յե՞րբ գնեմ
զխորհուրդս յանձն իմ, եւ ցաւք
պատի իմոց զաւուրս: Մինչեւ յե՞րբ
բարձրանայ թշնամին ի վերայ
իմ. նայեա եւ լուր ինձ Տէր Աս-
տուած իմ: Լոյս տուր Տէր ա-
չաց իմոց, զի մի երբեք ննջեցից
ի մահ: Մի ասասցէ թշնամին
թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք
իմ ցնծացեն թէ ես սասանե-
ցայց: Աս յողորմութիւնս քո
Տէր յուսացայ. ցնծացաւ սիրտ
իմ ի վրկութեան քում. օր-
հնեցից զՏէր զբարերարդ իմ:
² Աստակեցի ես առ աղաղակել.
կերկերեցաւ կոկորդ իմ. նուա-
զեցին աչք իմ առ յուսալ ինձ
առ Տէր Աստուած իմ: ³ Աարօ-

տացաւ անձն իմ ի փրկութիւնս
քո, զի ես ի բանս քո յուսացայ:
Սպասեցին աչք իմ բանի քում.
ասացի, ե՞րբ մտիթարեացես զիս:
՝ Որպէս աչք ծառայի ի ձեռս
տեառն իւրոյ եւ որպէս աչք ա-
զախնոյ ի ձեռս ակիւտջ իւրոյ.
Ե. յնպէս են աչք մեր առ քեզ
Տէր Եստուած մեր, մինչեւ ողոր-
մեսցիս ի վերայ մեր: Ողորմեա
մեզ Տէր, ողորմեա մեզ, զի բա-
զում լցաք արհամարհանօք:
՝ Եմենեքեան որ տեսանէին զիս,
արհամարհէին զինեւ. խօսէին
չթամբք եւ շարժէին զգլուխս
իւրեանց. Յուսացաւ ի Տէր, եւ
փրկեացէ զիս. կեցուցէ զիս, զի
կամի զիս: Ղու ես որ հանար
զիս յարգանդի, յոյս իմ ի ստեանց
մօր իմոյ: Ի քեզ անկայ ես յար-
գանդէ. յորովայնէ մօր իմոյ դու
ես Եստուած իմ: ՝ Տես զխոնար-
հութիւն իմ եւ զվաստակ իմ,

եւ թող ինձ զամենայն մեղս իմ:
Տես զթշնամիան իմ զի բազում
եղեն, ատերութիւն զոր ի նանիր
ասեցին զիս: Պահեա զանձն իմ,
եւ փրկեա զիս. եւ մի յամօթ եղէց,
զի յուսացայ ի քեզ: Ես ննջեցի
եւ ի քուն եղէ, զարթեայ՝ եւ
Տէր ընդունելի իմ է: Ոչ եր-
կեացց ես ի բիւրուց զօրաց նոցա,
որ շուրջանակի պատեալ պաշա-
րեալ պահէին զիս: Երի Տէր, եւ
փրկեա զիս Եստուած իմ, զի դու
հարեր զամենեսեան՝ ոչք էին ընդ
իս թշնամութեամբ ի տարապար-
տուց. զատամունս մեղաւորաց
փշրեացես: ՝ Թէ պատրաստեսցի
ի վերայ իմ պատերազմ, ոչ եր-
կեցէ սիրտ իմ. թէ յարկեցէ ի վե-
րայ իմ ճակատամարտ, սակայն
եւ յայսմիկ ի քեզ Տէր յուսացայ:

Թ. ՍԱՂՄՈՍ

ՓՈՓՈՔ — ¹ Ասէի. ապր որ ինձ
 թեւս որպէս զաղաւնեոյ, զի թըւ-
 չէի վերանայի, հեռացեալ զա-
 զարէի յանապատի: ² Անձն իմ
 որպէս զերկիր ծարաւի է առ
 քեզ. վաղվաղակի ըւր ինձ Տէր,
 զի նուազեաց յինն հոգի իմ:
³ Արպէս փափաքէ եղջերու յաղ-
 բերս ջուրոյ, այնպէս փափաքէ
 անձն իմ առ քեզ Աստուած:
 Ծարաւի է անձն իմ առ քեզ
 Աստուած հոգի եւ կենդանի.
 երբ եկից երեւեցայց երեսայդ
 Աստուծոյ: Աղին ինձ արտասուք
 իմ կերակուր ի տուէ եւ ի զի-
 շերի, այն զի ասէինցիս զօր հա-
 նապաղ թէ ուր է Աստուած
 քո: Օայս որպէս յիշէի, տառա-
 պէր յիս անձն իմ. քաջալերէի
 զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց
 տան Աստուծոյ: Ի ձայնցն յնձու-

թեան խոստովանու թեան եւ ի
 ձայն բարեկենդանու թեան: ⁴ Աս-
 տուած Աստուած իմ, ես առ
 քեզ առաւօտ առնեմ. ծարաւ-
 եաց առ քեզ հոգի իմ, քանի-
 պատիկ եւս եւ մարմին իմ: Ար-
 պէս երկիր անապատ եւ անջուր
 ուր ոչ զոյ ի նմա ճանապարհ.
 Այսպէս ի սուրբս երեւեցայց
 քեզ, ի տեսանել ինձ զգորու-
 թիւնս եւ զփառս քո: Ասն զի
 լաւ է ինձ ողորմութիւն քո քան
 զկեանս իմ, եւ շիթունք իմ գո-
 վեացեն զքեզ: Այսպէս օրհնե-
 յից զքեզ ի կեանս իմ, եւ յա-
 նուն քո համբարձից զձեռս իմ:
 Արպէս ի ճարպոյ պարարտութե-
 նէ լոցի անձն իմ, եւ շիթամբք
 յնձութեամբ օրհնեսցէ զքեզ
 բերան իմ: Օ ի թէ յիշէի զքեզ
 յանկողնի իմում, ընդ առաւօտս
 կանխեալ խօսէի ընդ քեզ: Օ ի
 եղեր իմ օղնական, ի հովանի

Թեևոց քոց ցնծացայց: Եկն զկնի
քո անձն իմ, եւ զես ընկալաւ
աջ քո: ⁵ Ես արդարութեամբ
երեւեցայց երեսաց քոց. յազե-
ցայց յերեւել փառաց քոց: ⁶ Եր-
եւեցո զերեսս քո ի ծառայս քո.
ապրեցո զես Տէր ըստ ողորմու-
թեան քում. Տէր, մի յամօթ
եղէց, զի կարգացի առ քեզ:
⁷ Եւք ամենեցուն ի քեզ յու-
սան, եւ դու տաս նոցա կերակուր
ի ժամու: Բանաս զձեռն քո,
լոուցանես զամենեսեան քաղ-
ցրութեամբ կամօք քովք: ⁸ Օ, ի
կայ իմ բնաւ յերկինս կամ ի
քէն զի՞նչ եւս ինդրեցից յեր-
կրի: Եւսաղեաց սիրտ իմ եւ
մարմին իմ. Եստուած սրտի ի-
մոյ, բաժին իմ Եստուած յաւի-
տեան: ⁹ Եստուած ողորմեա մեզ,
եւ օրհնեա զմեզ. երեւեցո զե-
րեսս քո ի մեզ, եւ ողորմեա մեզ:
¹⁰ Ես աղքատ եւ սնանկ եմ Ես-

տուած օգնեա ինձ. օգնական եւ
փրկիչ իմ ես. դու Եստուած
իմ, մի յամենար: ¹¹ Օ, ցանկու-
թիւն անանկաց լուար Տէր. ի
պատրաստութիւն սրտից նոցա
հայեցաւ ունին քո: ¹² Եւր Տէր
ձայնի իմում, զի կարգացի առ
քեզ. ողորմեա եւ լուր ինձ, զի
զքեզ ասաց սիրտ իմ, եւ խըն-
դրեցին երեսք իմ, զերեսս քո
Տէր ինդրեցին: ¹³ Ար նստիսդ ի
քրորէս, յայտնեա: Օ, արթոզգո-
րութիւնս քո, եւ եկ կեցուցա-
նել զմեզ: Եստուած զօրու-
թեանց, դարձո զմեզ. երեւեցո
զերեսս քո ի մեզ, եւ կեցցուք:
Եստուած զօրութեանց, դարձ
հայեաց յերկնից եւ տես. այց ա-
րա այգւոցս այսմիկ, դարման տար
սնա՝ զոր անկեաց աջ քո: Ես-
տուած զօրութեանց, դարձո
զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ,
եւ կեցցուք: Տէր Եստուած զօ-

բութեանց մինչև յերբ բարկա-
նաս յաղօթս ծառայից քոյ:
Զամբեցեր մեզ հաց արտա-
սուաց, եւ արբուցեր մեզ ար-
տասուս չափով: Երարեր զմեզ
նախատինս դրացեաց մերոց, այսն
կատականաց թշնամեաց մերոց:
Եստուած զօրութեանց, դարձո
զմեզ. երեւեցո զերեսս քո ի
մեզ, եւ կեցցուք: ¹⁴ Յոյց մեզ
Տէր զօղորմութիւնս քո, եւ
զփրկութիւնս քո սուր մեզ:
¹⁵ Ծհաց մեր հանապազօրոյ սուր
մեզ այսօր զօրքսօրէն: ¹⁶ Ո՛ Տէր
փրկեա, ո՛ Տէր առաջնորդեա,
օրհնեալ որ դարոյց ես յանուն
Տեառն: ¹⁷ Տէր խոնարհեցո զեր-
կինս, եւ էջ: ¹⁸ Երեւեցո ինձ
զերեսս քո. եւ լսելի արա ինձ
զբարբառ քո. զե բարբառ քո
բազմր է, եւ անսիլ քո գեղեցիկ:

ՄԱՂՄՈՍԵՐԸՆ

Ի Ք Ո Հ Ո Ի Թ Ի Ի Ն

Ս. Պ Ա Տ Ե Ր Ե Ք Ի

Փ. ՄԱՂՄՈՍ

ՀԱՆՍՏՔ — ¹ Չայն եղբորորդւոյ
իմոյ սա դրանն. ահաւասիկ սա
եկն վաղելով ի վերայ լերանց,
խայտալով ի վերայ բլրոց. ա-
հաւասիկ սա եկաց յետուսս որ-
մոյն մերոյ, կարկառեալ ընդ պա-
տուհանս, հայեցեալ ընդ վան-
դակապատն: ² Տարաւ զեա ար-
քայ ի սենեակ իւր: ³ Եհաւաղիկ
կա բարենշան, եղբորորդեակ իմ:
Խբրեւ խնձորի ի փայտս անտառի,
այնպէս եղբորորդիդ իմ ի մէջ
ուստերաց: ⁴ Եարդոս եա զհոս
իւր. ծրար ստաշխին է եղբորոր-

դին իմ ինձ. ընկոյզ նոճոյ: 1. Եւ զանոյշ հեղեալ է անուն քո. զհետ հոտոյ իւղոց քոց ընթասցուք: ⁵ Եւ զօրորդին իմ սպիտակ է եւ կարմիր. ընտրեալ ի բերուոց: ⁶ Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. զաւազան ուղղութեան՝ զաւազան արքայութեան քո: Սիրեցեր զարդարութիւն, եւ ատեցեր զանիրաւութիւն: Վասն այտորիկ օծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեամբ առաւել քան զընկերս քո: Օմնուս եւ ստաշինն եւ կասիս ի զգեստէ քումէ ի տաճարաց փղոսկրէից, ուստի ուրախ արարին զքեզ զստերք թագաւորաց ի պատիւ քո: Վացցէ դշտոյ ընդ աջմէ քումէ ի հանդերձս ոսկեհուռն զարդարեալ եւ պաճուճեալ:

ԹՎ. ՍԱՂՄՈՍ

ՀԱՅՈՒՄՆ — ¹ Եւ խեաց սիրտ իմ բանս բարիս, եւ ասեմ զգործս իմ թագաւորի: ² Ասացէք Աստուծոյ. որպէս զե՛ ահեղ են գործքքո: Եւ իսպք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զե՛ ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան: ³ Տէր Տէր մեր, զե՛ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի: Համբարձաւ մեծ վայելչութիւն քո ի վերոյ քան զերկինս: Ո՛վ է մարդ, զե՛ յիշես դու զնա, կամ որդի մարդոց թէ այց ինչ արասցես դուննա: Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո. փառօք եւ պատուով պատկեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց քոց: Օ՛ ամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա, զխաշն եւ զարջառ եւ զա-

մենայն ինչ: Աւսեւ զերէ վայրի,
զթռչունս երկնից, զձկունս ծո-
վուց, որ շրջին ընդ շաւիղս ծո-
վուց: Տէր Տէր մեր, զի սքանչելի
է անուն քո յամենայն երկրի:
Վոստովան եղերուք Տեառն զի
քաղցր է, զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա: Ո՞ խօսեսցի զզո-
րութիւնս Տեառն, լսելի արասցէ
զամենայն օրհնութիւնս նորա:
Վոստովան եղէց քեզ ի ժողո-
վուրդս Տէր, եւ սաղմոս ասացից
քեզ յազննա: Մեծ եղեւ մինչեւ
յերկինս ողորմութիւն քո, մին-
չեւ յամսս է ճշմարտութիւն քո:
Բարձրեալ ես դու յերկինս Աս-
տուած, եւ յամենայն երկրի եւ
փառք քո: Որպէս զի բազում
է ողորմութիւն քաղցրութեան
քո Տէր, զոր պահեցեր երկիւ-
ղածաց քոց: չրաման ետ ամ
պոց ի վերուստ, եւ զգրունս երկ-
նից երաց, եւ տեղեաց ի նոսա մա-

նանայ ի կերակուր: Օհաց եր-
կնից ետ նոցա. զհաց հրեշտա-
կաց կերան մարդիկ. իջոց ի նոսա
կերակուր ի լեւութիւն: Աերան
եւ յազեցան յոյժ. զցանկութիւն
նոցա ետ նոցա, եւ ոչինչ կարօս
եղին ի ցանկութենէ իւրեանց:

ԺԲ. ՍԱՂՄՈՍ

ԵՐԵՂԱՅՈՒԹՅՈՒՆ — Վկայք եր-
կիր պաղցուք նմա. անկցուք եւ
լացցուք առաջի Տեառն արարչին
մերոյ: Վմենայն երկիր երկիր
պաղցեն քեզ. սաղմոս ասացեն
քեզ, սաղմոս ասացեն անուան
քում: Օամենայն ազգս զոր
արարեր, եկեացեն եւ երկիր պաղ-
ցեն առաջի քո. փառաւոր արաս-
ցեն զանուն քո յաւիտեան: Վոս-
տովան եղէց առ քեզ Տէր Աս-
տուած իմ, բոլորով սրտիւ իմով.
փառաւոր արարից զանուն քո

յաւխտեան: Մեծ եղև ի վերայ
իմ ողորմութիւն քո. փրկեցեր
զանձն իմ ի դժոխոց ներքնոց:

ՓԳ. ՍԱԳՄՈՍ

ՏԵՃՈՒԹԻՒՆ — ¹ Ծափս հարէք
ամենայն հեթանոսք. աղաղակե-
ցէք առ Աստուած ի ձայն ցրն-
ծութեան: Սաղմոս ասացէք Աս-
տուծոյ մերում, սաղմոս ասա-
ցէք. թաղաւորին մերում սաղ-
մոս ասացէք: ² Ուրախ եղև սիրտ
իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, եւս
եւ մարմին իմ բնակեացէ յուսով:
Յուցեր ինձ զձանապարհս քո
կենաց. լուցեր զիս ուրախու-
թեամբ երեսաց քոց ի քաղ-
ցրութենէ վայելութեան աջոյ
քո մինչև ի սպառ: ³ Գնծացեն
շթութեանք իմ, յորժամ սազմոս ա-
սիցեմ քեզ, եւ անձն իմ զոր եւ
փրկեցեր: Աւս եւ լեզու իմ զոր

հանապաղ խօսեացի զարդարու-
թիւնս քո: ⁴ Այսք առաւօտու
ողորմութեամբ քով. ցնծացաք
եւ ուրախ եղաք զամենայն աւ-
ուրս կենաց մերոց: Ուրախ եղաք
փոխանակ աւուրցն որ խոնարհ ա-
րարին զմեզ, եւ ամացն յորս տե-
սաք չարչարանս: ⁵ Խոստովան ե-
ղիցին Տեառն ողորմութիւնք նո-
րա, սքանչելեաց նորա որդիք
մարդկան: Օ ի յազեցոյց զանձինս
քաղցեալս, եւ զանձինս կարօտեալս
լի արար բարութեամբ: Խոստո-
վան եղիցին Տեառն ողորմու-
թիւնք նորա, սքանչելեաց նորա
որդիք մարդկան: Մատուցեն
նմա պատարազ օրհնութեան, եւ
պատմեցեն զգործս նորա ցրն-
ծութեամբ: Խոստովան եղիցին
Տեառն ողորմութիւնք նորա,
սքանչելեաց նորա որդիք մարդ-
կան: Բարձր արասցեն ի ժողովս
ժողովրդոց, եւ յաթողս ձերոց

օրհնեացեն զնա: ⁶ Ի Տեառնէ եւ զեւ այս, եւ է պբանչելի յաչս մեր: Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծացուք եւ ուրախ եւ զիցուք ի նմա: Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ: ⁷ Եսն բերանք մեր խնդութեամբ եւ լեզուք մեր ցնծութեամբ: Մեծ արար Տէր զառնել իւր ընդ մեզ, եւ մեք եղաք բերկրեալք:

ՓԳ. ՍԱՂՄՈՍ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ — ¹ Պատմեցից զանուն քո եղբարց խնոց. ի մէջ եւ կեղեցւոյ օրհնեցից զքեզ: ² Յրնծացէք արդարք ի Տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն: Խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ, տասնազեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա: Օրհնեցէք

զՏէր յօրհնութիւն նոր, զի բարի է. սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ: ³ Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ: Ի Տէր պարծեացի անձն իմ. լուսիցեն հեզք, եւ ուրախ եղիցին: Մեծ արարէք զՏէր ինեւ, եւ բարձր արացուք զանուն նորա ի միասին: ⁴ Բտտ անուան քում սոյնպէս եւ օրհնութիւն քո ընդ ամենայն օրեղբրս: ⁵ Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատրաստ է սիրտ իմ օրհնել եւ սաղմոս ասել քեզ փառօք իմովք: Զարթիք փառք իմ, զարթիք սաղմոսիք եւ օրհնութեամբ, եւ ես զարթեացց առաւօտոց: ⁶ Եկայք լուարուք ինձ, եւ պատմեցից ձեզ ամենեքեան ոյք երկնչեք յԱստուծոյ զոր ինչ արար անձին իմոց: ⁷ Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ առնէ պբան

չեղիս միայն, եւ օրհնեալ է ա-
նուն սուրբ փառաց նորա յաւի-
տեան. լըցի փառք նորա ամե-
նայն երկիր. եղեցի, եղեցի: ⁸ Ա-
ղաղակեցէք առ Տէր ամենայն եր-
կիր. օրհնեցէք, ցնծացէք եւ սաղ-
մոս ասացէք: Սաղմոս ասացէք
Աստուծոյ մերոյ օրհնութեամբ,
օրհնութեամբ եւ ի ձայն սաղ-
մոսաց: Ի ձայն օրհնութեան
կռածոյ փողոյ, օրհնութեամբ,
ցնծութեամբ եւ ի ձայն եղջեր
փողոյ աղաղակեցէք առաջի թա-
ղաւորին Տեառն: ⁹ Օրհնեա
անձն իմ զՏէր, եւ ամենայն ու-
կերք իմ զանուն սուրբ նորա:
Օրհնեա անձն իմ զՏէր, եւ մի
մոռանար զամենայն սուրս նորա:
Ո քաւէ զմեզ քո. բժշկէ զամե-
նայն հիւանդութիւնս քո: Ո
փրկէ յապականութենէ զկեանս
քո. պսակէ զքեզ ողորմութեամբ
եւ զթութեամբ: Ո ընու ի բա-

լութենէ զցանկութիւն քո. նո-
րոգեսցի որպէս արծուոյ մանկու-
թիւն քո: Գթած ողորմած է
Տէր, երկայնամիտ եւ բազում-
ղորմ: Ոչ ի սպառ բարկանայ
մեզ Տէր, եւ ոչ յաւիտեան
պահէ ռիս: Ոչ ըստ մեզս մերա-
բար մեզ, եւ ոչ ըստ անօրէնու-
թեան մերում հատոյց մեզ: Այլ
որպէս բարձր են երկինք յերկրէ,
այնպէս զօրացոյց Տէր զողորմու-
թիւն իւր ի վերայ երկիւղածաց
իւրոց: Արչափ հեռի են արեւելք
յարեւմտից, այնչափ հեռի արար
ի մէջ զանօրէնութիւնս մեր:
Որպէս զթայ հայր ի վերայ որ-
դւոց իւրոց, այնպէս զթասցի Տէր
յերկիւղածս իւր: Եւ ի նա զի-
տաց զստեղծուածս մեր, եւ յի-
շեաց թէ հող եմք: Մարդոյ որ-
պէս խոտոյ են աւուրք իւր. որ-
պէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղ-
կէ: Եւ նէ ի նմոս հողմ, եւ ոչ է,

եւ ոչ եւս երեւի տեղի նորա :
 Բայց ողորմութիւն Տեառն
 յաւիտեանս յաւիտենից ի վերայ
 երկիւղածաց իւրոց . եւ արդարու-
 թիւն նորա յորդոց մինչեւ յոր-
 դին : Ար պահեն զուխտս նորա ,
 յիշեն զպատուիրանս նորա եւ
 առնեն զնա : Տէր զերկինս պատ-
 րաստեաց աթոռ իւր , եւ ար-
 քայութիւն նորա ամենեցուն
 օրէ : Օրհնեցէք զՏէր ամենայն
 հրեշտակք նորա հզօրք զօրու-
 թեամբ , որ առնէք զբան նորա ի
 լսել ձայնի պատգամաց նորա :
 Օրհնեցէք զՏէր ամենայն զօրու-
 թիւնք նորա , պաշտօնեայք եւ ա-
 րարողք կամաց նորա : Օրհնեցէք
 զՏէր ամենայն գործք նորա , ընդ
 ամենայն անդիս է տէրութիւն
 նորա . օրհնեա անձն իմ զՏէր :
¹⁰ Խոստովան եղերուք զն բարի
 է , զն յաւիտեան է ողորմ նորա :
 Խոստովան եղերուք Աստուծոյ

աստուծոյ , զն յաւի : Խոստովան
 եղերուք Տեառն տերանց , զն
 յաւի : Արար զքանչեղիս մեծա-
 մեծս միայն , զն յաւի : Օերկինս
 արար իմաստութեամբ իւրով , զն
 յաւի : Հաստատեաց զերկիր ի
 վերայ ջուրց , զն յաւի : Արար
 զուսաւորս մեծամեծս միայն , զն
 յաւի : Չարեգակն արար իշխա-
 նակա՞ն տուրնջեան , զն յաւի :
 Չլուսին եւ զաստեղս իշխանա-
 կան գիշերոյ , զն յաւի : Յիշեաց
 զմեզ Տէր ի խոնարհութեան
 մերում , զն յաւի : Աւ վրկեաց
 զմեզ ի ձեռաց թշնամեաց մե-
 րոց , զն յաւի : Ո սայ կերակուր
 ամենայն կենդանեաց , զն յաւի :
 Խոստովան եղերուք Աստուծոյ
 երկնաւորի , զն յաւի : ¹¹ Բարձր
 առնեմ զքեզ Աստուած իմ եւ
 թագաւոր իմ , եւ օրհնեմ զա-
 նուն քո յաւիտեան , եւ յաւի-
 տեանս յաւիտենից : Օ, օր հանա-

պաղ օրհնեցից զքեզ, եւ դովեցից զանուն քո յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից: Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ, եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ: Ազգք եւ ազգք զովեացեն զդործս քո, եւ զգորութիւնս քո պատմեցին: Օ մեծփայեւթիւն փառաց սրբութեան քո խօսեացին, եւ զքանչեւիս քո պատմեցին: Օ գորութիւն ահի քո ասասցեն, եւ զմեծութիւնս քո պատմեցին: Օ յիշատակ բազում քաղցրութեան քո բխեացին, եւ արգարութեամբ քով յնծասցեն: Վթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ: Վաղցր է Տէր առ ամենեւեան, եւ զթութիւն նորա ի վերայ ամենայն աւարածոց: Խոստովան եղիցին առ քեզ, Տէր, ամենայն գործք քո. եւ սուրբք քո օրհնեացեն զքեզ: Օ փառս արքայութեան քո ա-

ասացեն, եւ զգորութիւնս քո պատմեցեն: ¹² Օրհնեցէք զԱստուած ի սրբութեան նորա. օրհնեցէք զնա ի հաստատութեան զորութեան նորա: Օրհնեցէք զնա ի զորութեան նորա. օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա: Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմնսիւք եւ օրհնութեամբ: Օրհնեցէք զնա յնծութեամբ, զովեցէք զնա ուրախութեամբ: Օրհնեցէք զնա ի բանս քաղցունս. զովեցէք զնա ի բարբառ լսելի: ¹³ Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց, զովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան: Աւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. զով: Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո. զով: Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո, զովեալ եւ: Օրհնեալ ես

որ նստիս ի քրովլէս, եւ հայ-
 իս յանդուռնդս. գով: Օրհնեալ
 ես ի վերայ հաստատութեան եր-
 կնից. գով: Օրհնեցէք ամենայն
 գործք Տեառն զՏէր. օրհնեցէք
 եւ բարձր արարէք զնա յաւի-
 տեան: Օրհնեցէք երկինք զՏէր.
 օրհնեցէք եւ: Օրհնեցէք հրեշ-
 տակք Տեառն զՏէր. օրհնե:
 Օրհնեցէք ջուրք ամենայն որ ի
 վերայ քան զերկինս զՏէր. օրհ:
 Օրհնեցէք ամենայն զօրութիւնք
 Տեառն զՏէր. օրհ: Օրհնեցէք
 արեւ եւ լուսին զՏէր. օրհ: Օր-
 հնեցէք ամենայն աստղք եր-
 կնից զՏէր. օրհ: Օրհնեցէք ա-
 մենայն անձրեւք եւ ցօղք զՏէր.
 օրհ: Օրհնեցէք ամենայն հողմք
 զՏէր. օրհ: Օրհնեցէք ցուրտ
 եւ աօթ զՏէր. օրհ: Օրհնեցէք
 ցօղ եւ ձիւն զՏէր. օրհ: Օր-
 հնեցէք տիւք եւ զլշերք զՏէր.
 օրհ: Օրհնեցէք ըյս եւ խաւար

զՏէր. օրհ: Օրհնեցէք ամպք
 եւ փայլատակունք զՏէր. օրհ:
 Օրհնեցէք երկիր եւ լերինք եւ
 բարձունք զՏէր. օրհնեցէք: Օր-
 հնեցէք ամենայն բոյսք երկրի
 զՏէր. օրհ: Օրհնեցէք աղ-
 բեւք, ծովք եւ գետք զՏէր. օր-
 հնեցէք: Օրհնեցէք կէտք եւ ա-
 մենայն կայտառք որ ի ջուրս
 զՏէր. օրհ: Օրհնեցէք թռչունք
 երկնից զՏէր. օրհ: Օրհնեցէք
 ամենայն գաղանք եւ անասուն
 զՏէր. օրհ: Օրհնեցէք որդիք
 մարդկան զՏէր. օրհ: Օրհնեցէ
 Խորայէլ զՏէր. օրհնեցէ եւ բարձր
 արասցէ: Օրհնեցէք քահանայք
 զՏէր. օրհ: Օրհնեցէք ծառայք
 Տեառն զՏէր. օրհ: Օրհնեցէք
 հողիք եւ շունչք արդարոց զՏէր.
 օրհ: Օրհնեցէք սուրբք եւ խո-
 նարհք սրտիւք զՏէր. օրհ: Գո-
 հացարուք զՏեառնէ, զի քաղցր
 է, զի յաւիտեան է ողորմ նորա:

Օրհնեցէք ամենայն պաշտօնեայք
Տեառն զԱստուած աստուծոյ.
օրհնեցէք եւ զօհնացարուք, զի
յաւիտեան է ողորմ նորա:
¹⁴ Մեծացուցէ անձն իմ զՏէր,
եւ ցնծացէ հօգի իմ Աստուծով
փրկչաւ իմով: Այց արար ի վե-
րայ խոնարհութեան աղախնոյ
իւրոյ. այսուհետեւ երանեսցին
ինձ ամենայն ազգք: Արար ընդ իս
մեծամեծս հօրն, եւ սուրբ է ա-
նուն նորա: Աղորմութիւն արար
յազգաց յազգս երկիւղածաց իւ-
րոց, եւ արար զօրութիւն բազ-
կաւ իւրով: Յրուեաց զամբար-
տաւանս ի մտաց սրախց, եւ քա-
կեաց զհօրս յաթոռոց: Օխո-
նարհս բարձրացոյց, զկարօտս ելից
բարութեամբ եւ զմեծատունս
արձակեաց ունայնս: Օրհնեալ
Տէր Աստուած Խրայեիլ, զի յայց
եղ մեզ, եւ արար փրկութիւն
ժողովրդեան իւրոյ: Յարոյց եղ-

ջիւր փրկութեան մեզ ի տանէ
Գաւթի ծառայի իւրոյ: Փրկ-
ութիւն ի թշնամեաց մերոց,
եւ ի ձեռաց ամենայն ատելեաց
մերոց: Տալ մեզ առանց երկիւ-
ղի ի թշնամեաց մերոց փրկեալս:
Պաշտել զնա սրբութեամբ եւ
արդարութեամբ առաջի նորա
զամենայն առուքս կենաց մե-
րոց: Տալ զիտութիւն փրկու-
թեան ժողովրդեան իւրոյ ի թո-
ղութիւն ամենայն մեղաց մե-
րոց: Վասն զթոյ ողորմութեան
Տեառն Աստուծոյ մերոյ, որով
երեւեցաւ մեզ արեգակն ի բար-
ձանց լուսաւոր առնել զխաւար
մեր: Ծաղկել լոյս ի վերայ այսո-
ցիկ որ նստեալք ի խաւարի եւ ի
ստուերս մահու, ուղղել զոտս
մեր ի ճանապարհս խաղաղու-
թեան: ¹⁵ Արդ արձակես զճա-
ռայս քո Տէր, ըստ բանի քում
ի խաղաղութիւն, զի տեսին աչք

խմ գիրկու թիւն քո, զոր պատ-
րաստեցեր առաջի ամենայն ժո-
ղովրդոց: Այս ի յայտնութիւն
Հեթանոսաց եւ փառս ժողովր-
դեան քում Խորայելի:

ՓԵ. ՍԵՂՄՈՍ

ՅՆՈՐՀԱՆՈՒԹԻՒՆ — ¹ Գոհացայց
զքէն Տէր, բոլորով սրաիւ խնով-
պատմեցից զամենայն պանչելիս
քո: Ուրախ եղէց եւ յնծացայց ի
քեզ. սաղմոս ասացից անուան
Տեառն բարձրելոյ: ² Մինչեւ յա-
լեւորել եւ ի ծերանալ, Աս-
տուած իմ, մի թողուր զիս:
Մինչեւ պատմեցի անուն քո
ազգի ամենայնի որ գալոցն է:
Չգորութիւն քո եւ զարդա-
բութիւնս մինչեւ ի բարձունս՝
զոր արարեր մեծամեծս, Աս-
տուած, ո՞ նմանէ քեզ: Որչափ
յուցեր ինձ նեղութիւն բազում

եւ չարչարանս, դարձար միսիժա-
րեցեր զիս, եւ ի խորոց անդնոց
երկրէ հաներ զիս: Յաճախեցեր
ի զօրութիւնս քո, դարձար եւ
միսիժարեցեր զիս, եւ ի խորոց
երկրէ միւսանգամ հաներ զիս:
Արդ եւ ես խոստովան եղէց
քեզ, Տէր, ի պատրաստութիւն
սաղմոսաց, ճշմարիտդ Աստուած.
սաղմոս ասացից քեզ օրհնու-
թեամբ, սուրբդ Խորայելի: ³ Աս
ասացի ի բարեկենդանութեան ի-
մում թէ ոչ սասանեցայց յախ-
տեան: Տէր ի կամս քո ետուր
զեղոյ խնոյ զօրութիւնս. դարձու-
ցեր զերեսս քո յինէն, եւ ես եղէ
խռովեալ: Աս առ քեզ Տէր
կարգացի, եւ առ Աստուածդ
իմ աղաղակեցի. զի՞նչ օգուտ է
քեզ յարեանէ իմմէ, թէ ի ջանսմ
ես յապականութիւն: Մի թէ
հոգ խոստովան առնիցի առ քեզ
կամ պատմեցէ զճշմարտու-

Թիւնս քո: 1 Ուաւ ինձ Տէր, եւ ողորմեցաւ, եւ Տէր եղև ինձ օգնական: Գարձոյց գտուդ իմ յուրախութիւն. զերժ յինէն զքուրձ, եւ ինձ զգեցոյց զուրախութիւն: Արպէս սարմնս ասասցեն քեզ փառք իմ, եւ այլ մի եւս զղջացայց, Տէր Աստուած իմ. յաւիտեան խոստովան եղեց քեզ: ⁴ Տէր, բաժին ժառանգութեան իմոյ եւ բաժակի իմոյ դուես, որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս: Ա իճակք եղին ինձ ընդ ընտիրս, եւ ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ: ⁵ Տէր յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչեւ յամպս: Արդարութիւն քո որպէս լերինք, Աստուած. իրաւունք քո որպէս զխորս բազումս. զմարդիկ եւ զանասուն կեցուցանես զու Տէր: Արպէս զէ բազում արարեր զողորմու-

թիւն քո, Աստուած. այլ որչիք մարդկան ի հովանի թեւոյ քոյ յուսացին: Արբեցին նորա ի պարարտութենէ տան քո, եւ զուղիս փափիութեան տացես բմպեղ նոցա: Ի քէն է, Տէր, աղբերկենաց, եւ լուսով երեսաց քոյ տեսանեմք զոյս: Ծաղեա զողորմութիւնս քո, ոյք ճանաչեն զքեզ. զարդարութիւնս՝ որ ուղիղ են սրտիւք: ⁶ Համբերելով համբերի Տեառն, եւ նայեցաւ առ իս, եւ լուաւ աղօթից իմոյ: Ահան զիս ի գբոյ տառապանաց, ի կաւոյ եւ ի տղմոյ: Հաստատեաց ի վերայ վեմի զոտս իմ, եւ ուղղեաց զգնացս իմ: Արկ ի բերան իմ օրհնութիւն նոր. օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ: ⁷ Աերակրեաց զնոսա ի պարարտութենէ ցորենոյ, եւ ի վիմէ մեզը յազեցոյց ի նոսա: ⁸ Տէր հովուեցէ զիս, եւ ինձ

ինչ ոչ պակասեցէ: Ի վայրի դա-
լարւոջ անդ բնակեցոյց զեա, եւ
առ ջուրս հանգստեան սնոյց զեա:
Վարձոյց զանձն իմ առ իս, եւ
առաջնորդեաց ինձ ի ճանապարհս
արդարութեան վասն անուան իւ-
րոյ: Թէպէտ եւ զնացից ես ի մէջ
սառերաց մահու՛ ոչ երկայց ի
չարէ, զի դու, Տէր, ընդ իս ես:
Յուպ քո եւ դաւաղան, նորա
մխիթարեացն զեա: Պատրաստ
արարեր առաջի իմ սեղան ակն-
յանդիման նեղչաց իմոց: Օճեր
իւզով զգլուխ իմ. բաժակ քո
որպէս անապակ արբեցոյց զեա:
Ողորմութիւն քո Տէր զհեա իմ
եկեացէ զամենայն առուրս կենաց
իմոց, բնակել ինձ ի տան Տեառն
ընդ երկայն առուրս: ⁹ Բարձր
առնեմ զքեզ Տէր, զի ընկալար
զեա, եւ ոչ ուրախ արարեր
զթշնամիս իմ յիս: Տէր Աս-
տուած իմ, կարգացի առ քեզ,

եւ բժշկեցեր զեա. Տէր, հաներ ի
դժոխոց զանձն իմ. փրկեցեր զեա
յայնցանէ որ իջանն ի դուք:
¹⁰ Յիշատակ արար պանչերեաց
իւրոյ ուղղոց. ողորմած զթած է
Տէր, կերակուր տայ երկիւղածաց
իւրոց: ¹¹ Օ. ինչ տաց արիտուր
Տեառն ընդ ամենայնի զոր եւ ես
ինձ: Օբաժակ փրկութեան ըն-
կալայց, եւ զանուն Տեառն կար-
գացից: Չաղթս իմ Տեառն
տաց առաջի ամենայն ժողովր-
դեան նորա: Վեզ մատուցից պա-
տարագ օրհնութեան, եւ զա-
նուն Տեառն կարգացից: ¹² Խոս-
տովան եղէց քեզ Տէր, բողբով
սրաիւ իմով. առաջի հրեշտակաց
սաղմոս ասացից քեզ: Օ. ի լուար
զբանս բերանոյ իմոց, երկիր պա-
զից ի աաճար սուրբ քո, եւ խոս-
տովան եղէց անուան քում վասն
ողորմութեան եւ ճշմարտութեան
քո: ¹³ Տէր, ո՛վ է մարդ, զի յայտ-

նեցար դու նմա, կամ որդի մարդոյ թէ համարիս ինչ զնա: Մարդ նանրոյ նմանեաց, եւ աւուրք նորա որպէս հովանի անցին: Ապրեցո զես ի ձեռաց որբւոց օտարաց: Արոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն, եւ աջ նոցա՝ աջ է մեղաց: Արոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ՝ հաստատուն են ի մանկութեան իւրեանց, եւ դստերք նոցա զարդարեալ եւ պաճուճեալ ի նմանութիւն տաճարի: Շտեմարանք նոցա լի են, եւ բխեն ի միմեանս. խաշինք նոցա բազմաձիւնք են, եւ բազմանան ի զնացս իւրեանց, եւ անդեայք նոցա պարարտք են: Աչքոյ խրամատութիւն ցանկոյ նոցա, եւ ոչ աղաղակ ի հրապարակս նոցա: Արդ երանեցինց ժողովրդեան որոց այս այսպէս իցէ. նա՛ երանի ժողովրդեան որոց Տէր Աստուած է նորա:

ԹՊ. ՍԱՂՄՈՒ

ՍԷՐ — ¹ Սիրելին ի սենեակս մեր. երգեսցուք զէրն: ² Ինչ հովանեաւ նորա ցանկացայ նստել՝ եւ նստայ, եւ պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում: Աղբորորդին իմ ինձ եւ ես նմա որ հովուէն ի մէջ շուշանաց՝ մինչեւ տիւն լուսաւորեսցէ եւ ստուերքն շարժեսցին: ³ Եջէ եղբորորդին իմ ի պարտեղ իւր: Արդմնեցուցանեմ զձեզ, դստերք Արուսաղէմի, եթէ գաանկեք զեղբորորդին իմ, պատմեսջիք նմա եթէ կաթողի եմ ես ի սէր նորա: ⁴ Աղբորորդին իմ էջ ի պարտեղ իւր: Աս եղբորորդւոյ իմոյ, եւ եղբորդին իմ ինձ, որ հովուէն ի մէջ շուշանաց: ⁵ Ահեակ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցէ զինեւ: ⁶ Սիրեցէք զՏէր ամենայն սուրբք նորա:

ԹԷ. ՍԱՂՄՈՍ

ԱՌԱՋԱՊՐՈՈՒՄՆԵՐ — ¹ Աս պահեցից զձանապարհս Տեառն, եւ ոչ ամպարշտեցայց Մատուծոյ իմնէ: Աղէց եւ ես անբիծ ընդ նմա. զգուշացայց յանօրէնութենէ իմ մէ: Տէր, ուսուցեր, զձեռս իմ ի պատերազմ. եւ արարեր զբազուկ իմ որպէս զաղեղն հաստ, եւ ետուր ինձ զպաշտպանութիւն փրկութեան քո: Աջ քո ընկալաւ զիս, եւ խրատ քո կանգնեաց զիս ի սպառ, եւ խրատ քո ուսուցէ զիս: Բնդարձակեցեր զգնացս իմ ի ստորէ իմնէ եւ ոչ տկարացան շաւիղք իմ: Հալածեցից զթշնամիսն իմ եւ հասից նոցա, եւ ոչ դարձայց ի նոցանէ՝ մինչեւ սպառեցից զնոսա: Աեղեցից զնոսա, եւ այլ մի կարտացեն կեալ, եւ անկցին ի ներքոյ ոտից իմոց: Մանրեցից զնոսա որպէս փո-

շի առաջի հողմոյ, եւ որպէս կաւ գուհաց կոխեցից զնոսա: Կենդանի է Տէր, եւ օրհնեալ է Աստուած, եւ բարձրեղեցի Աստուած փրկութեան իմոց: Աստուած է որ իննդրէ զվրէժ իմ, եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ: Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ որ յարուցեալ են ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս: ² Աղորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց, եւ հաճոց եղէց ճշմարտութեան քում: Ուն իմ կացցէ յուղլութեան. յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ: ³ Ասացի թէ պահեցից զձանապարհս իմ, զի մի մեղաց լեզուսս իմով: Խօսեցայ լեզուսս իմով եւ ասացի. ցոյց ինձ Տէր զկատարած իմ եւ զթիւ աւուրց իմոց՝ քանի՞ն է զի զխտացից թէ որչափ ինչ պակասեալ է յինէն: Ահա չափով եղիր զաւուրս իմ,

եւ կար զօրութեան իմոյ որպէս
 ոչինչ է առաջի իմ. սակայն ա-
 մենեւին ընդունայն է ամենայն
 մարդ մանդն: Ապաքէն որպէս ի
 պատկերի շճն մարդ, սակայն ի
 զուր խռովի. գանձէ եւ ոչ դիտե՛
 ում ժողովէ: Իսկ արդ ով է
 համբերութիւն իմ թէ ոչ զու-
 Տէր, կամ կար զօրութեան իմոյ՝
 թէ ոչ ի քէն է: ⁴ Բազում ա-
 ըարեր զու Տէր Աստուած իմ
 զգրանչելիս խորհրդոց քոց. ոչ որ
 է որ նմանէ քեզ: Պատմեցի եւ
 խօսեցայ, եւ բազում եղեն քան
 զթիւ. ընդ զոհս եւ ընդ պատա-
 ըագս ոչ հաճեցար, մարմին հաս-
 տատեցեր ինձ. զողջակէզս եւ
 զվան մեղացն ոչ խնդրեցեր:
 Յայնժամ ասացի թէ ահաւա
 սիկ գամ ես. ի գլուխս գրոց
 գրեալ է վան իմ: Առնել զկամս
 քո; Աստուած իմ, կամեցայ, եւ
 զօրէնս քո ի մէջ որովայնի իմոյ:

⁵ Բայց միայն Աստուծոյ հնա-
 զանդ լեր անձն իմ, զե ի նմա-
 նէ է ինձ փրկութիւն: Աս է Աս-
 տուած իմ եւ փրկիչ իմ, ա-
 պաւէն իմ՝ զե մի սասանեցայց
 առաւել: ՅԱստուծոյ է զօրու-
 թիւն իմ, եւ փառք իմ. Աս-
 տուած օգնութեան իմոյ. յոյս
 իմ է առ Աստուած: Յուսացա-
 րուք ի նա ամենայն ժողովք ժո-
 ղովոցոց, սիւսեցէք առաջն նորս
 զսիրտս ձեր, զե Աստուած օգնա-
 կան է մեր յաւիտեանս ժամանա-
 կաց: Մի յուսայք յանիրաւու-
 թիւն, յափշտակութեան միցան-
 կայք. եւ մեծութիւն թէ առուիւ-
 դայցէ, մի յօժարեցին սիրտք ձեր:
 Միանգամ խօսեցաւ Աստուած,
 եւ երկուս զայս լուար: Աստուծոյ
 է զօրութիւն, եւ քո, Տէր, ո-
 զօրմութիւն. եւ զու հաստեցա-
 նես իւրաքանչիւր ըստ գործս նո-
 ցա: ⁶ Իւ ուղիւսցէ երկուսսարդ

զճանապարհս իւր, այլ ի պահել
զբանս քո: Բոլորով սրախ իմով
խնդրեցի զքեզ մի մերժեր զիս ի
պատուիրանաց քոց: Ի սրախ ի-
մում թագուցի զբանս քո որպէս
զի մի մեղացց քեզ: Օրհնեալ
ես դու Տէր. ուստ ինձ զարդա-
րութիւնս քո: Արդուայ եւ հաս-
տատեցի թէ պահեցից զամենայն
իրաւունս արդարութեան քո:
Չքերան իմ բացի, եւ առի հո-
գի. ի պատուիրանս քո փափա-
քեաց անձն իմ: Յնծացայ ես ի
բանս քո որպէս այն որ գտանէ
աւար բազում: Չմեղս ատեցի
եւ անարգեցի, եւ զօրէնս քո սի-
րեցի: Աւթն անգամ յաւուր
օրհնեցից զքեզ վասն իրաւանց
եւ արդարութեան քո: Խաղա-
ղութիւն բազում է այնոցիկ որ
սիրեն զօրէն քո, եւ ոչ գոյ ի նո-
սա գայթակղութիւն: Պահեցից
զպատուիրանս եւ զվկայութիւնս

քո, զի ամենայն ճանապարհք
իմ առաջի քո են: ⁷ Պու-
լուսաւոր առնես զճրագ իմ, Տէր
Աստուած իմ, լոյս առնես ինձ ի
խաւարի: Վեւ փրկեցայց ի փոր-
ձութենէ. Աստուծով իմով ան-
ցից ընդ պարխագ:

ԹԸ. Ս Ա Ղ Մ Ո Ս

¹ Եղեցի ողորմու-
թիւն քո Տէր ի վերայ մեր, որ-
պէս յուսացաք ի քեզ: ² Տէր լոյս
իմ եւ կեանք իմ, եւ յուժ⁶ եր-
կեայց. Տէր ապաւէն կենաց ի-
մոց եւ յուժ⁶ դողացայց: Ի մեր-
ձեալ առ իս չարաց ուտել զմար-
մին իմ. նեղեցք իմ եւ թշնամիք
իմ նոքա տկարացան եւ անկան:
Թէ պատրաստեցի ի վերայ իմ
պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ.
Թէ յարկեց ի վերայ իմ ճակա-
տամարտ, ստեղծեց եւ յայտնի ի

քեզ Տէր, յուսացայ: Չմի խրն-
դրեցի ի Տեառնէ եւ զոյն ազա-
չեմ. բնակիլ ինձ ի սան Տեառն
զամենայն աւուրս կենաց իմոյ:
Հաւատացի անսանել զբարու-
թիւն Տեառն յերկրին կենդա-
նեաց. համբեր Տեառն եւ քա-
ջայերեաց. զօրացի սիրա քո եւ
համբեր Տեառն: ³ Չարմանք մի
մեծ այս են. զխնրդ մին զհազար
հալածեացէ, կամ երկուք զբերս
շարժեացեն: Թէ ոչ Տեառն Աս-
տուծոյ մասնեալ էր զնոսա, եւ
տուեալ իցէ զնոսա ի ձեռս թշա-
մեաց նոցա: ⁴ Աստուծով արաս-
ցուք զօրութիւն, եւ արհամար-
հեացէ զայնոսիկ որ նեղեն զմեզ:
⁵ Գու ես համբերութիւն իմ
Տէր. Տէր յոյս իմ ի մանկու-
թենէ իմմէ: Ի քեզ հաստատե-
ցայ ես յարգանդէ, յորովայնէ
մօր իմոյ դու ես ապաւէն իմ. եւ
առ ի քէն է օգնութիւն իմ յա-

մենայն ժամ: ⁶ Հղօրաց հաստ
աղեղունք թուլացան, եւ տկարք
վառեցան զօրութեամբ: Յազք
եւ լըք հացիւ նուաղեցան, եւ
քաղցեալք լցին զերկիր: Ամուլն
ճնաւ եւթն, եւ բաղմած ինն նու-
աղեաց ի ճննդոց: Տէր մեռու-
ցանէ, եւ Տէր կեցուցանէ. իջու-
ցանէ ի դժոխս եւ հանէ: Տէր աղ-
քատացուցանէ, եւ Տէր մեծա-
ցուցանէ. խոնարհ առնէ զամբար-
առանս մինչեւ յերկիր, եւ բարձր
առնէ զաստաղեալս յաղբեաց:
Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ
իշխանս ժողովուրդեան, եւ աթոռ
վառաց ժառանգեցուցանէ նոցա:
Ատարէ զուխտս ուխտաւորաց,
եւ օրհնեաց զամս արդարոց: Չի
ոչ թէ իւրով զօրութեամբ զօ-
րանայ հղօրն, այլ Տէր տկար
առնէ զհակառակորդս իւր. Տէր
սուրբ է: Սի պարծեացի խորհր-
դականն ի խորհուրդս իւր. մի

պարծեացի հօրն ի զօրութիւն իւր, եւ մի պարծեացի մեծն ի մեծութեան իւրում: Այլ որ պարծին ի Տէր պարծեացի: Չայնիւ իմով ես առ Տէր կարգացի. ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս: Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի ձեռօք իմովք. գիշերի առաջն նորա ոչ խարեցայ: Աչ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զԱստուած, եւ ուրախ եղէ. հոգայի եւ նուազեր յիս հոգի իմ: Դամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ, եւ ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջնա, եւ զամն յաւիտեանից յիշեցի: Խօսեցայ ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի եւ տառապեր յիս հոգի իմ: Մի թէ յաւիտեանից մերժեացէ զիս Տէր. եւ ոչ եւս յաւերլուցու ի հաճել եւ եւս: Ամ ի սպստ արգելցէ

զողորմութիւն իւր յինէն. կամ կատարեաց զբան իւր յազգէ մինչեւ յազգ: Ամ մոռացի զթալ Աստուած իմ եւ եւս. կամ արգելցէ զգթութիւն իւր բարկութեամբ իւրով: Նս ասացի ի վերանալ յինէն աւուրց իմոց թէ զնացի ես ի զբունս զժոխոց. թող զամենայն յետին իմ, եւ ասացի թէ այլ ոչ եւս տեսից զիրկութիւն Տեառն յերկրին կենդանեաց. եւ ոչ եւս տեսից զմարդ բնակչօք իւրովք հանդերձ: Պակասեցայ ես յազգատոհմէ. այտուհետեւ թող լիք զամենայն կեանս իմ: Այլ զնաց մեկնեցաւ յինէն հոգի իմ որպէս զայն որ քակէ զտաղաւար. եւ եղէ ես որպէս զոստայն ստտարաց մերձ ի հատանել: Յաւուր յայնմիկ մասնեցայ ես յառաւօտէ որպէս ի ձեռս առիւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ, զի

յառաւօտէ մինչեւ ի դիշեր մատ-
նեցայ: Որպէս ծիծառն այնպէս
ճչեցի, եւ որպէս զաղաւնի այնպէս
մնչեցի. զի նուազեցան աչք իմ
ի տեսանելոյ: Հայեցայ ի բար-
ձունս առ Տէր Աստուած իմ, որ
փրկեաց զիս. եւ փարատեցոյց յի-
նէն զցաւս անձին իմոյ: Տէր վասն
այնորիկ պատմեցաւ քեզ. զար-
թուցեր զանձն քո, դարձուցեր
զհոգի իմ, մխիթարեցայ եւ կե-
ցի: Ահա ի խաղաղութիւն դար-
ձառ դառնութիւն իմ. փրկեցեր
զանձն իմ, զի մի կորեացց. եւ ըն-
կեցեր յետոյ իմ զամենայն մեղս
իմ: Օհ ոչ թէ որք ի դժոխս են,
խոստովան առնիցին առ քեզ. եւ
ոչ մեռեալք օրհնեացեն զքեզ,
եւ ոչ յուսացին ի ճշմարտու-
թիւն քո ամենեքեան որ իջանեն
ի դժոխս: Այլ կենդանիքս օր-
հնեցուք զքեզ Տէր. որպէս եւ
ես այսուհետեւ մանկունս ճնայց,

որ պատմեցեն զարդարութիւնս
քո, Տէր փրկութեան իմոյ: Աս
ոչ եւս դադարեցից օրհնել զքեզ
յօրհնութիւն նոր զամենայն
աւուրս կենաց իմոյ յանդիման
տաճարիդ Աստուծոյ: ⁹ Աստու-
ծով արասցուք զօրութիւնս, եւ
նա յամօթ արացէ զթշնամիս
մեր: ¹⁰ Աս խոնարհ եղէ, եւ Տէր
կեցոյց զիս. դարձ անձն իմ ի
հանդիսս քո, զի Տէր օղնեաց
քեզ: Փրկեաց զանձն ի մահու-
անէ, զաչս իմ յարտասուաց եւ
զոտս իմ ի գայթակղութենէ.
Հաճոյ եղէց առաջի Տեառն յեր-
կրին կենդանեաց: ¹¹ Աջ Տեառն
արար զօրութիւն. աջ Տեառն
բարձր արար զիս, եւ աջ Տեառն
արար զօրութիւն: Աջ մեռացց,
այլ կեցից, եւ պատմեցից զգործս
Տեառն: Խորատերով խրատեաց
զիս Տէր, եւ ի մահոչ մասնեաց.
Բացէք ինձ զզրունս արդարու-

թեան, զի մտից ընդ այն եւ խոստովան եղէց Տեառն:

ԹԹ. ՍԵՂՄՈՍ

ԽՆԳՐՈՒՆԸՓ — ¹ Պահեա զիս որպէս բիր ահան. ի հովանի թեւոց քոց ծածկեացես զիս յերեսաց ամպարշտաց ոչք տառապեցուցին զիս: ² Օճանապարհս քո Տէր, ցոյց ինձ եւ զչաւիղս քո ուստ ինձ: Առաջնորդես ի ճմարտութեան քում եւ ուստ զիս, զի դու ես Աստուած փրկիչ եմ: ³ Մի ընկենուր զիս Տէր ի ժամանակի ծերութեան, ի պահասել զօրութեան իմոյ մի թողուր զիս: ⁴ Բեւ զթշնամիս մեր հարցուք, եւ անուամբ քով արհամարհեսցուք զլարուցեալսն ի վերայ մեր: Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, եւ ոչ սուր իմ կեցուցանէ զիս: Այլ դու փրկեցեր զմեզ ի

թշնամեաց մերոց, եւ զատելիս մեր յամթ արարեր: Աստուծով պարծեսցուք զօր հանապազ. եւ անուան քում խոստովան եղեցուք յաւիտեան: ⁵ Հրամայես Աստուած զօրութեամբ քով. զօրացո զայս՝ զօր հաստատեցեր ի մեզ: ⁶ Տուր ինձ ցնծութիւն փրկութեան եւ հոգևով պետութեամբ քով հաստատես զիս: ⁷ Աքանչելի է Աստուած ի վերայ սրբոց իւրոց: Նա տայէ զօրութիւն՝ հաստատութիւն ժողովորդեան իւրոյ. եւ օրհնեալ է Աստուած: ⁸ Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի ազանոց քո, եւ արա առ իս նշան բարութեան: Տեսցեն ատելիք իմ, եւ ամաչեսցեն, զի դու Տէր օղնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս: ⁹ Տէր Աստուած մեր սուր մեզ զիսազաղութիւն: Տէր Աստուած մեր, ստացիր զմեզ, զի բաց ի քէնզայլ

որ ոչ զխտեմք, եւ զանուն քո
անուանեմք զօր հանապազ: Խակ
արդ մեռեալք զկենդանութիւն
այլ ոչ աւեանկցեն, եւ ոչ բժիշկք
յարուցանկցեն: ¹⁰ Օրէնագէտ
արա զեա Տէր ի ճանապարհս ի-
րաւանց քոց, եւ խնդրեցից զեա
յամենայն ժամ: Խնաստուն արա
զեա, եւ պատմեցից զօրէնս քո, եւ
պահեցից զեա բոլորով սրաիւ ի-
մով: Առաջնորդեա ինձ ի շաւիղս
պատուիրանաց քոց, զեւ ընդ նոսս
հաճեցայ: Խոնարհեցի զսիրտ իմ
ի վկայութիւնս քո, եւ մի յա-
գահութիւն: Վարձո զաչս իմ,
զեւ մի տեսից զնանրութիւն. ի
ճանապարհս քո կեցի զեա: Ահա
ցանկացայ պատուիրանաց քոց-
յարդարութեան քում կեցի
զեա: Ահեցեց ի վերայ իմ ողոր-
մութիւն քո Տէր, եւ փրկութիւն
քո ըստ բանի քում: Մի ի բա-
ցե առներ ի բերանոյ իմմէ զբան

ճննարտութեան մինչեւ յոյժ, զի
յիրաւունս քո յուսացայ: Հա-
ղորդ արա զեա ամենայն երկիւղա-
ծաց քոց որոց պահեալ է զպա-
տուիրանս քո: Բեւեռեա ընդ
երկեւզ քո զմարմին իմ, զեւ ի
զատաստանաց քոց երկեաց յոյժ:
¹¹ Վիր, Տէր, պահապան բե-
րանոյ իմոյ եւ դուռն ամուր շըր-
թանոյ իմոց, եւ մի խոտորեցի
սիրտ իմ բանիւք չարութեան:
Առքեզ, Տէր Տէր, են աչք իմ,
ի քեզ յուսացայ. մի հաներ
զհոգի յինէն: Պահեա զեա յո-
րոգայթէ որ թագուցաւ ինձ ի
զայթակղութենէ ոչք գործեն զա-
նօրէնութիւն: Անկցին ի ցանցս
նորս մեղաւորք. միայն եմ ես
մինչեւ ուր անցից: ¹² Ուստ ինձ
առնել զկամս քո, զեւ դու ես
Աստուած իմ:

Ի. ՍԱՂՄՈՍ

ԿԱՏԱՐԱԾ — ¹ Աղեցին քեզ հա-
 ճոյ բանք բերանոյ իմոյ, եւ խոր-
 հուրդք սրտի իմոյ առաջի քո յա-
 մենայն ժամ: ² Այսպէս սաղմոս
 ասացից անուան քում յաւի-
 տեանս յաւիտենից, եւ տաց քեզ
 զաղօթս իմ օր ըստ օրէ: ³ Բե-
 րան իմ պատմեացէ զարդարու-
 թիւնս քո, զօր հանապազ զգո-
 վութիւնս քո: Արպէս ոչ թէ
 խարդախութիւն ինչ գիտէի ես
 դարութեանս. այլ մտի ի զօրու-
 թիւնս Տեառն, եւ Տէր յիշեցի
 զարդարութիւնս քո միայն: Աս-
 տուած իմ, ուսուցեր զիս ի ման-
 կութենէ իմմէ ցարգ, եւ ես պատ-
 մեցից զարդարութիւնս քո: ⁴ Մի
 մեզ, Տէր, մի մեզ, այլ անուան
 քում տուր փառս վասն ողոր-
 մութեան եւ ճշմարտութեան քո:
⁵ Զեսք իմ արարին սաղմոսարան,

եւ մատուցե իմ կազմեցին գործի
 օրհնութեան: Իսկ արդ ո՞ պատ-
 մեացէ զայս Տեառն իմում. ինք-
 նին Տէր ամենայնի՛ լուիցէ զամե-
 նայն: ⁶ Աղեցի, եղեցի:



Տ Ե Ղ Ի Ք

Ա

1. ՂԱ. 2, 4:
2. ԼԳ. 6, 9:
3. ՂԵ. 8, 9:
4. ԻԸ. 1, 2:
5. ԽԹ. 7—14, 23:
6. ՉԳ. 2—4:
7. ԾԳ. 8:
8. ԿԵ. 13—15:
9. ԽԲ. 4:

Բ

1. ԿԹ. 2:
2. ԽԲ. 3:
3. ՃԳ. 27—30:

Գ

1. ՉԹ. 15, 16:
2. ՃԽԲ. 9:
3. Ծ. 12:
4. ՃԽԲ. 10:

Դ

1. Լ. 10, 11:
2. ԻԱ. 15, 16:
3. ՉԷ. 4—8:
4. ԿԸ. 21, 32:
5. ՀԲ. 22:
6. ՉԷ. 17, 20:

7. ՃԱ. 4, 12, 5—8, 10, 11:

8. ԼԷ. 4—11:
9. ԽԳ. 16:
10. ԻԱ. 7:
11. Լ. 13:
12. ՉԷ. 19:
13. ԾԳ. 5, 6:
14. Լ. 12:
15. ՃԺԸ. 176:
16. ՉԷ. 11—13, 15, 16:
17. ՉԸ. 47—50:
18. Ծ. 18, 19:
19. ՂԿ. Ե. 8:
20. ՂԿ. ԺԸ. 13:
21. ՄՏ. Ը. 8:

Ե

1. ՃԼԸ. 2—16:
2. ԾԵ. 9:
3. ԿԸ. 6:
4. ԼԷ. 19:
5. ԼԱ. 5:
6. Ծ. 5, 7—9:
7. ԺԸ. 13:
8. ՃԽԹ. 3:
9. ՃԽԲ. 3:

Զ

1. ՂԿ. ԺԵ. 21:
2. Բ. Օրին. ԼԲ. 6, 7:

Տեղեր Սաղմոսարանիս, այս կնքն
Գլուխք եւ Համարք, նշանակին առ
Հասարակ ըստ Զօհրապետն Օրինակի
Ս. Գրոց զբոշմեցոյ ի Վինետիկ, 1805.
զուն ուրեք ըստ այլոց կնչ Օրինակաց:

- 3. Խթ. 21, 22:
- 4. Ծ. 3, 4, 6, 9, 11, 13:
- 5. Խ. 5:
- 6. ԻԴ. 11:
- 7. ՀԼ. 8, 9:
- 8. ՃԽԲ. 7:
- 9. ԼԻ. 18:
- 10. ԼԼ. 10, 13:
- 11. Զ. 2-8:
- 12. ԴԱՆ. Գ. 27, 29, 33, 34, 39-45:
- 13. ԱՂԹ. Մանասէի:

Ի

- 1. ԽԳ. 23-26:
- 2. Թ. *12, 14:
- 3. — 14, 15, 19:
- 4. Ի. 7:
- 5. ԾԱ. 3, 7-11:
- 6. ՀԲ. 2:
- 7. ՂԳ. 17-19:
- 8. ԺԻ. 2, 7:
- 9. ԻԴ. 15:
- 10. ԽԱ. 6, 10-12:
- 11. ԽԲ. 2, 4, 5:
- 12. ՉԴ. 11-13:

Ը

- 1. ԺԲ. 1-6:
- 2. ԿԸ. 4:
- 3. ՃԺԸ. 81, 82:
- 4. ՃԻԲ. 2, 3:
- 5. ԻԱ. 8-11:
- 6. ԻԴ. 18-20:
- 7. Գ. 6-8:
- 8. ԻԶ. 3:

Թ

- 1. ԾԴ. 7:
- 2. ՃԽԲ. 6, 7:
- 3. ԽԱ. 2-5:
- 4. ԿԲ. 2-10:
- 5. ԺԶ. 15:
- 6. Լ. 19:
- 7. ՃԽԴ. 15, 16:
- 8. ՀԲ. 25, 26:
- 9. ԿԶ. 2:
- 10. ԿԹ. 6:
- 11. Թ. 17:
- 12. ԻԶ. 7, 8:
- 13. ՀԹ. 2-9, 15, 20:
- 14. ՉԴ. 8:
- 15. ՂԿ. ԺԱ. 3:
- 16. ՃԺԻ. 25:
- 17. ՃԽԳ. 5:
- 18. ԵԲԳ. Բ. 14:

Ժ

- 1. ԵԲԳ. Բ. 8, 9:
- 2. ԵԲԴ. Ա. 3, 15, 12, 13, 1, 3:
- 3. ԵԲԳ. Բ. 3:
- 4. ԵԲԴ. Ա. 12, 13:
- 5. ԵԲԳ. Ե. 10:
- 6. ԽԳ. 7-10:

ՃԱ

- 1. ԽԳ. 2:
- 2. ԿԵ. 3, 5:
- 3. Ը. 2, 5-10:
- 4. ՃԵ. 1, 2:
- 5. ՃԻ. 4-6:

- 6. Լ. 20:
- 7. ՀԻ. 23-25, 29, 30:

ԺԲ

- 1. ՂԴ. 6:
- 2. ԿԵ. 4:
- 3. ՉԵ. 9, 12, 13:

ՃԳ

- 1. ԽԶ. 2, 7:
- 2. ԺԵ. 9, 10:
- 3. Հ. 23, 24:
- 4. ՉԹ. 14, 15:
- 5. ՃԶ. 8, 9, 21, 22, 31, 32:
- 6. ՃԺԻ. 23, 24, 27:
- 7. ՃԻԵ. 2, 3:

ԺԴ

- 1. ԻԱ. 23:
- 2. ԼԲ. 1-3:
- 3. ԼԳ. 2-4:
- 4. ԽԻ. 11:
- 5. ԾԶ. 8, 9:
- 6. ԿԵ. 16:
- 7. ՀԱ. 18, 19:
- 8. ՂԻ. 4-6:
- 9. ՃԲ. 1-5, 8-22:
- 10. ՃԼԵ. 1-9, 23-26:
- 11. ԽԳ. 1-11:
- 12. ՃԾ. 1-6:
- 13. ԴԱՆ. Գ. 52-87:
- 14. ՂԿ. Ա. 47-53, 68-70, 74, 77-79:
- 15. ՂԿ. Բ. 29-32:

ԺԵ

- 1. Թ. 2, 3:
- 2. Հ. 18-22:
- 3. ԻԹ. 7-13:
- 4. ԺԵ. 5, 6:
- 5. ԼԵ. 6-11:
- 6. ԼԹ. 2-4:
- 7. Չ. 17:
- 8. ԻԲ. 2-6:
- 9. ԻԹ. 2-4:
- 10. ՃԺ. 4:
- 11. ՃԺԵ. 12-14, 17:
- 12. ՃԼԻ. 1, 2:
- 13. ՃԽԳ. 3, 4, 11-15:

ԺԶ

- 1. ԵԲԳ. *Ը. 13:
- 2. ԵԲԳ. Բ. 3, 16:
- 3. ԵԲԳ. Ե. 1, 8:
- 4. ԵԲԳ. Զ. 1, 2:
- 5. ԵԲԳ. Ը. 3:
- 6. Լ. 24:

ՃԻ

- 1. ԺԻ. 22-24. 35-39, 43, 47-49:
- 2. ԻԵ. 3, 12:
- 3. ԼԸ. 2, 5-8:
- 4. ԼԹ. 6-9:
- 5. ԿԱ. 2, 3, 8, 9, 11-13:
- 6. ՃԺԸ. 9-12, 106, 131, 162-165, 168.
- 7. ԺԻ. 29, 30:

ԺԸ

- | | |
|-------------------|-------------------------------------|
| 1. ԼԲ. 22: | 4. ԽԳ. 6-9: |
| 2. ԻԶ. 1-4, 13: | 5. ԿԷ. 29: |
| 3. Բ. ՕՐ. ԼԲ. 30: | 6. Ծ. 14: |
| 4. ԾԹ. 14: | 7. ԿԷ. 36: |
| 5. Հ. 5, 6: | 8. ՉԵ. 16, 17: |
| 6. Ա. ԹԳ. Բ. 4-9: | 9. ԵՍ. ԻԶ. 12, 13: |
| 7. ՀԶ. 2-10: | 10. ՃԺԸ. 33-37, 40,
43, 63, 120: |
| 8. ԵՍ. ԼԸ. 10-20: | 11. ՃԽ. 3, 8-10: |
| 9. ՃԷ. 14: | 12. ՃԽԲ. 9: |
| 10. ՃԺԳ. 7-9: | |
| 11. ՃԺԷ. 16-19: | |

Ի

ԺԹ

- | | |
|--------------|--------------|
| 1. ԺԶ. 8, 9: | 1. ԺԸ. 15: |
| 2. ԻԳ. 4, 5: | 2. Կ. 9: |
| 3. Հ. 9: | 3. Հ. 15-17: |
| | 4. ՃԺԳ. *1: |
| | 5. ՃԾ. 2, 3: |
| | 6. ՀԱ. 19: |

ԱՅԼ ԱՂՕԹՔ

Ս. Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի

Ա.

Ի ՊԱՏՐԱՍՏ ՈՒԹԻԻՆ

Ս. ՊԵՏԵՐԱԳԻ

Կիտակի:

Յարոցանէ զաղտարս յերկրէ Ե-
բարնր առնէ զբարասպետալ յաղբ-
եաց. նարոցանէ զնոսս ի շեանս՝
ընդ ի շեանս ժողովեղեան ի-րոյ: —
Օ մնաւ ած, ո՞քա հանայ, եթէ
չէր մարթ՝ չէր հնար Աստուծոյ
յաշխարհի աստ անդր եւս քան
զայն բարձրութիւն յոր ամբարձն
զքեզ, ամբառնալ: Աւ յորպիսի՞
ազնուազոյն աւազութիւն բարձի
եւ պատուոյ էր նմա հնար հասու-
ցանել զքեզ քան զայս՝ զե կար-
գեաց կացոյց զքեզ սպասաւոր ի
պէտս իւրոց շքեղաշուքն փառաց

յերկրի աստ: Ատ քեզ հրաման
ի սեղան անդր մատչել եւ անդէն
հանել նմա ողջակէզ զՈրդի իւր
զմիածին: Վանի քանի օրինակօք
հարկ եղեւ Աստուծոյ զատեալ
որոշել զքեզ առ քահանայա-
ցուցանելոյ: Զառաջինն յան-
սահման թուոյ անտի հնարաւորն
արարածոց ընտրեաց զքեզ, եւ
եա ծնանել: Ապա ի բազմամբօխ
բազմութենէ անտի բիւրաւորն
անհաւատից եւ այլաղանդից ըն-
տրեալ եդ զքեզ ի ծոց սրբոյ ե-
կեղեցւոյ, եւ բաշխեաց եա քեզ
չնորհս քրիստոնէութեան եւ ու-
ղիւն հաւատոց: Հուսկ ուրեմն ի
խուռն բազմութենէ անտի հաւա-
տացելոց կոչեաց զքեզ ի քահա-
նայութիւն:

Աթէ միում եւեթ ի մարդ-
կանէ զքահանայութեանն պա-
տիւ տուեալ էր Աստուծոյ —
այնպէս զե տորա միայն լեալ էր

իշխանութիւն իջուցանել ան-
դուստ ի յերկնուստ յերկիր այսր
զՎանն մարմին եղեալ, եւ զո-
գիան՝ արձակելով զնոսա ի մեղաց
անտի իւրեանց, թափել ի դժո-
խոց — ո՛վ, որպիսի շուք՝ քանի
մեծարանս չդնէին մարդիկ այն-
պիսումն քահանայի: Աւ ինքն
իսկ քահանայն որպիսի շնորհա-
կալութեանց չճանաչէր զանձն
պարտապան: Աւ յի՛նչ ինչ չլի-
նէր նա միջամուխ առ սէր Աս-
տուծոյ, տեսեալ զանձն վերա-
ցեալ բարձրացեալ ի վերոյ քան
զամենայն մարդիկ: Այլ աղէ՛ եկ
հաւատա դու, ո՛ քահանայ, եթէ
յաճախութիւն քոյոցդ նմանեաց
եւ ոչ դոյզն ինչ զպատիւդ քո
եւ զպարտիս նուազեցուցանէ:
Յիրաւի ուրեմն պահանջեցէ Աս-
տուած եթէ այր քահանայ իւր
իսկ ստացուած իցէ: Այր Աստու-
ծոյ անուանեալ յորջորջն քա-

Հանայն ի սուրբ զիրս. կոչի նա այր, որ լոկ Աստուծոյ եւ ոչ այլում ումեք պատշաճիցի: Քահանայք հնոյ օրինացն եղեալ զձեռնն ի վերայ պատարագացն զենրոց զայն իմն յայտ առնէին եթէ եւ ինքեանք եւս նոյնպէս կազմք եւ պատրաստք իցեն հանգոյն կենաց զոհիցն զոր մատուցանեն, եւ զլերեանց կեանս զոհել: Սոյնպէս եւ քահանայք նորոյ օրինացս զձեռս յընծայիցն վերայ տարածեալ, տան առնուլ ի միտ եթէ զոյգ ընդ կեանն Յիսուսի Քրիստոսի՝ զոր յամենասուրբ պատարագի անդ մատուցանեն, եւ զլերեանց կեանս եւ զանձինս իսկ ողջոյն պարտին նմա մատուցանել:

Ահա իսկ եւ իսկ ի սեղան անդրո եւ մատչելոց, եւ զԱրդին Աստուծոյ յերկուսս ի վերուսս ի քո ձեռսդ կոչելոց սակաւ բանիւք,

եւ ի ձայն բարբառոյ քո հութիւն հացին եւ զինւոյ ի մարմին եւ յարիւն անդր Քրիստոսի Յիսուսի շրջիցի: Աւ զայն եւս առ ի միտ եթէ իբրեւ զհրեշտակ բովանդակ ազգի մարդկան մատչես զու ի սեղան անդր՝ լինել բարեսիսս վասն եկեղեցւոյ եւ համօրէն մարդկան առ Աստուած: Արդ պատրաստեալի զանձն քո յառաջագոյն բարեպարիշտն ըղձիւք եւ ցանկութեամբք:

Աստուած իմ. յիմ վերայ կատարին ահա բանք մարգարէին եթէ Քաղչր ասնէ պատասպեալս յաղբեաց, եւ նստոցանէ զնոսս իշխանս՝ ընդ իշխանս ժողովորեան իւրոյ: Ահա եւ մեղաւորս տառապեալ՝ որ վասն անհնարին մեղաց իմոց արժանի եղէ յայնչափ ամաց հետէ մնալոյ ի դժոխս ընդ ոտիւք չարաշուք ոգւոյ խառնեալ՝ լքեալ յամենեցունց եւ

ի քէն եւս, ո՞ Տէր իմ սիրելի,
 ահա երթամ այժմ մատուցա-
 նել պատարագ, այս է մատու-
 ցանել քեզ ողջակէզ զՈրդին
 քո զմիածին: Յետ սակաւ միոյ
 իջցէ Բանն յաւիտեանական ի-
 մով բանիւ ի սեղան այսր, եւ ի
 ձեռս իմ եկեսցէ, զի մատուցից
 զնա քեզ եւ վայելցից յամե-
 նասուրբ մարմին նորա:

Օրհնչ, Աստուած ոգւոյ ի-
 մոյ, ես քահանայ իցեմ. — ո՞ նո-
 րոյ եւ չքնաղ զարմանալեացս.
 ես որ բազում անգամ եղէ քեզ
 դիմադարձ, ես որ վասն դոյզն ինչ
 եւ տարապարտ հաճոյից՝ վասն
 ոչնչի ետու զքո բարեկամու-
 թիւն վտարանդի. զսէր քո եւ
 զչնորհս մերժեցի: Աւ զեմբղ
 մարթ էր քեզ ի միջոյ այնչափ
 անչափ ոգւոցն անմեղաց եւ հաւ-
 ատարմաց ընտրել զնա քեզ ի
 քահանայ:

Ո՞ Տէր. լոյս տուր, յաւել
 ինձ հաւատս: Ծանեայց զիս եւ
 ծանեայց զքեզ: Տուր ինձ ճա-
 նաչել թէ ո՞ որ իցես դու՝ որ ի
 ամին առաւօտու կամիցիս զանձն
 քո ինձ պարգեւել, եւ որպիսի որ
 ես որ զքեզ ընդունելոց իցեմ:
 Թախանձանօք աղաչեմ զքեզ,
 մինչ չեւ ի սեղան անդր մատու-
 ցեալ, ջնջեա սուրբ արա զհոգի
 իմ յանհարին արատոյ անտի
 մեղացն արժանեօք արեան քո:
 Վերեա, Տէր Յիսուս. թող ինձ
 զթութեամբ քով, մինչ չեւ ե-
 կեալ քո ի ձեռս եւ ի սիրտ իմ:
 Ղառնացուցի զքեզ, ո՞վ վերին
 բարութիւն, եւ եղէ պատճառք
 բազում վշտաց եւ դառնու-
 թեանց. ցաւ է ինձ ոգւով չափ:

Հաւատամ, փրկիչ իմ, եթէ
 դու որդի Աստուծոյ ես եւ մե-
 ոեալ վասն իմ եւ թողեալ
 զանձն քո յամենասուրբ խորհր-

Թեան առ մատչելոյ պատարագ ի քահանայից եւ լինելոյ կերակուր մեր: Յուսամ չարչարանօք քովք եւ վասն խոստմանցդ, եթէ յայսմ հետէ ցանդ սիրեցից ըզքեզ եւ ժառանգեալ վայելեցից ի քեզ յաւիտեան: Մերեմ զքեզ, փրկիչ իմ սիրելի, սիրեմ զքեզ առաւել քան զանձն իմ. եւ քանզի սիրեմ զքեզ, նմին իրի ցաւիմ յամենայն սրտէ իմմէ վասն Թշնամանայն որովք զքեզ անգոմնեցի. քանզի սոքօք զքեզ որ անեղբ բարութիւնդ ես, դառնացուցեալ զայրացուցի: Մերեմ զքեզ, Աստուած իմ, սակայն կարի սակաւ սիրեմ զքեզ: Ասայր եթէ սիրելի զքեզ, որպէս անկ եւ արժան առն քահանայի իցէ. երանի թէ այնու սիրով զքեզ առնոցի, որով այնչափ բազմութիւն ոգւոց ընդունին՝ որք ոչինչ այլ ինչ բայց զքեզ միայն սի-

ւրեն: Առ արաչանայ խնոց, եւ վառեալ բորբոքեսձիւր զն սիրով քով սրբով, եւ արա զն քո եղէց ամենեւին:

Հայր յաւիտենական, մատուցանեմ քեզ զնուէրս զայս ի շնորհակալութիւն վասն ամենայն բարեաց զոր ցուցեր ամենայն մարդկան առ հասարակ, մանաւանդ վասն այնոցիկ զորս ամենասուրբ մարդկութեան Յիսուսի Քրիստոսի եւ երանելոյ Վրսին Մարիամու, հրեշտակին խնոց պահապանի եւ համօրէն սրբոց պաշտպանչաց խնոց բաշխեալ ետուր. եւ վասն արժանեաց Արդոյ քոյ խնդրեմ ի քէն հանապազորդութիւն սուրբ եւ զսէր քո եւ զայլ ամենայն շնորհս զորս Յիսուս, Մարիամ եւ ամենայն պաշտպան սուրբք իմ խընդրեն վասն իմ:

Երկու շարաթի:

Օչոյն արարէ՛ր առ իմոյ յիշա-
րանէ: — Բայ այսմ բանի հա-
մարին իմն աստուածախօսք եթէ
պարտ եւ հարկ իցէ քահանայիցն՝
յորժամ զնուէր սրբոյ պատարա-
զին ընծայիցեն, յուշ ածել զչար-
չարանս եւ զմահն Վրիստոսի:
Եւ թուի իմն եթէ զնոյն իսկ
պահանջիցէ Առաքեալն յայնցա-
նէ՝ որ զնուիրական խորհուրդն
ընդունիցին. Վանիցս անգամ թէ
որիցէ՛ր զհայոս զայս է- զԷա-
ժակս ըմպիցէ՛ր, զմահ Տէառն
պարծիցէ՛ր: «Վասն սորին իսկ եւ
փրկիչն մեր, ասէ Ս. Թովմաս»,
առ պահելոյ ի մեզ կենդանի ըզ-
յիշատակ բարութեան եւ սիրոյ
զոր մեզն եցոյց մահուամբ իւրով՝
զնուիրական Խորհուրդն կամե-
ցաւ հաստատել: Եւ զն այնչափ
անչափ բարեացն յիշատակ հա-

նապազ ի մեզ մնայցէ, զմարմին
իւր ի կերակուր եւ զարիւն իւր
յարբումն եթող հաւատացե-
լոց,»: Վմին իրի սուրբ վարդա-
պետն զամենասուրբ Խորհուրդն
սեղանոյ «Յիշատակ չարչարա-
նաց,» անուանեալ կարգայ:

Ապա զմտաւ ած, ո՛ր քահա-
նայ, եթէ նուիրական ընծայս այս
զոր դու ի վերայ սեղանոյն հան-
գերձեալ ես մատուցանել մերձ
ընդ մերձ, նոյն Տէր է որ վասն
քո զարիւն իւր եւ զկեանս ետ:

Սակայն ոչ լոկ յիշատակ ինչ
զոհի խաչին է պատարագն, ոչ
բնաւ. այլ եւ է մի եւ նոյն պա-
տարագ որ ի խաչն անդ կատա-
րեցաւ: Վանդն նոյն ինքն իսկ է՝
որ աստ որպէս եւ անդ, զպատա-
րագն մատուցանէ. եւ մի եւ նոյն
է աստ, որպէս եւ անդ, նիւթ
զենմանն. աստ որպէս եւ անդ եւ
որ մատուցանէն եւ որ մատչի է

Բանն մարմին եղեալ. պայմանն լոկ եւ օրինակն այլակերպ ի միմեանց են: Վանզինաց հեղմամբ արեան մատուցաւ նա, իսկ աստ առանց արեան ինչ հեղոյ մատչե. անդէն արդեամբք իսկ մեռաւ Վրիստոս, իսկ աստ խորհրդական իմն օրինակաւ մեռանի. «Օջի մի եւ նոյն է զոհն, լոկ ի կողմանէ, ընծայմանն այլակերպ», ասէ Դողովն Տրիպենտեան: Եպա ուրեմն յորժամ զխորհուրդ պատարագին կատարիցես, համարեաց դու եթէ ի լեառն Պողգոթա գտանիցիս, զի Եստուծոյ զարիւն եւ զարչարանս իւրոյ Արդւոյն մատուցանիցես: Եւ յորժամ հաղորդիս ի Խորհուրդն արութեան, այսպէս աճ դու զմտաւ եթէ ի վերաց անտի փրկչին քո զարիւն նորա զպատուական ըմպիցես:

Եժ զարձեալ զմտաւ եթէ

յիւրաքանչիւր պատարագի գործ փրկե թեան վերստին նորոզի, այնպէս զի աշխարհ որպէս երբեմն ի մեռանել Վրիստոսի Յիսուսի ը վերայ խաչին՝ նոյնպէս եւ աստ միով եւեթ նուիրական պատարագաւ զնոյն բարիս ընդունի վերստին՝ որք մահումբ փրկչին մերոյ տուան: Եյնչափ ինչ արժէ կատարումն խորհրդոյ պատարագի, որչափ ինչ մահն Վրիստոսի ի խաչավայտին: Պատարագաւ սեղանոյ արժանիք Յիսուսի Վրիստոսի ամենայն մարդկան եւ մանաւանդ քահանայից որ զնուէրն մատուցանեն, բաշխին առատութեամբ:

Վսան որոյ Ս. Փրանկ. Եստիկ — որ անարժան զանձն համարեր ամբառնալոյ յաստիճան քահանայութեան եւ նմին իրի իսկ բնաւ ամենեւին չկամեր լինել քահանայ — յորդորէ զքահանայս ան-

Չատել զանձինս յիրաց երկրաւորաց, եւ այնմ եւեթ ուշ ունել զի զՄատուած իւրեանց որ այնչափ սիրեաց զնոսս եւ այնպիսի պարզեւօք պատուեաց, սիրիցեն եւ մեծարիցեն: Եւ յաւելու եթէ զայն քահանայս մանաւանդ պարս է հէքս եւ չուսուականս անուանել՝ որք առ սեղանոյն գՐբիստոս մօս առ ինքեանս ունին, եւ սրաիւ իւրեանց յաշխարհի ինչ իրս հարեալ իցեն: Տեսէք, ո՞ քահանայք, զպատիւ բարձրութեան ձերոյ, եւ որպէս ի վեր քան զայլս վասն այսր Խորհրդոյ մեծապատիւ մեծարեաց զձեզ Մատուած, այսպէս եւ դուք սիրեցէք զնա եւ պատուեալ մեծարեցէք: Մեծի խօթութեան է, զՅիսուս այդպէս յանդիման ունել, եւ վասն այլոյ ինչ իրիք աշխարհի հոգալ:

Երգարեւ իսկ, Տէր, չեմ բաւ-

ական կալ եւ երեւել առաջի քո: Բայց սակայն իրախուսեալ ի քումէ բարութենէ՝ որ զնա առանց իմոյ ինչ արժանաւորութեան ընտրեաց ի քահանայ, լինիմ քեզ յանդիման յայսմ առաւօտու առ ի նուիրել քեզ զՈրդի քո: Երգ ընծայեմ քեզ, ո՞ Մատուած իմ, զգառն անարատ ի քաւութիւն մեղաց իմոց եւ ամենայն մարդկան: Ահառափկ Գառնդ Մատուծոյ: Հայեաց յայս գառն, զոր երբեմն վասն փառաց քոց եւ վասն մերոյ փրկութեան ի վերայ սեղանոյ խաչին նուիրեալ տեսեր: Վասն սիրոյ Գառինս քեզ մատուցելոյ որ յոյժ սիրելին է քեզ, դարձո ի հոգի իմ զարժանիս նորա: Եւ թող ինձ զամենայն թշնամանս զմեծամեծս եւ զփոքունս որովք մեղայ քեզ ցայսօր: Յաւէ ինձ յամենայն սրտէ իմմէ, զի զքեզ՝

անեղք բարութիւն, զայրացուցեալ վշտացուցի:

Եւ դու, ո՞ Յիսուս, եկ եւ ջնջեա արեամբն քով սրբով զամենայն ազտեղութիւնս յինէն ի բաց, մինչ չեւ ընկալեալ իցեմ զքեզ յայսմ առաւօտու: Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանկոյս, այլ ասա բանիւ միայն եւ բժշկեսցի հոգի իմ: Արդարեւ չեմ ես արժանի ընդունել զքեզ, բայց սակայն ու, ո՞վ երկնաւոր բժիշկ, դու կարող ես զիւրաւ եւ միով եւեթ բանիւ զբնաւ վերս իմ բժշկել:

Մոլորեցայ ես իբրեւ զչխար կորուսեալ: Ես եմ ոչխարն այն որ կամեցայ մոլորել կամակար, այնու զե քեզ, Փրկիչ իմ, թիկունս դարձուցի: Այլ դու ես հովիւն քաջ, որ ետուր զկեանս քո առ ի փրկել զես. Խնդրեալ զժամացս քո, զե՞ զպարտութեանս

քո ես ոչ ճոռայաց: Խնդրեա զես, Յիսուս. եւ մի թողուր զես անձին խնամ. խնդրեա զես եւ զիր զես ի վերայ ուսոց քոց. քանզի զնեմ ի մտի սիրել զքեզ, եւ ծառայել քեզ որչափ ինչ ի կարի իմում է:

Ղու ասացեր, Ոչեարք է՞ յայնի իմո՞՞ լսէն. է- ոչ ոք հանէ գնասս է յեաց իմոց: Ղու կոչեա զես առ սէր քո. ահա թողում զամենայն եւ առ քեզ զամ, ո՞վ կեանք իմ: Ամիմ յամենայնի հեազանդել քեզ: Հրաժարիմ յամենայն հաճոյից աշխարհի, քանզի արժանի համարիս դու յայսմ առաւօտու տալ զամենասուրբ մարմին քո ինձ ի կերակուր:

Արեմ զքեզ, Յիսուս, ի վեր քան զամենայն, եւ առ առաւել զքեզ սիրելոյ, ցանկամ ընդունել զքեզ յամենասուրբ Խորհրդ-

զեան: Գու զանձն քո ողջոյն
տաս ինձ ամենեւին, եւ ես եւս
տամ քեզ զանձն իմ բովան-
դակ: Գու ես յայտ հեռէ ամե-
նայն ինչ իմ, մի միայն բարու-
թիւն իմ եւ սէր իմ:

Ո՛վ Մարիամ մայր իմ, ըն-
կալ վասն իմ մասն ինչ ի քում,
խոնարհութենէ եւ յեռանդանէ,
որով ընդունելիր զՅիսուս՝ յոր-
ժամ հաղորդէիր ի Խորհուրդն
սրբութեան:



Երեքարամի:

Գու է որբէ ե՛մ սիրելի ընդ որ
հաճեցայ: — Ի հնումն յաճա-
խութեամբ զհօց շուք եղեալ
մեծարելին զԱստուած. բայց ի
նոր օրէնս միով եւեթ պատա-
րազաւ առաւել պատուի եւ
փառս առնու Աստուած քան
այնչափ անչափ զոհւքն հնովք՝
որք պատկեր իմն եւ ստուեր ա-
մենասուրբ պատարագի մերոյ
էին: Այսու սրբոյն պատարա-
զաւ մեծարեալ պատուի Աս-
տուած որպէս վայելն եւ արժան
իցէ. քանզի այն անեղբ մեծա-
րանք եւ շուք զոր Յիսուս Վրիս-
տոս, յորժամ զանձն ի խաչի
մատուցանէր, եղ Աստուծոյ, վե-
րբատին նորոզի: Վան զամենայն
զսրբոյն աղթս եւ զապաշխարու-
թիւնս եւ զվաստակս առաքելոյ
եւ զտանջանս մարտիրոսաց եւ

քան զնաւ եռանդն սիրոյ սերով-
բէից եւ աստուածեղէն Մօր եւս՝
որ եղևն պատճառք մեծարանայն
Աստուծոյ եւ լինիցին, առաւել
փառաւոր առնէ զԱստուած մի
միայն պատարագ: Արդ զայս մե-
ծարանս եւ յարդանս արժան
համարի Աստուած յայսմ իսկ
առաւօտու առնուլ ի ձեռաց
քոյ, ո՛ր քահանայ:

Եւ եւս արժան իսկ է, զի մեք
Աստուծոյ՝ վասն անչափ բարե-
բարութեանց զորս իւրովն անեզր
բարութեամբ մեզ եցոյց, ունի-
ցիմք շնորհս: Այլ զիւրդ իցեմք
բաւականք մեք աղքատք եւ սա-
ռապեալք արժանի զոհութիւնս
նմա մատուցանել: Աթէ մի ան-
գամ եւեթ՝ եւ այն դոյզն ինչ
նշան սիրոյ ցուցեալ էր մեզ Աս-
տուծոյ, պարս եւ պատշաճ էր
մեզ, վասն սորին իսկ այսորիկ
անչափ իմն պայմանօք շնորհասա-

տոյց լինել նմա. քանզի այս նշան
սիրոյ՝ ընծայութիւն ինչ բարու-
թեան եւ պարզեաց անչափա-
կանն Աստուծոյ է: Արդ Տէրն
մեր՝ զի մի առ կատարումն բարձ-
րագոյն պարտուցս տաղնապեալ
տառապիցիմք, եցոյց մեզ օրի-
նակս եւ հնարս՝ զի որպէս արժան
իցէ շնորհակալ նմա լինիցիմք:
Եւ զիւրդ վճարիցի այս: Յայն-
ժամ ուրեմն՝ յորժամ ի պատա-
րագի ընծայիցի նմա Յիսուս:
Այսու կատարեալ իմն օրինա-
կաւ զոհութիւն եւ հատուցումն
ընծայի Աստուծոյ:

Օրհն որ ի նուիրական պա-
տարագի նմա ընծայիցի, է նա
ինքն միածին Արդի իւր ընդ որ
հաճինա: Պատարագս այս կեանք
Աստուծոյ է, որ ի քահանայա-
գործութեան անդ եւ ի հաղոր-
դութեան խորհրդական իմն մա-
հուամբ մատչէ: Օչայս զայն օրի-

նակ եւ Ղաւթի շնորհ ունէր
 Աստուծոյ վասն ամենայն շնոր-
 հացն զոր ի նմանէն էր ընկա-
 լեալ. Օ՛հնչ Կայ Կրիստոս
 Տեառն ընդ ամենայն զոր է-
 ինչ: — Օ. Բաժակ Տեառն ընկա-
 լայց: Աւ ինքն իսկ Վրիստոս Յի-
 սուս զոյն օրինակ զոհանայր զՕ-
 րէն վասն ամենայն բարեացն զոր
 մարդկանն ցուցեալ էր. Ա- ըն-
 կալեալ Բաժակ Գոհացաւ, է- ա-
 սէ. Առէ՛ք զայր է- Բաժանեցէ՛ք
 է յեզ:

Ո՛վ Աստուած իմ եւ արա-
 ըիչ, զհարգ էր զնորեալ որո-
 շեցեր զու զես՝ ի ձեռն նուիրման
 Որդւոյ քո շուք եղեալ մեծարել
 զքեզ: Ո՛չ ապաքէն ես թշուա-
 մանօք եւ նախատանօք երբեմն
 անարդեալ անպատուեցի զքեզ:
 Փոխանակ քարավէժ ի դժոխս
 զես առնելոյ, մեծապատիւ մե-
 ծապարդեւ մեծարես զես, կար-

զեալ զես քեզ քահանայ եւ ի
 սպասաւոր փառաց քոյ:

Արդ քանզի արժան համարիս
 զու եւ հաճեալ հաւանիս զու-
 էրս զայս զմեծ յիմոց ձեռաց ըն-
 դունել, միաւորեմ ես զտառա-
 պեալ սիրտ իմ ընդ սրտին Յի-
 սուսի, եւ յանուն նորա ընծայեմ
 քեզ զայն ի խոստովանութիւն
 քոյոյ բարձրագոյն տէրութեան:
 Յանկամ զե քո անբաւ մեծվայ-
 ելութիւն ի բնաւ իսկ մարդկանէ
 մեծարեսցի եւ սիրեսցի: Պա-
 տիւք եւ մեծարանք, զոր յայսմ
 առաւօտու մատուցանեմ քեզ
 յընծայել անդ զԱրդի քո, լիցին
 փոխանակ ամենայն անպատուու-
 թեանց զոր մեղօք իւրեանց առ-
 նեն եւ արասցեն քեզ մարդիկ:
 Աամիմ եւս պատարագաւս այ-
 սուիկ շնորհ ունել քեզ վասն
 ամենայն բարութեանցն զոր ցու-
 ցեր զու աշխարհի եւ առանձինն

ինձ թշուառականիս, որ վասն ապախտաւորութեանց իմնց եւ անշնորհակալու մտացս արժանի իսկ էի լքեալ թողեալ լինելոյ ի քէն: Աս յաւելի մեղս ի վերաց մեղաց, իսկ դու շնորհօք քովք լցեր զես: Վոհանամ զքէն, ո՞ անեղբ բարութիւն, եւ կամ մանաւանդ ինքն Յիսուս Վրիստոս գոհասցի զքէն վասն իմ:

Վասն արժանեաց Յիսուսի Վրիստոսի խնդրեմ ի քէն, ով Աստուած, լուսաւոր արա զես յայսմ առաւօտու, բորբոքեա զես սիրով քով, եւ անջատեա զես ամենեւին յամենայն իրաց երկրաւորաց: Ա՛վ. մի թողուր, զի ընդ երկար զիմնդարձ եղէց այնչափ անչափ քաղցր հանդիսից սիրոյ զոր առ իս ցուցանես: Յամենայն սրտէ սիրեմ զքեզ, ո՞ գլխաւոր բարութիւն. թողում զամենայն զի քեզ ո՞ Աստուած

իմ, որ արժանի անչափ սիրոյ ես, հաճոյ գտայց: Տուր ինձ, աղաչեմ, ցանդ լուսաւորագոյս նկատել զմեծութիւն քաղցրութեան քո, զի հանապազ մեծաւ եւս սիրով առ քեզ՝ վառեալ բորբոքեցայց, եւ դուն զործեցից քեզ յամենայնի եւ առանց ինչ անձին պահելոյ՝ պատճառք ուրախութեան լինել:

Վու սէր մեծ ցուցեր հոգւոյ իմոյ, եւ զեարդ իցէ ինձ այլ ինչ սիրել բայց ի քէն: Աչ Տէր. յօրէ աստի կամիմ ի քեզ կեալ, եւ զքեզ միայն սիրել. քանզի կարի իսկ արժանի ես դու բովանդակ սիրոյ իմոյ:

Հայր յաւիտենական. ակն ունիմ յարեմէ Յիսուսի Վրիստոսի եթէ դու շնորհօքն քովք զցանկութիւնս իմ զայս անհոյս յարզիւնս: Վու եղեր ինձ առատ պարգեւատու մինչ դեռ ես հեռաւ

ցեալ փախչէի ի քէն. ապա կարի խակ յերաւունս առաւել յուսացայց ի քէն այժմիկ՝ զև զքեզ միայն խնդրեմ, եւ ոչ այլում իմիք բայց քում սիրոյ փախաքեմ:

Մարիամ մայր իմ. զու որ ՂԱտուած զնոյն՝ զոր ես յայտ առաւօտու յիս ընդունեցոյ եմ, տարար ի սուրբ արդանդի քում, օգնեա ինձ զի խոնարհութեամբ եւ սիրով ընկալայց զնա ի սիրա իմ:



Չորեքշաբթի:

Նա է Կառնիւնի մեղաց մեղաց: — Օճմաւ ած եթէ որպէս ի ձեռն պատարագի սեղանոյ պատիժքն՝ զոր մեղօքն յանձինս ձգեալ իցեմք, թողուն, եւ անչափ իմն ողորմութիւնք ի շնորհս մեղաորաց ընկալեալ լինին: Քանկ ողորմելի եւ թշուառական լնեաք, եթէ չգոյր ի միջև զոհս այս նուիրական: Քանզի ի ձեռն զոհս այսորիկ արդարութիւնն Աստուծոյ արգելեալ կարճի, զև մի զպատիժսն՝ որոց յերաւի եւ յարժանի մերովք յանցանօքն զապ պատժապարտք, առաքեսցէ ի վերայ մեր: Անշուշտ չէին բաւական զոհք հնոյ օրինաց զարկութիւն Աստուծոյ առ մեղաորս անդր ցածուցանեցոյ. Աթէ ելե ընկալե՞՞ Տէր ընդ հաղարսսսսսսս: Աւ եթէ կեանք եւս

համօրէն մարդկան եւ հրեշտակաց իսկ ընէին նուիրեալք, եւ այս չէր բաւական վասն միոյ եւեթ յանցանաց՝ զոր արարած ոք առ Արարիչ անդր իւր յանցանիցէ, հատուցումն ինչ արժանի աստուածեղէն արդարութեանն առնելոյ: Միայն Քրիստոս Յիսուս զօրէր հատուցանել վասն մեղաց մերոց. Նա է ~~+~~ ~~ա~~ ~~ռ~~ ~~ւ~~ ~~ն~~ ~~ի~~ ~~ն~~ ~~մ~~ ~~ե~~ ~~ղ~~ ~~ա~~ ~~ց~~ ~~մ~~ ~~ե~~ ~~ր~~ ~~ո~~ ~~ց~~: Աւ նմին իրի իսկ առաքեաց զնա Հայր յաշխարհ, զի մարդ եղեալ՝ պատարագաւ կենաց իւրոց հաշտեցուացէ զնա ընդ մեղաւորս: Աւ զոհն այս յիւրաքանչիւր իսկ պատարագի միւսանդամ նորոզի:

Ապա խորհեաց, ո՞ք քահանայ, զմեծութենէ պաշտամանն որ քեզն աւանդեցաւ: Անցեալ կաս դու միջնորդ եւ բարեխօս ի մէջ Աստուծոյ եւ մարդկան մեղաւորաց, այնու զի նուիրես դու Աս-

տուծոյ ի վերայ սեղանոյ զկեանս եւ զարժանիս Քրիստոսի, որով յօժարի Աստուած տալ լոյս եւ զօրութիւն մեղաւորաց՝ զի սարըջացին ի մեղաց եւ զտցեն թողութիւն: Քանզի հաճեալ Աստուծոյ ընդ այս նուիրումն տայ շնորհս եւ պարգեւս ապաշխարութեան, եւ զյանցանս եւ զմեղս եւս զմեծամեծս թողու: Ո՛վ սրջափ առաւել հզօրագոյնս ողորմութիւն հայցէ վասն մեր անպարտ արիւն Փրկչին քան զհարեղին որ վրեժս կարգայր ընդդէմ եղբայրասպանն Վայնի: Մարտոցեալ է+ ի նորոց կարանաց միջնորդն Յեսուս է- ի հեղոմն արեան նորս, որ առաւել խօսի +ամ զհաբեղն:

Աստուած սուրբ, դու յիրաւի եւ յարժանի զայրանաս ի վերայ մեղաւորաց, քանզի սիրոյ քում զոր սիրեցեր զնոսս, ապախտաւո-

բութեամբ արարին դարձուածս
 փոխարինի: Այլ որչափ եւ մե-
 ծամեծ իցեն յանցանք աշխարհի,
 սակայն մեծ եւս է պատարագն
 զոր ես յայսմ իսկ առաւօտու
 մատուցանելոյ եմ քեզ. Աւ-
 որպէս յանցանքն նոյնպէս է-
 նորհէն: Մատուցանեմ քեզ
 պատարագ յայսմ առաւօտու
 զնոյն ինքն զԱրդի քո զմիածին:
 Յոյժ իսկ սիրելի է քեզ պատա-
 րագս այս. եւ է իսկ բաւական
 հաշտ աննել զքեզ, եւ ածել
 յօժարեցուցանել զքեզ ի զթու-
 թիւն առ ամենայն թշուառա-
 կան մեղաւորս եւ առ այնոսիկ
 որք ոչն ճանաչեն զքեզ, եւ առ
 այնս՝ որք թէպէտ եւ ճանաչեն
 զքեզ, սակայն ոչ կամին սիրել
 զքեզ, եւ զրկեալ ի շնորհաց քոյ՝
 այնպէս կեանս կեանս: Տուր նոցա
 լոյս եւ զօրութիւն հանելոյ զան-
 ձինս ի ծանծաղ ի չուսուական

հանգամանաց անտի՝ յոր իբրեւ
 հարեալ ի կուրութենէ գասանին
 կործանեալ:

Վասն ամենայն մեղաւորաց ա-
 զաչեմ զքեզ, եւ առանձինն պա-
 ղատիմ վասն իմ՝ որ քան զայս
 առաւել ապախտաւոր եւ ան-
 շնորհակալու քում սիրոյդ եղէ
 եւ առաւել զայրացուցի զքեզ եւ
 անարգեալ անպատուցի զքեզ:
 Աղէ, թող ինձ, Աստուած
 սուրբ, վասն սիրոյ Յիսուսի
 Վրիստոսի զամենայն մեղս իմ,
 զճանունս եւ զմանունս. թող ինձ
 զքնաւ կարճմտութիւնս, զսառ-
 թիւնս, զանժուժկալութիւնս եւ
 զհամօրէն քայքայմունս մտաց եւ
 զանփութութիւն ի ժամ պա-
 տարագի, աստուածեղէն պաշ-
 տամանց եւ մտաւոր աղօթից:
 Յաւ է ինձ վասն ամենայն մե-
 զացս այսոցիկ. զի սոքօք զքեզ՝
 որ անեզր բարութիւն ես, թըշ-

նամանեալ զպարացուցի, որ յամենեցունց եւ առանձինն յինէն՝ որ քահանայս եմ, անվախձան իմն սիրով արժանի սիրելոյ ես:

Սիրեմ զքեզ, ո՞ անբաւ բաւութիւն. ի վեր քան զամենայն սիրեմ զքեզ, եւ խոստանամ քեզ եթէ կամիմ առաւել մեռանել, քան եթէ դոյզն ինչ իւրօք, որպիսի ինչ օրինակաւ եւ իցէ, կամակար զպարացուցանել զքեզ: Ո՞ Յիսուս, մահ քո եւ արժանիք քո յոյս իմ են: Ի ձեռն արժանեաց քոց ցանկամ եւ ակն ունիմ շնորհաց հաւատարիմ քեզ լինել, սիրել զքեզ ի վեր քան զամենայն ինչ եւ բայց ի քէն այլ ինչ ոչ սիրել:

Ով ամենասուրբ Մարիամ. լեր ինձ առընթեր քոյով օգնականութեամբ այժմիկ՝ զի երթամ մատուցանել զպատարազն մեծ:

Հիւզարարի:

Յամենայնի Բժայաբո՞ւր ու՞ր ու՞ր: — Օմնաւ ած եթէ զիւրաւ իմն լէ Մատուած աղանաց քահանայից, զոր ի ժամ սրբոյ պատարագին մատուցանիցեն: Տալ տայ նա յամենայն իսկ ժամանակի զշորհս իւր՝ որ արժանեօքն Վրիտաոսի խնդրիցին. բայց սակայն ի ժամ սրբոյ պատարագի, ասէ Ս. Ոսկեբերան, տայ Մատուած մեծաւ եւս յաճախութեամբ զխնդրուածս քահանայից. քանզի աղօթք քահանայից ի պատարագի՝ աղօթիւքն Յիսուսի, որ մանաւանդ քահանայն է՝ որ ի պատարագի աստ ինքնին իւրովի զանձն մատուցանէ առ ազգելոյ ի մեզ շնորհս, միացեալ ընթանան եւ հօրազոյն լինին:

Ժողովն Տրիդենտեան ասէ եւ

Թէ ժամն յորում պատարազն մատչեցի՝ է ժամն զիպող յորում Տէրն կայ եւ սպասէ ի վերայ աթոռայ շնորհաց իւրոց՝ յոր պարտիմք, որպէս յորդորէ զմեզ Առաքեալն, մեծաւ իմն համարձակութեամբ զիմել առ ընդունելոյ ողորմութիւն եւ գտանելոյ շնորհս. Մատթիոս-+ աչոս-հեպէ-համարչապիտ-նեամբ առաջն անո-ւոյ շնորհաց նորս, զէ ընկալոս-+ ողորմութիւն, եւ Գրիգոր-+ շնորհս ի որեւ ժամանակն օգնականութեան: Այլ եւ հրեշտակք, ասէ Ս. Ոսկերերան, կան մնան ժամու պատարազի, զի առատագոյն արգասեօք վասն մեր բարեխօս լինիցին: Եւ յաւերու եթէ զայն զոր ի ժամ սրբոյ պատարազի ոք ոչ ընկալաւ, յայլում ժամանակի զժուարաւ առնուցու:

Բարէ. որպիսի յաճախութիւնս շնորհաց վասն իւր եւ

վասն այլոց ընդունիցի քահանայն, յորժամ ի պատարազելն ի վերայ սեղանոյ մեծաւ համարձակութեամբ աղաչեցէ զՏէր: Մեծարոյ Հայն Անտոնիոս Առելեան յընկերութենէ բարեպաշտն Վաստակաւորաց ասէր. Յորժամ զնորհալան պարարտն մարտնեմ եւ զՅետոս Վրիստոս ի յետոս եւ ունեցեմ, ընդունեմ ի նմանէ զենչ եւ կամեցեմ:

Ս. Պաւղոս ասէ եթէ ի ձեռն Յիսուսի Վրիստոսի զընաւ մեծութիւն շնորհացն ընդունիմք, յորժամ նորին արժանեօքն ըզՀայր աղաչեցեմք. Յամենայնի մեծացարոս-+ դոս-+ նովա-... զէ դոս-+ մեծացեցեմ եւ մեծեմ-+ շնորհոս: Սակայն այս յայնժամ մանուանդ յանգ ելանէ, յորժամ քահանայն ի մատուցանելն զմիածին զՈրդին Աստուծոյ՝ պատուիցէ եւ ուրախ առնիցէ զնա:

Եւ եթէ Հայր զՈրդի զԵր զայս որ ի նուիրական խորհրդեանն պատարագիցի՝ մեզ պարզեւէ, զԼարդ մարթ իցէ նմա որ զԵր զմիածին զՈրդին ես մեզ՝ զամալ շնորհս ինչ։ Օ՛հա՛րդ ոչ նովահանդերչ զամենայն շնորհիցէ մեզ։

Եզնէկ եմ ես. զԼարդ կոյր եղէ ես ցայժմ։ Որչափ շնորհս, Աստուած իմ, իմով անփութութեամբ կորուսի. զի ի պատարագս զոր քեզն մատուցի, ոչ խնդրեցի ի քէն շնորհս ինչ։ Բայց քանզի լուսաւոր արարեր դու զիս այժմ, ոչ եւս յայսմ հետէ անփոյթ եղէց։ Ահա մաւաւորեմ զազաչանս իմ, Հայր յաւիտենական, ընդ ազաչանս Յիսուսի Քրիստոսի, եւ վասն սիրոյ Որդւոյ քո զոր ես յայսմ առաւօտու քեզ ընծայեմ, արժանի համարեալիր, աղաչեմ զքեզ պաղատանօք, նախ տայ

թողութիւն համօրէն մեղաց իմոց, յորոց վերայ ցաւիմ եւ ստրջանամ յամենայն սրտէ. եւ ապա տուր ինձ ճանաչել եւ ի միա առնուլ եթէ որչափ արժանի ես դու սիրելոյ, եւ թէ զԼարդ անվախճան իմն պայմանաւ պատասպան իցեմ ես սիրել զքեզ վասն բարութեան քո եւ սիրոյն զոր ունիս առ իս։ Տուր ինձ զութիւն ի բնաւ իսկ յօժարութենէ առ երկրաւորականս զանձն անջատելոյ, եւ յայն իմն ի կիր արկանելոյ զսիրտ իմ՝ զի զքեզ միայն որ անեղբ բարութիւն ես, սիրիցեմ՝ որ այնչափ սիրելցեր զես։ Գարձեալ խնդրեմ ի քէն լոյս վասն ամենեցուն այնոցիկ որք զքեզ ոչ ճանաչեն, եւ զրկեալք ի քումէ բարեկամութենէ այնպէս կեանս կեան։ Շնորհեաւ ամենեցուն զպարզեւս շնորհաց քոց։ Տուր ամենեցուն զպարզեւ երկե-

զն քոյ սրբոյ: Ո՛ր անբաւ սէր Աստուծոյ խմոյ, արա զն ծանխցեն եւ սիրեացեն զքեզ ամենքին:

Եւ դու, սիրելի Փրկիչ իմ, քո՛ արա զնս ամենեւին, մինչ չեւ մեռեալ իցեմ. եւ մի թողուր եթէ մեկնեցայց երբեք ի քէն: Ահա, Տէր Յիսուս, ցորչափ իցեմ կենդանի՛ ի սմին վաանդի կամ: Ոչ կորուսից զքեզ յայսմ հետէ: Աղէ աղաչեա դու զչայր, զն առաքեսցէ ինձ մահ մինչ չեւ հեռացեալ իցեմ ի քէն: Աղաչեա զնս՝ ցանկ ներքին իմն կապանօք սիրոյ յօդեալ միացուցանել զնս ընդ քեզ որ այդպէս պարտապան կացուցեր զնս սիրելոյ զքեզ: Տէր Յիսուս, դու ես սէր իմ եւ յոյս իմ: Արա զն քանիցս անգամ թէ տեսանիցեմ զքեզ ի վերայ սեղանոյ, ասացից յամենայն սրտէ զոր Ս. Փիլիպպոս՝ Աւերեան, մինչ զքեզ ի նուիրական

խորհրդեանն տեսանէր, գոչէր. Ահա սէր իմ. աւասիկ ասա է սէրն իմ բովանդակ:

Ամենասուրբ Մարիամ, եւ դու եւս աղաչեա վաան իմ: Ահա քահանայ եմ ես. արա քոյով բարեխօսութեամբ, զն եղէց այնպիսի՛ որպիսի արժանն եւ պարտիցէ լինել քահանայի, այս է՛ լինել բաժին եւ ժառանգութիւն ողջոյն Յիսուսի Վարխատսի:



Ուրբաթ:

Առէ՛ք կերայք. այս է ճարձին ի՞ճ: — Աճ զմտաւ, զի քահանայ որ զտուրբ պատարագն ջերմ աստուած պաշտութեամբ մատուցանիցէ, նովաւ առանձինն իմն օրինակաւ ի սրբութիւն անդր ժամանէ: Վանդի ի նուիրական պատարագի անդ առանց ուրուք միջնորդի՝ յանդիման լինի աստուածեղէն սրբութեանն. ունի զՅիսուս ի ձեռս իւր. կարէ ընդ նմա իբրեւ ընդ բարեկամի եւ ընտանեոյ խօսակից լինել առանց ինչ կարօտ միջնորդիւ լինելոյ ընդ իւր եւ ընդ Յիսուսի. կարօղ է նա զամենայն առնել նմա յանձն, եւ ասել զոր ինչ եւ կամիցի:

Եւ տուեալ լինի նմա իշխասնութիւն կերակրել ամենասուրբ մարմնովն Վրիստոսի իւրով իսկ ձեռամբն, եւ արբենալ նորա պա-

տուական արեամբն. զի բուն քահանայք էին որոց ասաց Վրիստոս՝ Առէ՛ք կերայք. այս է ճարձին ի՞ճ: Բնդունել ընդունին եւ ժողովրդականքն զնուիրական խորհուրդն, սակայն չէ նոցա համարձակ առնուլ զնա յիւրեանց ձեռս եւ ընդունել զխորհուրդն ըստ իւրեանց հաճոյից. ի ձեռաց քահանայից, եւ այն՝ յորժամ հրաման տան նոքին իսկ քահանայքն, կարօղ են ընդունել զնա: Ե՛յլ քահանայն իշխէ առնուլ զՅիսուս ի ձեռս իւր եւ ի ներքս ի սիրտ իւր՝ քանիցս անգամ թէ զտուրբ պատարագն մատուցանինէ: Միով բանիւ. ի ձեռս քահանային են փականք աստուածեղէն զանձուց, եւ ըստ կամաց իւրոց բաւական է նա վարել նոքօք: Վանդի յամենասուրբ խորհրդեան անդ գտանին, որպէս ասէ իսկ Ս. Ոսկերերան, ամե-

նայն դանձք աստուածեղէն բարութեանն. «Յորժամ հաղորդութիւն ասիցեմ, զբնաւ իսկ դանձա աստուածեղէն մարդասիրութեանն իմանամ», : Ապա ուրեմն յորժամ քահանայն պատարադիցէ, թուի իմն եթէ ճշմամբ աստուածեամբ տէր իցէ Յիսուսի որ ի նուիրական խորհրդեանն դտանի. «Ողջոյն իսկ Աստուծով մեծատուն է», : Ապա Վրիստոս ողջոյն իսկ ստացուածք քահանայից է: Բայց սակայն քանի քահանայք իցեն, որ ամենեւին իսկ նորա ստացուածք իցեն: Ո՛վ Աստուած. որպիսի ինչ իցէ սէր իւրաքանչիւր ի նոցանէ առ իւրեանց փրկիչն՝ որ այնչափ սիրեաց զնոսա եւ ամբարձեալ բարձրացոյց: Չսիրիցէ զքեզ, Տէր Յիսուս, անանկ եւ աղքատ որ շինական կամ հովիւ մի օրիորդ տառապեալ՝ առաւել քան զբա-

ղում քահանայս: Աւ բաբէ. որպիսի ցաւք, քանի տանջանք չիցեն պատրաստեալք ի դժոխս այնմ քահանայի՝ որ դատապարտ ի նոյն առնիցի: Մերժեացի նա յաւտեանս ի Վրիստոսէ Յիսուսէ, որ ի վերայ երկրի յամենայն իսկ ժամանակի նմա մօտ կայր, եւ էր իսկ նորա ստացուածք ամենեւին:

Միրելի Յիսուս, դու մատուցեր զանձն քո ողջակէզ ի խաչին առ ընծայելոյ յինէն ի վերայ սեղանոյ, եւ առ արբուցանելոյ զնա աստուածեղէն արեամբն քով: Այո, յորժամ կացուցեր դու զնա քահանայ, զանձն քո ողջոյն ինձ ետուր. պարգեւեցեր զքեզ ինձ ամենեւին. այնպէս զնա քանիցս անգամ թէ զուրբ պատարազն մատուցանիցեմ, իցեմ ձեռնհաս յիմ ձեռս առնուլ զքեզ, եւ մարմնով քով կերակրել:

Միրելի Փրկիչ իմ, յաւել յիս

Հաւատաս: Տուր ինձ ի միտ առեալ ճանաչել եթէ դու ինքնին ես՝ յորժամ զքեզ ի սուրբ Խորհրդեան ծածկեալ ի ձեռս իմ ունիմ, յորժամ դու ի վերայ սեղանոյ մօտ ինձ գտանիս, յորժամ զնիցեմ զմարմին քո ի վերայ լեզուի իմոյ, յորժամ շրթունք իմ հուսկ ի քո պատուական արիւնդ լեցին: Օ ինձրդ իցէ մարթ եւ հնար, զի ոչ սիրով քով վառեալ բորբոքիցիմ՝ մինչ ածիցեմ զմտաւ եթէ դու որ Աստուած իմ ես, հաւանիս առնուս յանձն՝ զի այսպիսի մտերմութեամբ ընդ քեզ զնացից, եւ արարից զքեզ ինձ կերակուր եւ բնակիլ:

Աչ շատացար դու զընաւ արիւն քո եւ զկեանս առ սէր իմ մատուցանել պատարագ ի վերայ խաչի, այլ եւ կամեցար եւս զի արբից ես զայս զքո զվասն իմ

նուիրեալ արիւն. որպէս զի կատարեալ միացեալ գտայց ընդ քեզ, եւ մի ինչ եղէց ընդ քեզ: «Արդեամբք իսկ մարմին իւր արար զմեզ», առ Ս. Ոսկեբերան:

Յամենայն սրտէ խնդրեմ ի քէն, Աստուած իմ. հաս ինձ ի թիկունս լուսով քով եւ զօրութեամբ, զի առ սէր քո մեծ՝ զոր ինձն ընծայեցուցեր, յամենայն կեանս իմ շնորհակարու զանձնցուցից: Անջատեա զիս յերկրաւորացս, արա զի մի այսուհետեւ արդել առաւելութեան շնորհացն լինիցիմ, զոր դու բաշխեալ տաս այնմ՝ որ ընդունիցի զքեզ մեծաւ եռանդմամբ յամենասուրբ Խորհրդեան: Աիրեմ զքեզ, Յիսուս, որ առ սէր իմ մեռար, եւ կամեցար կերակուր իմ լինել: Հայր յաւիտենական, վասն արժանեացն Յիսուսի զոր ես յայսմ առաւօտու քեզ մատուցանեմ,

տուր ինձ զայն ամենայն շնորհս
որոց կարօտս եմ առ քո լինել ա-
մենեւ ին՝:

Եւ դու, ո՛վ ամենատուրք
Աոյս Մարիամ, աղաչեա վասն
իմ՝:



Ծաղաթ:

Փոփա էջ, զի այսօր ի Կան
Կան արժան է ինչ ազանել: —
Եյնպէս իմն համարեալիք եթէ
եւ ցքեղ իսկ ասիցէ Յիսուս
յայսմ առաւօտու զայն բան, զոր
երբեմն առ Օակքէոս բարբառե-
ցաւ. Երի եկ ի սեղան, զի կամ
է ինձ այսօր ի տուն հողոյ քո
մտանել, տալ նմա կեանս, եւ ի
վերացն բժշկել, եւ վառեալ բոր-
բոքել զնա սիրով իմով: Վան-
զի սոքին իսկ են արդիւնք աստու-
ածեղէն Խորհրոյն: Եյս է հացն
որ կեանս տայ հողոյ. Էացն զար
էս Կայ, մարմնն իմ է. զոր էս Կայ
վասն կենաց աշխարհի: Վեղ եւ
դարման է սա որ ազատս ի մեղաց
կացուցանէ զմեզ, եւ զգուշա-
ցեալ պահէ ի մեղաց. դեղթափ
է՛ որով զերժանիմք ի հանապա-
զօրեայ յանցուածոց, եւ ի մահու-

չափ յանցանաց զգուշացեալ պահիմք: Եւ սա հուր, որ զսիրտս սիրով սրբով վառեալ բորբոքէ. այնպէս զի մեք, որպէս Ոսկեբերան ասէ, եթէ ի մեր կուսէ չղնիցեմք ինչ արգելք, դառնայցեմք ի սեղանոյ անտի « Էրացանք բոցաշունչք, եւ ահագինք սատանայի, Բայց աղէ, Տէր. զի է զի այնչափ անչափ քահանայք որ այդուն այդուն այտու երկնաւոր հացիւ անանին, եւ փոխանակ յաստուածեղէն սիրոյ անտի վառեալ բորբոքելոյ՝ հանապաղ յերկրաւորս հարեալ հատեալ են, ցանկ նոքիմք կամակար ներելի մեղօք ի սեղան անդր մատչին: Եւտի իսկ, զի առանց իրիք նպատակի եւ փափաքանաց սրբութեան, այլ լոկ վասն անձինն շահու կամ առ սովորութեան ի պատարագ անդր մատչին. եւ նմին իրի իսկ հանապաղ զնոյն յանցանս յանցանեն,

եւ ի նոյն մինչեւ ի մահ հանապազորդեն, եւ աստի անդր անցանեն՝ երթալ տալ համարս Յիսուսի վասն իւրեանց մեղին եւ անկարգ զնացից: Ո՛ր քահանայդ իմ, եթէ եւ դու ի սոցա համարի իցես, զիտաաջիր զի հացս այս երկնաւոր ոչ միայն սուրբ զքեզ չառնիցէ, այլ եւ քոյով իսկ յանցանօք՝ պատժապարտ առաջի աստուածեղէն արդարութեանն կացուցանիցէ: Ուղղեաջիր զանձնքո. զմտաւ ած եթէ մահ քեզ հանապաղ մտաագոյնս մերձենայ: Վախեաջիր տեսչիր եթէ ոյք իցեն յօժարութիւնքն եւ թերութիւնք, որ արգել եւ խափան լինին քեզ յառաջադէմ յաստուածեղէն շնորհան լինելոյ, եւ հանմեժեա զնոսին ի բաց: Եւ զմտաւ եթէ քահանայ ես դու. խոկաաջիր զի Եստուած ընտրեաց զքեզ յիւր սիրելի, եւ չէր իսկ ձեռն-

Հաս մեծ ինչ քան զոր արարն՝
առնել քեզ:

Ո՛ւ Աստուած անվախճան փա-
ռաց, դու կամիս մտեալ բնակել
յիմում արտի յայսմ՝ առաւօ-
տու: Բայց պարտի սուրբ լինել
բնակութիւնն, յոր դուզ մտանե-
լոց ես. Տան քո՛ւմ լայելէ սբո-
ւին, Տէր: Օխորդ կարեմ՝ յիս
ընդունել զքեզ ես, որ լցեալս
եմ թերութեամբք եւ յանցա-
նօք: Տէր, չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտցես:

Ով Փրկիչ իմ, եթէ այժմ
առաջի աթոռոյ արդարութեան
քո հասանէր ինձ երևել, զի՛նչ
համարս իշխէի տալ քեզ վասն
այնչափ անչափ պատարագացն
զոր մատուցի, եւ վասն ամացն
զորս կեցի՛ յորմէ հեռե քահա-
նայս եմ: Ով Տէր, շնորհեա
ինձ ժամանակ, եւ մի մտաներ
ընդ իս ի դատաստան. Սի՛ Երա-

նէր ի դատաստան ընդ Ժառայի
քո՛ւմ: Վասն զթութեան քո
ժուժեա դու ինձ սակաւիկ մի.
Թոյլ արա ինչ սակաւիկ յի համո-
ղել, յինչ չե՛ երկեալ եյե՛մ՝ ու-
րի ոչ դատանայե՛մ: Չգեալ եր-
կարեսջիր սակաւիկ մի զժամանակ
կենաց իմոց, զի զապախտաւորու-
թիւն իմ՝ զոր քեզն ցուցի, լալ
եւ աշխարել մարթացայց: Գու
ընտրեցեր զիս քեզ ի քահանայ.
այլ որպիսի գնացս ցուցի ես
ցայժմ: Այնչափ անչափ պատա-
րագօք կարէի սիրով քով սրբով
ամենեւին իսկ վառեալ բորբո-
քել, համակ անարատ համօրէն
սուրբ լինել: Աս ինձէն եմ պատ-
ճառք՝ ոչ դու, զի արգելի զշնորհս
քո: Չէին այնպէս յարդարեալ
վարք եւ գնացք իմ, զի զքեզ
պատուեալ մեծարէի. այլ զնո-
րին հակառակն արհամարհեալ
անպատուեցի զքեզ առաջի երկ-

նի եւ երկրի: Գու հաներ զես
 յաշխարհէ, այլ ես առաւել
 քան զաշխարհահանան սիրեցի
 զաշխարհ: Ողորմեա ինձ, Աստու-
 ած իմ, ողորմեա ինձ. մի թո-
 ղուր զես: ահա կամիմ ուղղել
 զես: Յաւէ ինձ վասն ամենայն
 թշնամանաց, որովք զքեզ թշնա-
 մանեցի: Ակիզեն արարից այտու-
 հետեւ ճշմարտիւ սիրել զքեզ,
 եւ յայսմ առաւօտու յորում
 հանդերձեալ եմ ընդունել
 զքեզ միւսանգամ, սկիզբն արա-
 ըից սիրել: զքեզ:

Սիրեմ զքեզ, Աստուած սրաի
 իմոյ. սիրեմ զքեզ, Փրկիչ իմ,
 որ առ ի զես փրկելոյ եւ առնելոյ
 քեզ քահանայ՝ զկեանս քո ե-
 տուր: Տէր, չեմ բաւական եթէ
 ընդ յարկաւ իմով մտցես, այլ
 ասա բանիւ միայն եւ բժշկեսցի հո-
 զի իմ: Թող ինձ, Յիսուս, եւ
 բժշկեա զես: Անջատեա զես յաշ-

խարհէ, եւ միացո զես ընդ քեզ
 սերաիւ: Տուր զե յայսմ հետեւ
 վարք իմ եւ զնացք այնպէս իսկ
 լեցին յարգարեալք՝ որպիսի ինչ
 վայել իցեն կարգի քահանայու-
 թեան յոր զեսն ընարեցեր: Աի-
 բելի Փրկիչ, արժանիք քո յոյս
 իմ են: Հայր յաւիտեանահան,
 նուիրեմ քեզ զՅիսուս Վրիստոս
 յայսմ առաւօտու, որպէս զե ա-
 րացես դու՝ զե քեզ ապ զես ա-
 մենեւին:

Ամենասուրբ Այս Մարիամ,
 աղաչեա զՅիսուս վասն իմ:



Բ.

Ի Գ Ո Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ս. Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի

Կիրարակի:

Արևելի Յիսուս, Քրիկի իմ եւ
Աստուած. յառաջ քան զին-
առեցանելն զսուրբ պատարազն
յորժամ քեզ երկիր պագանէի,
զայն իմն յուշ ածէի եթէ որպի-
սի շքեղն փառաւորութեամբ
բազմեալ իցես յերկինս ընդ աջմէ
ձօր. այժմիկ երկիր պագանեմ
քեզ՝ իբր զն եկիր ի սիրտ իմ,
Թաքուցեալ ընդ զոյզն կերպա-
րանօք հացի եւ զինւոյ, եւ այն-
պէս լեալ կերակուր եւ ըմպելի
հոգւոյ իմոյ:

Ողջամբ դարուս քո ի հոգի
իմ, Տէր. գոհանամ զքէն վասն
դարստեանդ յամենայն սրտէ. եւ ո՞
տայր ինձ ըստ արժանւոյն լինել
քեզ շնորհակալ, իբրեւ զինա-
կան օք, որոյ չկարացեալ շնոր-
հակալ լինել Թագաւորին իւ-
րում. որ ի հիւզ անդր նորա այց
արարեալ իցէ, չեցէ այլում իմիք
ձեռնհաս, բայց արկանել զանձն
յոսս նորա, եւ պագանձեալ առ
անհնարին սքանչանացն, հիանալ
զարմանալ մեծարել եւ բարձր
առնել զայնպիսի մեծ-շնորհ. սոյն
օրինակ եւ ես չեմ իմիք ձեռնհաս,
եւ արկանեմ զանձն իմ յոսս քո,
ո՞ աստուածեղէն Թագաւոր իմ
Յիսուս, երկիր պագանեմ քեզ
ի խորոց անտի անարժանութեան
իմոյ, եւ խառնեմ զայս զիմ եր-
կրպագութիւն ընդ երկրպագու-
թեան ամենասուրբ Առսին՝ որով
յորժամ յղացաւն զքեզ յամե-

նասուրբ արդանդին երկիր եզազ քեզ, եւ յանկամ սիրել զքեզ որպէս նայն սիրեաց:

Ո՛ Փրկիչ իմ, դու յայսմ ի սմին առաւօտու ցուցեալ զանձն քո հնազանդ բանից իմոց՝ իջեր յերկիր, եւ ետուր զքեզ ի ձեռս իմ. եւ ես քանիցս անգամ ստունգանեցի պատուիրանաց քոց, եւ ատախտաւութեամբ թիկունս դարձուցի ի քէն, եւ զշորհս եւ զսէր քո մերժեցի: Յուսամ, Յիսուս, եթէ արդէն իսկ տուեալ իցէ քո ինձ թողութիւն. սակայն եթէ առ իմոց յանցանաց չիցէ քո թողեալ ինձ տակաւին, թող ինձ աղաչեմ ի սմին առաւօտու, զի յաւիմ յամենայն սրտէ վասն զանապուցաներջ իմոց զքեզ, ո՞ անեզր բարութիւն:

Ո՛ տայր եթէ ջանկ սիրեալ էր իմ զքեզ, Յիսուս, եւ կամ գոնեա յօրէ յօրմէ հետէ զառաջին

պատարագն իմ մատուցի՛ վաւեալ բորբոքէի միշտ սիրով քով: Գու ի միջոյ այնչափ բիւրաւորաց ընտրեցեր զես քեզ ի քահանայ, եւ խառնեցեր զես ի սիրելեա քո. եւ զինչ ինչ քան զայս առաւել առնել էր քեզ առ ի շահելոյ զսէր իմ: Եւ սակայն եւ ժամանակ եւս տաս ինձ առնել զայն զոր յայժմ ոչ արարի. եւ ես սիրեցից զքեզ յայսմ հետէ ոգւով չափ:

Ոչ. յայսմ հետէ ոչ ինչ այլ ինչ սէր որ ոչ ի քեզ հայիցի՛ դրաւեսցէ զսիրտ իմ, որ այնչափ պարաւանդեաց զես սիրել զքեզ:

Աստուած իմ եւ ամենայն ինչ: Չի՞նչ պիտոյ իցեն ինձ, Աստուած իմ, ամենայն մեծութիւնք եւ փառք եւ խնդութիւնք աշխարհի. դու ես ամենայն ինչ իմ: Գու լիջեր յայսմ հետէ մի միայն բարութիւն իմ, մի միայն

սէր իմ: Գոչեցից առ քեզ ընդ սրբոյն Պաւղէնոսի «Առցեն անձանց իւրեանց մեծատունք զմեծութիւնս իւրեանց, թագաւորք զիւրեանց թագաւորութիւնս. ինձ Վրիստոս փառք եւ արքայութիւն է,): Այո. վայելեացեն իշխանք եւ մեծատունք աշխարհի՝ ի գանձս եւ յիշխանութիւնս իւրեանց. մեծութիւն իմ եւ փառք դու միայն ես, Յիսուս:

Հայր յաւիտեանական, վասն սիրոյն զոր սիրեցեր զՍրբի քո՝ զոր ի սմին առաւօտու քեզ մատուցի եւ ընկալայ ի սիրա իմ, շնորհեա ինձ հանապազորդութիւն ի սուրբ շնորհս քո եւ զպարգեւ սիրոյ քո սրբոյ: Ի քեզ ապաստան առնեմ զամենայն ազգականս իմ, զբարեկամս եւ զթրշնամբս: Վեզ յանձն առնեմ զոտաւարեալ հողիս քաւարանի եւ զընաւ չու առական մեղաւորս:

Ամենասուրբ Մարիամ, Մայր իմ, առ ինձ սուրբ հանապազորդութիւն եւ սէր առ Յիսուս Վրիստոս:

Զուշին որ զին՝ աբս հանապազ յեթ Պատարագի:

Հողի Վրիստոսի, սրբեա զիս.
Մարմին Վրիստոսի, պահեա զիս.
Երիւն Վրիստոսի, արբո զիս.
Ջուր կողին Վրիստոսի, լուա զիս.
Չարչարանք Վնի, զօրացո՛ զիս.
Բարերար Յիսուս, լուր ինձ.
Ի վէրս քո ծածկեա զիս.

Մի թողուր մեկնել

ինձ ի քէն. երեց՝ երէն-Սէր:

Ի չարասէր թշնամոցն զերծս զիս.
Ի ժամու մահուան իմոց կոչեա զիս.
Եւ հրամայեա ինձ դալ առ քեզ,
Օրհնել զքեզ ընդ սուրբս քո
Եւ ընդ հրեշտակս քո
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Երկուշաբաթի:

Ո՛ր անեղբ բարութիւն, ո՛ր սէր
անասհման. Աստուած զանձն ինձ
եւ տ ամենեւին, եւ եղեւ իմ ժա-
ռանգութիւն ի գլխովին: Ի մի
վայր ժողովեաջիր, անձն իմ, զա-
մենայն զէր քո, կապեալ զանձն
քո նոյվին սիրով անձկագոյնս ընդ
Տեառն քում որ վասն այնորիկ
միայն եկն առ քեզ, զի զանձն
իւր միացուցէ ընդ քեզ եւ սի-
րեցի ի քէն:

Փրկիչ իմ սիրելի. առ քեզ
կամ. զքեւ ո՛ր կեանք իմ եւ ա-
մենայն ինչ իմ, փարիմ. մի մեր-
ժեր զիս ի բաց: Աս չուսուականս
եւ ապաժաման, ես ցայժմ մեր-
ժեցի զքեզ ի հոգւոյ իմմէ, եւ
անջատեալ բաժանեցի ի քէն
զանձն իմ. սակայն յայսմ հետէ
բիւր անգամ զկեանս իմ առնում
յանձն կորուսանել քան զքեզ,

ո՛ր անեղբական բարութիւն: Մո-
ռա, Տէր, մնա զթշնամանն
զմեծամեծս որովք դառնացուցի
զքեզ, եւ թող ինձ: Յաւ է ինձ
յամենայն սրտէ. եւ ո՛ր տայր ինձ
ի ցաւոց աստի մեռանել:

Թէպէտ անչափ դառնացուցի
ես զքեզ, սակայն եւ այնպէս դու
ցանկ հրամայես ինձ սիրել զքեզ՝
յորժամ ասիցես եթէ Արեւոյն
զՏէր Աստուածս յամենայն սր-
տէ սո՛ւղ,

Բարէ. ո՛ր եմ ես, Տէր, զի այն-
չափ ցանկաս թէ սիրեցից զքեզ:
Այլ քանզի ցանկանաս, կատա-
րեցից զկամս քո: Գու վասն իմ
ի մահ մատնեցար, դու ետուր
ինձ ի կերակուր զամենասուրբ
մարմին քո. եւ ես ահա թողում
զամենայն, հրաժարիմ յամենայ-
նէ, եւ փարիմ զքեւ զիրկրնդ-
խառն, փրկիչ իմ սիրելի. Ո՛վ
ձեկնեացէ զես ի սիրոյն Վրէստոսի:

Եւ զն որ սիրեցից, փրկիւ իմ,
 եթէ զքեզ ոչ սիրիցեմ որ զեղեց-
 կութիւն անասհման ես եւ անեղբ
 բարութիւն եւ արժանի անպայ-
 ման սիրոյ: Օ՛րհնէ հայ եմ բնա-
 յերկնս, եւ ի +էն զէնչ խնդրեցից
 յերկն. Աստուած սրբի իմոյ, Բա-
 ժին եմ Աստուած յաստուածն:
 Այ՛, Աստուած իմ ոչ յերկնս
 եւ ոչ յերկրի մարթ է ինձ մեծ
 եւս բարութիւն քան զայս դաս-
 նել, եւ ոչ զոք որոյ սիրեալ իցէ
 զնա՝ առ աւել քան զքեզ: Անեպէ
 սրտայտութիւնս: Ո՛ Յիսուս, լուր
 ինձ, եւ ի սմին առաւօտու սասա-
 ջիր զսիրտ իմ բովանդակ. քեզ
 տամ զսիրտ իմ բովանդակ. առ
 զայն յաւիտեանս. առ ամենեւին:
 Հան մերժեալ ի նմանէ ի բաց զա-
 մենայն սէր, որ ոչ ի քեզ հայի-
 ցի: Օ՛քեզ միայն ընտրեմ ինձ ի
 ժառանգութիւն եւ ի մեծու-
 թիւն. Աստուած սրբի իմոյ, Բա-

ժին եմ Աստուած յաստուածն:
 Տուր զե հանապազ ձայն բար-
 ձեալ խնդրեցից ի քէն ընդ Ս.
 Իդնատեայ Ղոյոյայ, եւ աղաչեցից.
 “Օ՛սէր քո միայն հանդերձ շնոր-
 հօք քովք տուր ինձ, եւ ահա
 մեծատուն եմ ես բաւականն,”:
 Տուր ինձ զսէր եւ զշնորհս քո,
 այս է՝ արա զե սիրեցից զքեզ եւ
 սիրեցայց ի քէն. յայնժամ եմ
 իսկ մեծատուն բաւականն, եւ
 բնաւ այլում իմիք ոչ ցանկացայց
 եւ ոչ փափաքեցից:

Բայց դու ճանաչես զտխարու-
 թիւն իմ, եւ զիտես եթէ բա-
 զում անգամ ապախտ ալ տոի
 զքեզ: Այր ինձ ձեռնտու շնոր-
 հօք քովք եւ մի թողուր բաժա-
 նել միւսանգամ ի սիրոյ սրբոյ
 քումէ. “Մի թողուր անջատել
 ինձ ի քէն,”: Այ՛ ժմիկ աղաղակեմ
 առ քեզ, եւ տուր ինձ շնորհս զի
 զբանս զայտոսիկ ցանկ ի սրտի եւ

ի բերանի կրիցեմ. «Մի թողուր,
մի թողուր մեկնել ինձ ի քէն»,:

Ամենատուրք Այս Մարիամ,
յոյս իմ. առ ինձ զայս երկուս
շնորհս յԱստուծոյ, զտուրք հա-
նապազորութիւն եւ զսէր սուրբ,
եւ ոչ այլ ինչ ինդրեցից ի քէն:



Երեքշաբաթի:

Վայ ինձ. եւ զհարզ մարթ եր
ինձ այնպէս բազում անգամ մե-
ղօք զայրացուցանել զքեզ, զի-
տերով իսկ եթէ քանի անհնարին
թշնամանս հասուցանեմ քեզ
մեղօք: Վասն արժանեաց չարչա-
րանաց քոց աղաչեմ զքեզ, հա-
ճեաց շնորհել ինձ եւս քան զեւս
կապել ընդ քեզ սիրով քով
սրբով, եւ մի դառնացուցիչ հոսն
ժանաահոտ իմոց յանցանաց հե-
ռացուցէ զքեզ յինէն: Վոյս
սուր, աղաչեմ զքեզ, զի տակաւ
քաջ եւս խելամուտ եղեց եթէ
դու ես գլխաւոր բարութիւն եւ
արժանի համօրէն սիրոյ իմոյ, եւ
թէ ըստ չափ անդր սիրեցեր դու
զիս:

Յանկամ, Յիսուս, զանձն իմ
վասն քո, որպէս եւ դու վասն իմ
զանձն քո ողջոյն մատուցեր, նոյն-

պէս հասնել բովանդակ յողջակէզ: Գու մեծաւ իմն սիրով եւ խնամօք ձգեցեր զիս առ քեզ. մի թողուր, աղաչեմ, զի միւսանդամ հեռացայց ի քէն: Սիրեմ զքեզ, Աստուած իմ, եւ ցանկ իսկ սիրեցից զքեզ: Աւ զհարզ հնար իցէ ինձ այսուհետեւ զի ծանեայ զսէր քո, մերժեալ ամենեւին յերեսայ քոց կապուս կողոպուս ի շնորհաց քոց կեանս կեալ:

Շնորհս մատուցանեմ քեզ զի երկայնամիտ եղեր ինձ մինչդեռ Տեառնդ յաչաց ելեալ էի, եւ այժմ տաս ինձ ժամանակ առ կարող լինելոյ սիրել զքեզ: Աթէ մեռեալ էի յայնժամ, չկարէի այժմ սիրել զքեզ: Աւ քանզի դեռ եւս կարեմ սիրել զքեզ, վասն որոյ սիրեցից, Յիսուս, որչափ յիմում կարի իցէ, եւ աւրարից զամենայն առ ի հաճոյ լինելոյ քեզ: Սիրեմ զքեզ, բա-

րութիւն անբաւ, սիրեմ զքեզ առաւել քան զիս. եւ առ սէր քո տամ քեզ զմարմին իմ եւ զհոգի եւ զամենայն կամս իմ: Արդ տուր հրաման, Տէր, որպէս եւ քեզ հաճոյ իցէ. մտապեւր ընդունիմ զամենայն ինչ: Շատ իսկ եւ բաւական է ինձ եթէ զայն ինձ շնորհիցես զի սիրեցից զքեզ, այլ ինչ ոչ խնդրեմ ի քէն: Տուր ում եւ կամիցիս զմեծութիւնս աշխարհի. ես այլում իմիք ոչ ցանկանամ, այլ ինչ ոչ կամիմ բայց զսուրբ հանապազորդութիւն ի շնորհս քո եւ զսուրբ սէր քո:

Հայր յաւիանական, ի խոստումն Արդւոյ քո ապաստան՝ որ ասէ. Անն ասեմ ասեմ յեզ, զի զոր ինչ խնդրեցէ՝ ի Հօրէ իմէ յամուսն իմ ասցէ յեզ, խնդրեմ յանուն Յիսուսի Քրիստոսի զշնորհս հանապազորդութեան եւ զշնորհս սիրելոյ զքեզ յամենայն սրտէ,

եւ յօրէ աստի կատարեալ իմն օրինակաւ կատարելոյ զկամս քո: Ո՛ Յիսուս, դու զանձն քո վասն իմ պատարագեցեր բովանդակ, եւ պարգեւեցեր ինձ, զի եւ ես զանձն իմ քեզ յանձն առնիցեմ, եւ զամենայն կամս իմ քեզ մատուցանիցեմ, եւ լսեմ զճարբառ քո եթէ Տոբ ցիս, որբեակ, զսիրոյ քո, ահա մատուցանեմ քեզ զսիրս իմ եւ զկամս. եւ երկոքին եւս քեզ մատուցին եւ քո լիցին բովանդակ: Աւ սակայն դու զիսեւ թէ զիարդ տկար իցեմ. օգնեա ինձ եւ մի թողուր՝ զի միւսանդամ յետս առնուցում զկամս իմ, եւ դառնացուցանիցեմ զքեզ: Մի, մի թողուր. այլ շնորհեա՛ զի ցանդ սիրեցից զքեզ, եւ որպէս պարսն իցէ քահանայի՛ այնպէս սիրեցից. եւ արա զի զոր օրինակ Որբի քո յաւանդել անդ զորի իւր ասեր, Ամենայն նալ կատարեալ է, զնոյն

օրինակ եւ ես երբեմն ի ժամ մահու իմոյ կարիցեմ ասել եթէ յօրէ աստի զամենատուրբ կամս քո կատարեցի: Արա, աղաչեմ, զի յամենայն փորձութիւնս եւ ի վտանգս դառնացուցանելոյ զքեզ մի մոռացայց ի քեզ լինել ապաստան, եւ աղաչեցից զքեզ օգնել ինձ յանուն արժանեաց Յիսուսի Քրիստոսի:

Ո՛ ամենատուրբ Այս Մարիամ, առ ինձ զայս շնորհս, զի ի փորձութիւնս ցանդ յԱստուած եւ ի քեզ արարից զանձն իմ ապաստան, որ կարողդ ես ամենայնի առ Աստուծոյ:



Չորեքշաբաթի:

Տէր իմ Յիսուս, տեսնեմ
թէ որչափ ինչ արարեր եւ կրե-
ցեր առ ի շարժելոյ զեւ սիրել
զքեզ. եւ ես ցանկ յետին իմն ա-
պախտաւորութեամբ անշորհա-
կալու քեզ եղէ. քանիցս եւ վասն
չնչին ինչ հաճոյից եւ առ հար-
կանելոյ զփափաք տարապարտ կա-
մաց անձին իմոյ զշորհ քո ետու
վտարանդի, եւ զամենայն պատիւ
եւ զմեծարանս երեսաց քոց ա-
ղարտեալ ի բաց ընկեցի: Ամենայն
արարածոց՝ յորոց բարիս ինչ
գտեալ էի, մեծաւ վութով եւ
բազում հողաբարձութեամբ ե-
ղէ շորհակալ, քեզ միայն գաայ
ապախտաւոր: Աստուած իմ սի-
րելի, շորհեա ինձ թողութիւն.
ցաւեն ինձ մեղք իմ անհնարին.
յուսամ եթէ տացես ինձ թողու-
թիւն, զե զու անեզր բարութիւն

եւ: Եթէ չէիր դու բարութիւն
անսահման, չէր ինձ մարթ բնաւ
ունել յոյս ակնկալութեան, եւ
ոչ իշխել խնդրելոյ ի քէն ողոր-
մութիւն:

Գոհանամ զքէն, սէր իմ, զե
ոչ որպէս էի իսկ արժանի քարա-
վէժ արարեր զեւ ի դժոխս, այլ
կացեր մնացեր դու ինձ այսչափ
ընդ երկար: Բարբէ, միայն եր-
կայնմտութիւն քո, Աստուած
իմ, պարտ էր վառել բորբոքել
զեւ սիրով քով: Ա՞ որ այս-
չափ երկայնմտութեամբ համբե-
րել ինձ կարէր, բայց դու միայն
որ Աստուած ես անսահման ողոր-
մութեան: Գիտեմ եթէ որչափ
ընդ երկար աշխատ եղեր շահել
զէր իմ: Աչ, յայսմհետեւ ոչ եւս
զիմադարձ եղէց սիրոյ քում. ա-
հա քեզ տամ զանձն իմ բովան-
դակ: Շատ իսկ ընդ երկարգայրա-
ցուցի զքեզ. այժմ սիրեցից

զքեզ : Արեւմ զքեզ , զլեաւոր
բարութիւն իմ . սիրեմ զքեզ ,
անեղբ քաղցրութիւն . սիրեմ
զքեզ , Աստուած իմ , որ արժա-
նիդ ես անչափական սիրոյ . եւ
ցանկ իսկ եւ աստեւ յաւիտեանս
դոչեցից անդադար . սիրեմ զքեզ ,
սիրեմ զքեզ , սիրեմ զքեզ :

Աստուած իմ . քանի քանի
ամս կորուսի , յորս մարթ էր ինձ
սիրել զքեզ , եւ ի սէր քո եւս
քան զեւս աճել . իսկ ես ի դառ-
նացուցանել զքեզ անցուցի զաւ-
ուրս իմ : Սակայն արիւն քո ,
Յիսուս , յոյս իմ է : Յուսամ եւ
թէ ոչ եւս դադարեցայց սիրել
զքեզ : Թէ որչափ ինչ կեցոյ ի-
ցեմ , զայն ոչ զիտեմ . եւ սակայն
ամբն որ առաջն ինձ կան , եթէ
չատ իցեն եթէ սակաւ , քեզ
նուիրեսցին . համօրէն : Վասն սո-
րին իսկ այսորիկ կայիր մնայիր դու
ինձ ցայժմ . արդարեւ Տէր , հա-

ձեցից զմիտս քո . սիրեցից զքեզ
հանապաղ , եւ զքեզ միայն սի-
րեցից : Օ՛րնչ պիտոյ իցեն ինձ
ուրախութիւն , մեծութիւնք եւ
փառք . դու միայն , Աստուած
իմ , դու միայն առանձինն ես եւ
եղիցես յաւիտեանս սէր իմ եւ
ամենայն ինչ :

Բայց չեմ ես իմիք բնաւ ձեռն-
հաս՝ եթէ ոչ դու շնորհօք քովք
հասցես ինձ ի թիկունս : Արդ ա-
զատեմ զքեզ թախանձանօք . վե-
րաւորեա զսիրտ իմ , բորբոքեսձեր
սիրով քով սրբով , եւ կապեսձեր
ընդ քեզ սերտ կապանօք՝ այն-
պէս զն չեցէ հնար նմա յայտ
հեռէ բաժանել ի քէն : Գու
ինքնին խոստացար սիրել զայն որ
զքեզն սիրեցէ . Ես որ զեան սիրեն ,
«իրեն» : Այժմ սիրեմ ես զքեզ .
շնորհեա ինձ զհամարձակութիւն
իմ՝ որով աս քեզն ազազակեմ —
Արեսձեր եւ դու զեա , եւ մի թու-

դուր՝ զե ստիպեցից զքեզ հանել
 յինէն զսէր քո: Որ ոչն սիրէ՝ ան-
 դէն ի մահոնն էայ. պահեա զե
 յաղեաից անտի չսիրելոյ զքեզ
 եւ այնպէս կարոյ ի մահու: Արա
 զե ցանգ սիրեցից զքեզ, զե եւ
 դու ցանգ սիրեցես զե, եւ այս-
 պէս լիցի միութիւն մեր յաւիտե-
 նական, եւ ոչ քայքայեցի բնաւ
 սէրն որ ընդ իս եւ ընդ քեզ: Ա-
 րա գայս, Հայր յաւիտենական,
 վասն սիրոյն Յիսուսի-Քրիստոսի:
 Արա զայդ, Յիսուս, վասն ար-
 ժանեաց քոյ. վստահ եմ ի ս-
 սինն եթէ ես զքեզ եւ դու զե
 սիրեցես հանապաղ:

Ո՛ր Մարիամ, Մայր Աստուծոյ
 եւ մայր իմ, աղաչեա զՅիսուս
 վասն իմ:

Հիկզարամի:

Ո՛ր Աստուած, ո՞ն անվախճան
 մեծաշուք փառաւորութիւն. ա-
 հա առ ոտս քո է նենդաւորն եւ
 մասնիչ որ բազումն դառնացոյց
 զքեզ: Կու այնչափ բազում ան-
 դամ ետուր ինձ թողութիւն,
 այլ ես փոխանակ ընդ այնչափ
 շնորհաց եւ լուսաւորութեանց
 զորս շնորհեցեր ինձ, ցանգ վերս-
 տին զայրացուցի զքեզ: Այլք ա-
 ռանց պայծառ գիտութեան չա-
 րութեանն այնր զոր դործէին եւ
 ըմբռնեալ իմն ի թանձրամած
 խաւարի՛ մեղան. այլ ինձ՝ չարու-
 թիւն այնր զոր առնէի, լուսաւո-
 րագոյն էր, եւ մեղայ շուրջ պա-
 տեալ պայծառ լուսով: Այլ
 լուր Որբոց քում միածնի զոր ի
 սմին առաւօտու մատուցի քեզ
 դատարագ, որ այժմ յիմում
 սրտի է եւ խնդրէ ի քէն ողորմու-

Թիւն եւ Թողութիւն վասն իմ: Շնորհեա ինձ Թողութիւն առ սէր Յիսուսի Վրիստոսի, քանզի ցաւիմ յամենայն սրտէ իմնէ զի զքեզ, ո՛ր անվանածան բարութիւն զայրացուցեալ Թշնամանեցի:

Գիտեմ զի առ սէր Յիսուսի Վրիստոսի հաշտիս դու ընդ մեղաւորս. Հաճեցաւ նոյնս հաշտեցոցանել զամենայն ի նոյն: Ազէ առ սէր Յիսուսի Վրիստոսի հաշտեաց եւ ընդ իս: Մի ընկե՛նո՛ր զիս յերեսաց րոյ. մի մերժեր զիս, որպէս արժանի իսկ եմ, յերեսաց քոց: Թող ինձ, եւ փոխեսջեր զսիրտ իմ. Սերդ սո՛րբ հասարեա յիս Ասորոսա՛ն: Արա զայս, աղաչեմ, դոնեաց վասն քո իսկ փառաց. այնու զի դու ընտրեցեր զիս քեզ ի քահանայ եւ սպասաւոր, եւ կարգեալ սահմանեցեր զիս հանել ողջակէզ զՈւրբիդ քո զմիածին: Տուր զի բարք

եւ վարք իմ լիցին արժանի առն քահանայի: Ո՛վ սոչորեաջիրբեաջինջ արա բոցով սիրոյ քո սրբոյ զամենայն սէր, որ յերկրաւորան ձգիցի: Տուր զի յայսմ հետէ վասն այնչափ շնորհացն զորս ցուցեր ինձ, եւ վասն մեծի սիրոյն զոր սիրեցեր զիս, շնորհակալու միտս ընծայեցուցանիցեմ: Արդարեւ մինչեւ ցայժմ անարգեալ անգոսնեցի ես զքո բարեկամութիւն, այլ այժմիկ ի վեր է ինձ քան զամենայն մեծութիւնս աշխարհի քո բարեկամութիւնդ, եւ նախա՛մեծար ընտրեմ զհամոյս քո քան զամենայն գանձս եւ զփափկութիւնս երկնից եւ երկրի:

Հայր իմ, արձակեա զիս յամենայնէ առ սէր Յիսուսի Վրիստոսի: Վամիս զի քահանայք քո մեկնեալք եւ անջատեալք յաշխարհէ իցեն յամենայնի առ ի լոկ վասն քո եւ վասն զործոց փա-

ուսց քոց կելոյ. Որոշեցե՛ք ինչ
 զԲարեհաճաւս եւ զԱստուծոյ Գործ՝
 յոր կողմեալ է ի՛նչ զԲարեհաճաւս
 իսկ զԻտեմ եթէ զսոցն եւ յինէն
 եւս պահանջես դու, եւ դնեմ
 իսկ ի մոտի առնել զայն. այլ դու
 ձեռն տուր ինձ շնորհօք քովք:
 Չդեա զիս առ քեզ: Տուր ինձ
 երկայնամուտիւն եւ միակամու-
 թիւն ի վեշտա եւ ի դժնդակս:
 Եւ շնորհեա ինձ հոգի մեռուցման
 առ սէր քո: Եւ շնորհեա ինձ հոգի
 ճշմարիտն խոնարհութեան, եւ
 այնչափ նկրտել ի նմին յառաջա-
 դեմ, մինչեւ ուրախ լինել ինձ
 յորժամ անդունիցիմ յայլոց եւ
 մեղապարտ հաշուիցիմ: Ուստի
 առնել զհաճաւս. եւ ասա ինձ
 զինչ եւ ցանկանայցես յինէն, եւ
 կատարեցից զամենայն: Բնկալ,
 Աստուած իմ, զսէր առն միոջ
 մեղաւորի որ անդր իսկ քան զչափ
 զայրացոյց զքեզ յառաջագոյն,

այլ այժմիկ ցանկայ սիրել զքեզ
 ճշմարտապէս եւ քո լինել ամե-
 նեւին: Հայր յաւիտենական,
 յուսամ եթէ յաւիտեանս սիրե-
 ցից զքեզ, եւ նմին իրի իսկ կա-
 միմ յերկրի աստ մեծաւ սիրով
 սիրել զքեզ, զի եւ ի հանդեր-
 ձերումն մեծաւ եւս սիրով սիրե-
 ցից զքեզ:

Եւ զի սիրեմ զքեզ, ցանկամ
 զի ծանխցեն զքեզ ամենայն մար-
 դիկ, եւ սիրեսցեն զքեզ: Եւ
 քանզի դու, Տէր, կացուցիր զիս
 քահանայ, տուր ինձ շնորհս վաս-
 տակերոյ վասն քո եւ հոգիս առ
 քեզ ածերոյ: Յուսամ զայս ա-
 մենայն յարժանեաց քոց, Տէր
 Յիսուս, եւ ի բարեխօսութենէ
 քում, Մայր իմ Մարիամ:

Ուրբաթ:

Տէր իմ Յիսուս, զեւրդ յայնչափ մարդկան բազմութենէ կարացեր ընտրել զեւ քեզ ի քահանայ, զեւ՝ որ բազում անգամ դարձուցի քեզ թիկունս, անարդեալ առ ոսն հարի զՆորհա քո եւ վասն չնչեցոյ ետու զայն վտարանդի: Տէր իմ եւ Աստուած սիրելի, ցաւ է ինձ յամենայն սրտէ: Ասա դու ցիս, աղաչեմ, ետունք ինձ թողութիւն: Այո. յուսամ հաստատութեամբ: Ոչ մի անգամ եւեթ եղեր դու ինձ փրկիչ, այլ այնչափ՝ որչափ զիմ մեղք թողեր: Ո՞ր ապր թէ չէր իմ դառնացուցեալ բնաւ զքեզ երբեք, Փրկիչ իմ: Ասելի արա եւ ինձ, աղաչեմ, զայն զոր առ Սաղգաղենացին ասացեր. Թող զեւ լինի + եւ զեւ + ու. եւ այնու գիտացից եթէ ընկալար զեւ

միւսանգամ ի շնորհա քո, եւ թէ աացես ինձ անհնարին իմն ցաւս զմեղաց իմոց: Ի յեւ + ու յանչն արեւմ զհոգի իմ. փրկեցեր զեւ, Տէր, Աստուած ճշմարտութեան: Ո՞ր հովիւ աստուածեղէն, դու իջեր յերկնից խնդրել զեւ զոչխարս զկորուսեալ, եւ զոր ամենայն դաս իջանես վասն բարեաց իմոց ի սեղան այսր: Դու վասն փրկելոյ զեւ ետունք զկեանս քո. արդ մի, Տէր, մի մերժեր զեւ. Ի յեւ + ու յանչն արեւմ զհոգի իմ. ընկալ զոգի իմ վասն զթութեան ի ձեռս քո, եւ մի թողուր բնաւ յայտմ հետէ բաժանել ի քէն:

Դու հեղեր զարիւն քո վասն իմ. «Աղաչեմք զքեզ օգնել ծառայից քոց զորս պատուական արեամք քով գնեցեր», Այժմ բարեխօս եւ վասն իմ եւ ոչ դեռ եւս դատաւոր. առ ինձ թողութիւն ի շօրէ քում, առ ինձ

լոյս եւ զօրութիւն սիրելոյ զքեզ յամենայն սրտէ իմմէ: Տուր ինձ շնորհս այնպէս անցուցանել զմնացուածս աւուրց կենաց իմոց՝ զի զքեզ, յորժամ իբրեւ դատաւոր երեւիցիս, հաշտ ընդ իս տեսանիցեմ:

Թագաւորեա սիրով քով, ազաչեմ, տիրես ջերբովանդակ սրտի իմում: Երա զի քո եղէց ամենեւին. եւ վասն սորին իսկ այստրիկ յուշ առնիջեր ինձ հանապազ, փրկիչ իմ, զտէրն զոր սիրեցեր զեւ, եւ զամենայն զոր արարեր առ փրկելոյ զեւ եւ սիրելոյ յինէն: Վասն այստրիկ միայն արարեր զեւ քահանայ, զի ոչ այլ ինչ բայց զքեզ միայն սիրեցեմ:

Եյո, Յիսուս, կատարեցից զկամս քո. սիրեցից զքեզ, եւ ոչ այլ ինչ բայց զքեզ միայն սիրեցից: Տուր ինձ խոնարհութիւն եւ համբերութիւն ի վեշտա այսր

կենաց, եւ մեկնել յամենայն իրաց արարածոց, եւ մեռուցումն երկրաւորական բերկրանաց: Եղէ, սուր զի խեցից հանից ի բաց ի սրտէ իմմէ, զամենայն յօժարութիւն, որ ոչ առ քեզ ուղղեալ իցէ: Չայն ամենայն ինդրեմ եւ յուսամ ի քէն վասն արժանեաց դառնակակիճ չարչարանաց քոց: Ո՛ Յիսուս, ամենայն սիրոյ արժանի. ո՛ Յիսուս սիրելի, ո՛վ բարի Յիսուս, լուր ինձ. «Բարերար Յիսուս, լուր ինձ»,:

Եւ դու եւս լուր ինձ, Մայր իմ եւ յոյս իմ Մարիամ, եւ աղաչեա զՅիսուս վասն իմ:

Ծարաթ:

Խօսեաց, Տէր, զի լո-իցէ ծա-
րայ +: — Արեւի Յիսուս, դու
դարձեալ միւսանդամ ի ամին ա-
ռաւօտու հաճեցար յայց ելանել
հոգւոյ իմում. շնորհս ունիմ
քեզ յամենայն սրտէ: Աւ. քան-
զի ես դու այժմ յիմում սրտի,
աղաչեմ զքեզ, խօսեաց՝ ասա
զինչ յինէն կամիցիս. մտադեր
եւ յօժարակամ արարից զամե-
նայն: Արդարեւ չեմ բնաւ ար-
ժանի զի խօսեսցիս դու ընդ իս,
քանզի բազում անդամ յորժամ
դու առ սէր քո կոչելիր զիս, ծան-
րաւուր եղէ ես ձայնի քում, եւ
ապախտաւորութեամբ իմն թի-
կունս դարձուցի քեզ: Սակայն
արդէն իսկ սարժացեալ եմ ի վե-
րայ ամենայն թշնամանացն զոր
թշնամանեցի ես զքեզ, եւ այժմ
եւս վերստին ցաւիմ, եւ յու-

սամ եթէ արդէն իսկ տուեալ
լցէ քո ինձ թողութիւն: Աղէ,
ասա ինձ, զինչ ինչ յինէն խըն-
դրիցես, եւ արարից զամենայն: Ո՛-
տայր թէ սիրեալ էր իմ զքեզ
հանապազ, Աստուած իմ: Ո՛-
չուսուական. քանի քանի ամբ
զուր եւ ընդ վայր կորեան: Արիւն
քո միայն եւ խոստումն՝ տան ինձ
յոյս ակնկալութեան եթէ փոխա-
նակ այնչափ ամնայն կորուսելոյ՝
փոյթ. յանձին կալայց այսուհե-
տեւ այնմ միայն ուշ ունել, զի
սիրեցից եւ ուրախ արարից զքեզ:
Արեւմ զքեզ, Փրկիչ իմ եւ
Աստուած իմ, եւ այլ ինչ ոչ
կամիմ բայց սիրել զքեզ յամե-
նայն սրտէ: Յանկամ արդարեւ
եղանել ի կենաց վասն սիրոյ քո,
զի դու վասն սիրոյ իմոյ ի մահ վա-
րեցար: Գոչեցից առ քեզ ընդ Ս.
Փրանկիսկեայ. Մեռայց սիրով
սիրոյ քո, որ սիրով սիրոյ իմոյ

հաճեցար մեռանել: Գու, Յիսուս, զանձն քո ետուր ամենեւին, դու զարիւն քո զամենայն, զկեանս քո ողջոյն, զվաստակս քո եւ զքրտուես եւ զհամօրէն արժանիս քո ինձ պարզեւեցեր: Չէր քեզ մարթ տալ ինձ ինչ առաւել քան զդոսա, զի առանց ինչ պահեստի ետուր զամենայն: Եւ ես տամ քեզ զանձն իմ ողջ բովանդակ: Եւ զամենայն որ զմիտս իմ հաճիցէ, զամենայն ուրախութիւնս երկրի, առ զմարմին իմ զհոգի իմ եւ զկամս: Չիք իմ այլ ինչ զոր մարթիցիմ տալ քեզ. եթէ կայր ինչ իմ առաւել քան զդոսա՝ եւ զայն եւս տայի քեզ: Գու միայն, սիրելի Յիսուս, շատ եւ բաւական ես ինձ:

Սակայն արա, Տէր, զի կացից մնացից քեզ հաւատարիմ: Մի թողուր փոխել ինձ զկամս իմ, եւ այնպէս միւսանդամ թողուլ

զքեզ: Վստահ ի քո դանակակի՞ծ չարչարանադ եմ՝ եթէ չէ բնաւ զխպերց ինձ այսպիսի ինչ: Գու առայց եթէ Ոչ ո՞ր յոսոցոս ի Տէր եւ յամօրէն եղի: Եպա մարթ է ինձ ասել ամենայն համարձակութեամբ. Ի՞՞եղ, Տէր, յոսոցոց. Քի ամաղէցից յամօրէն: Յուսամ եւ ցանդ խակ յուսացայց, Եստուած հոգւոյ իմոյ, եթէ ոչ եւս յայմ հետեւ ամօրն այն ահագին տեսաներոյ զիս բաժանեալ ի քէն եւ ի թշնամութեան քում՝ ծածկեսցի զերեսս իմ. Ի՞՞եղ, Տէր, յոսոցոց. Քի ամաղէցից յամօրէն: Եստուած իմ, ամենակալ ես դու, արդ սուրբ արա զիս. տուր զի շատ սիրեցից զքեզ. տուր զի մի թողից ինչ մի յայնցանէ զորոց զիտացից թէ անդ են փառաց քոց. եւ մի ծանր թուեսցի ինձ ինչ՝ որով ուրախ առնել զքեզ մար-

Թայցեմ: Ո՛վ, քանի երանելի լինիցիմ, եթէ առ ի շահելոյ զքեզ եւ զսէր քո՝ զամենայն ինչ կորուսանիցեմ: Վասն սորին իսկ շնորհեցեր ինձ կեանս, արա զի քո վասն միայն արկից զայն ի կիր: Արդարեւ չեմ արժանի բնաւ շնորհաց ինչ, այլ լոկ պատօնոյ եւ պատուհասից. սակայն, Տէր, արա զիս պատուհաստիո՞ծ որպէս եւ որչափ եւ կամիցիս, բայց ի շնորհաց քոյ մի զրկեր զիս: Սէր անհաս սիրեցեր դու զիս, եւ ես եւս անսահման իմն սիրով ցանկամ սիրել զքեզ, ո՞ անեղբ բարութիւն: Ո՛ կամք Աստուծոյ իմոյ, դու ես սէր իմ: Գու, Յիսուս, մեռար վասն իմ. ո՞ տայր եւ ինձ եւս վասն քո մեռանել, եւ առնել՝ զի մահուամբ իմով ամենեքեան զքեզ սիրեցեն: Ո՛ անսահման բարութիւն, արժանի անեղբ սիրոյ, մեծարեմ եւ

սիրեմ զքեզ ի վեր քան զամենայն:

Ո՛վ Մարիամ, ձգեա զիս ամենեւին առ Աստուած, տուր ինձ վստահ լինել առ քեզ. տուր զի ցանգ ի քեզ ապաստան եղէց: Գու բարեխօսութեամբ քով սուրբ արացես զիս: Այսպէս յուսամ:



Սփրճո՞ ճԼԱ.

Կց. Վահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո յնծարով յնծասցեն:

ՓԻ. Յիշեա՛ Տէր զՎաւիթ եւ զամենայն հեգութիւն նորա: Որպէս երբուաւ Տեառն, եւ ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ: Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց: Եթէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչեւ գտից զտեղն յարկի Տեառն Աստուծոյ Յակովբայ: Ահա լուաք զնմանէ Ափրաթա, եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց: Մտցուք ի յարկս նորա. երկիր պաղցուք ի

տեղոջ, ուր կացեալ են ոտք նորա: Երի Տէր ի հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի սրբութեան քո: Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո յնծարով յնծասցեն: Վասն Վաւթի սիրելոյ քո՝ մի դարձուցաներ զերեսս յօճեղոյ քումէ: Երբուաւ Տէր Վաւթի ճշմարտութեամբ, եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո: Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիւնս՝ զոր ուսուցից նոցա: Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո: Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, եւ ընտրեաց բնակել ի նմա. ասէ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա: Օրս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լլուցից հացիւ:

Երկնաց սորա զգեցուցից զվր-
կութիւն, եւ սուրբք սորա ցնծա-
լով ցնծասցեն: Ընդ ծագեցից
զեղջիւր Ղաւթի, պատրաստ ա-
րարից զճրագ օծելոյ իմոյ: Թշնա-
մեաց նորա զգեցուցից զամօթ,
այլ ի վերայ նորա ծաղկեցի սր-
բութիւն իմ:

Փառք Հօր, եւ Որդւոյ, եւ
Հօգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վրդ. Եւ եւս խաղաղութեան
զՏէր աղաչեսցուք:

Խնդրեսցուք հաւատով միա-
բանութեամբ ի Տեառնէ, զի զը-
զորմութեան զնորհս իւր արաս-
ցէ ի վերայ մեր: Եւ մենակալ Տէր
Աստուած մեր կեցո՛ եւ ողորմեա:
Եւ ասացէն թ. Տէր ողորմեա:

Որ զգեցեալ ես զլոյս որպէս
հանդերձ, Տէր մեր Յիսուս
Վրիստոս, անճառելի խոնարհու-
թեամբ ի յերկրի երեւեցար, եւ
ընդ մարդկան շրջեցար: Որ եղեր
քահանայապետ յաւիտենից ըստ
կարգին Մելքիսեդեկի, եւ զար-
դարեցեր զեկեղեցի քո սուրբ:
Տէր ամենակալ, որ պարզեւեցեր
մեզ գնոյն գերկնային զհանդերձ
զգենուլ: Երժանի արա եւ զիս ի
ժամուս յայսմիկ զանպիտան ծա-
ռայս քո, որ համարձակիմ եւ
մերձենամ ի նոյն հոգեւոր պաշ-
տօն փառաց քոց. որպէս զի զա-
մենայն ամբարշտութիւնս մերկա-
ցայց, որ է հանդերձ պղծութեան,
եւ զարդարեցայց լուսով քով:
Բնկեա յինէն զչարիս իմ, եւ թօ-
թափեա զյանցանս իմ, որպէս զի
արժանի եղէց հանդերձեալ լու-
սոյդ առ ի քէն: Եւ նորհեա ինձ
քահանայական փառօք մտանել

ի պաշտօն սրբութեանց քոյ ընդ այնոսիկ՝ որ անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո: Օ ի եւեոս պատրաստ դտայց երկնաւոր առաքատիւ ընդ իմաստուն կուսանն փառաւորել զքեզ, Վրիստոս, որ բարձեր զմեզ ամենեցուն. զի դու ես սրբութիւն անձանց մերոց: Աւ քեզ բարերարիւ Նստուծոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մայր զթութեան եւ ողորմութեան ամէնօրհնեալ կոյ Մարիամ. ահաւասիկ ես հէքս եւ անարժան մեղաւորս յամենայն սրտէ իմմէ, եւ յամենայն յօժարութենէ կամացս առ քեզ ապաւինիմ, եւ աղաչեմ զթութիւն քո, զի զորօրինակ կայիր

առ անուշակ Արդեոյդ կախելոյ զեսաչէ, նոյնպէս եւ առ ապաշաւմեղաւորս, եւ առ ամենայն քահանայս, որ աստ եւ ընդ ամենայն եկեղեցիս այսօր պատարագեն, կացցես զթութեամբ, զի օժանդակութեամբ շնորհաց քոյ կարող լիցուք զարժանաւոր եւ զընդունելի պատարագս մատուցանել մեծի եւ անբաժանելի սուրբ Արրորդութեանն. ամէն:

Աս կամիմ պատարագել, եւ քահանայազործել զմարմին եւ զարիւն Տեառն մերոյ Յիսուսի Վրիստոսի ըստ արարողութեան կաթուղիկէ եկեղեցւոյ. ի փառս եւ ի զովեստ ամենակալն Աստուծոյ եւ համօրէն դասուց երանելեաց. յօղուս ինձ եւ բովանդակ եկեղեցւոյս զինուորելոյ. եւ վասն ամենեցուն՝ որոյ յանձն ե-

ղեն ինձ յաղօթս՝ առ հասարակ
եւ առանձինն. եւ վասն խաղա-
ղութեան հոռովմէական սուրբ Ե-
կեղեցւոյ: Օխնդութիւն խաղա-
ղութեամբ հանդերձ, զուղղու-
թիւն վարուց, զժամանակ ճշմա-
րիտ ապաշխարութեան, զչնորհս
եւ զմխիթարութիւն Հոգւոյդ
սրբոյ, եւ զյարակայութիւն ի
գործս բարութեան պարգեւեա
մեզ, ամենակալ եւ բազում ու-
ղորմ Տէր:

Ի կե-րպիկէ:

Աղբերացն անապական, որ յետ
մահուն անմահարար, բղխեալ ի
քէն վտակ կրկին ի նորոգումն
կողածնին. բաց զբերան իմ յար-
բուցումն քո սուրբ արեան կենա-
բարին:

Յերկուշաբաթն:

Այս ճշմարիտ եւ ճառագայթ
Հօր, ծագումն եւ կնիք, Բան
եւ ծնունդ: Որ կանգնեցեր յետ-
թանց սեանց զեկեղեցի սուրբ ա-
ծեալ ի սպանդ զեզն պարարակ:
Շնորհեա մեզ կերակրել յի-
մաստութեան քում սեղանոյ.
ողորմեա:

Յերեշաբաթն:

Հաց կենաց, եւ անմահու-
թեան ճաշակ, սուրբ եւ անճառ-
ստակալ խորհուրդ. որ ի յերկնից
իջեր կենդանութիւն մարդկան,
կենդանի եւ կենդանարար: Պար-
գեւեա քաղցրոյցս զքաղցրութեան
քում ճաշակումն. ողորմեա:

Ի շրեշաբաթն:

Վունն երկնից եւ ճանապարհ
այբայութեան, Տէր երկնի, երկ-

նայնոցն օրհնեալ զասուց. որ
զմարմին քո եւ զարիւնդ անա-
պական բաշխեցեր առաքելոցն:
Մաքրեա զմեզ հաղորդել սրբու-
թեան քում խորհրդոյ. ողորմեա:

Ի հինգ շաբաթս:

Բան հօր եւ քահանայապետ
սուրբ, յանմարմնոցն զովեալ ի
բարձունս. որ ի վերայ խաչին պա-
տարագեալ մարմնով՝ հեղեր զա-
րիւնդ ի փրկութիւն: Արբեա
զմեզս մեր կենարար եւ փրկական
քաւիչ քո արեամբդ. ողորմեա:

Յոսիքս:

Ո՛հմ հոգեւոր եւ զլուխ ան-
կեան օծեալ, բարեբանեալ ի
հրեշտակաց. որ ի խաչին բացեր
զկողահոս աղբիւրդ, զանմահու-
թիւն ցօղեալ աիեզերաց: Արբո
եւ մեզ ծարաւեացս զբաժակ
փրկութեան. ողորմեա:

Ի շաբաթս:

Գառն Աստուծոյ զենեալ միշտ
եւ կենդանի, անմեղ եկեալ ի
պատարագ. որ ի հաշտութիւն
Հօր պատարագեալ բառնաս
զմեզս աշխարհի. յանմահոյ զօ-
րաց փառաւորեալ: Յիշեա՛ զհո-
գիս հաւատով ի քեզ ննջեցե-
լոցն մերոց. ողորմեա:

Ս. ՆԵՐՍ. ԸՆԴԵՍ:

Ի կէրակէ:

Քահանայմեծ, եւ քահանայ-
ապետ ճշմարիտ Յիսուս Քրիս-
տոս, որ մասուցեր զանձն քո Աս-
տուծոյ Հօր պատարագ սուրբ եւ
անարատ ի սեղան խաչին վասն
մեր տառապեալ մեղաւորացս, եւ
ետուր մեզ զմարմին քո ի կերու-
կուր եւ զարիւն քո յարբումն,

եւ կարգեալ սահմանեցեր զայս խորհուրդ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, ասելով. Օ այս քանիցս անգամ առնիցե՞ք՝ առ իմոյ յիշատակի արասջիք: Պաղատիմ վասն արեան քո, որ է զին մեծ փրկութեան մերոյ. մաղթեմ վասն սիրալի եւ անձառելի սիրոյդ, որով զմեզ զթշուառացեալքս եւ զանարժանքս այնչափ սիրեցեր, մինչեւ արեամբ քով լուանալ զմեզ ի մեղաց մերոց: Ուստ ինձ քում անարժան ծառայի, զոր ի վերայ այլոց պարգեւաց քոց՝ առ քահանայական պաշտօն եւս կոչել հաճեցար, ոչ յաղագս իմոց ինչ արդեանց, այլ միայն արժանաւորելով ողորմութեան քո: Ուստ ինձ, աղաչեմ, Հոգւովդ քով սրբով պաշտել զխորհուրդս ահաւոր՝ յարդութեամբ եւ պատուով, եռանդիւ եւ երկիւղիւ, որովք արժանն է

եւ վայել: Տուր ինձ շնորհօք քո զահեղ խորհրդոյս զայսմանէ զայն միշտ հաւատալ եւ իմանալ, զգալ եւ հաստատուն ունել, ասել եւ խորհել, որ քեզ հաճոյն է, եւ հոգւոյս իմոյ յօգուտ: Մտցէ հոգի քո բարի ի սիրտ իմ, եւ հրնչեացէ անդ առանց ձայնի, եւ անմոռնչ խօսեսցի զամենայն ճշմարտութիւն. քանզի խորին են յոյժ, եւ քօղով սրբով ծածկեալ: Հնորհեա ինձ վասն մարդասիրութեան քո մեծի զպատարագս սուրբ սրտիւ եւ մաքուր մտօք մատուցանել: Պահեա զսիրտ իս յանմաքուր, ի գարշ, յրնդունայն եւ ի վնասակար խորհրդոց: Եմրացո զեւ գորովագութ եւ հաւատարիմ պահպանութեամբ եւ հզօր վերակացութեամբ երանելի զուարթնոցն, զի թշնամիք ամենայն բարեաց ի բաց կացցեն ամաչեցեալ: Օ օրութեամբ ա-

հաւոր խորհրդոյս, եւ ի ձեռն
հրեշաակի սրբոյ քո, հերբեա յի-
նէն եւ յամենայն ծառայից քոց
զատառում ողի ամբարտաւանու-
թեան, սնափառութեան, նա-
խանձու, հայհոյութեան, պոռն-
կութեան, պղծութեան, երկ-
մտութեան, թերեհաւատու-
թեան: Յամօթ լիցին որք հա-
լածենն զմեզ, եւ կորիցեն՝ որք
վարդավաղեն կորուսանել զմեզ:

Յերկու-շաբաթն:

Թագաւոր կուսանաց, եւ սի-
րոյ սրբութեան եւ անեղծու-
թեան. երկնային ցօղով օրհնու-
թեան քո շին ի մարմնոյ իմիկ
զուցիլիս վառեալ ցանկութեան,
զի մնացէ յիս բարեկարգութիւն
ողջախոհութեան մարմնոյ եւ
հոգւոյ: Մեռօ յանդամն իմ
զխայթօ մարմնոյ եւ զամենայն
խրամունս սուփանաց. եւ սուր

ինձ զճմարիտ, եւ զմանջնաւ-
որ ողջախոհութիւն ընդ այլ
պարզեւս քո, որք քեզ հաճոյ
են ճմարտութեամբ. զի զպա-
տարագս օրհնութեան ողջախոհ
մարմնով եւ սուրբ սրախ մա-
տուցանել քեզ մարթացայց:
Քանզի որչափ զղմամբ սրտի
եւ հեղմամբ արտատուաց, որչափ
յարդանօք եւ զողութեամբ, որ-
չափ սրբութեամբ մարմնոյ եւ
մարբութեամբ հոգւոյ արժան է
զաստուածային եւ զերկնային
պատարագս մատուցանել, յու-
րում զմարմին քո ճմարտապէս
ճաշակեմք, եւ զարիւն քո ըմ-
պեմք ստուգապէս. ուր ստորինքս
վերնոց, երկրաւորքս աստուած-
այնոցն կցորդին. որոց առ ընթեր
կան սուրբ հրեշաակք, եւ ուր
զու ես պատարագ եւ քահանայ,
պանչեյապէս եւ անձառաքար
կարգեալ:

Յերե+լաբախն:-

Եւ ո՞վ որ մարթացի արժա-
նապէս մատուցանել զպատա-
րագս՝ եթէ ոչ դու, Տէր ամենա-
կալ, զմատուցողն արացես ար-
ժանի: Գիտեմ Տէր, եւ ստու-
գութեամբ գիտեմ, եւ մարդա-
սիրութեան քում խոստովան
լինիմ, զի չեմ բաւական մատչել
առ ահաւոր խորհուրդս վասն
անթիւ մեղաց իմոց եւ անհամար
ստունդանութեանց: Այլ զի-
տեմ, եւ ճշմարտապէս բոլորով
սրտիւ իմով հաւատամ, եւ բե-
րանով խոստովանիմ, զի դու
կարող ես առնել զիս արժանի,
որ միայն զօրես սուրբ առնել
զյղացեալն յանսուրբ սերմանէ,
եւ ի մեղաւորաց՝ արդարս եւ
սուրբս գործել: Վաղատիմ առ
քեզ, Աստուած իմ, ամենակա-
րող զօրութեամբ քով շնորհեա

ինձ մեղաւորիս մատուցանել
զպատարագս ահիւ եւ գողու-
թեամբ, սրբութեամբ սրտի եւ
բղիմամբ արտասուաց, հոգեւոր
խնդութեամբ եւ երկնային ուրա-
խութեամբ: Բերկրեացին միաք
իմ քաղցրութեամբ երանաւէտ
առաջնկայութեան քո, եւ պահ-
պանութեամբ հրեշտակաց քոյ
սրբոյ՝ որք շուրջ են զինեւ:

Ի շրե+լաբախն:-

Քանզի յիշելով իմ, Տէր,
զմեծարդի չարչարանս քո, մատ-
չեմ ի սեղան քո՝ թէպէտ եւ
մեղաւոր գորով, մատուցանել
քեզ զպատարագս, զոր դու հաս-
տատեցեր, եւ հրամայեցեր առ-
նել ի յիշատակս քո՝ վասն մե-
րոյ վրկութեան: Աղաչեմ, Տէր
բարձրեալ, ընկալ զսա վասն ե-
կեղեցւոյ սրբոյ քո, եւ վասն ժո-

զով լուրեանս՝ զոր ստացար արեամբ
 քով: Աւ զն զմեղաւորս ընդ
 քեզ եւ ընդ ժողովուրդս քո այս
 միջնորդ լինել կամեցար, թէպէտ
 եւ յանձին իմում զբարեաց զոր-
 ծոց ինչ հանդէս ոչ ծանխցես,
 դէթ զպաշտօն հաւատացեալ
 անտեսութեանս մի արասցես ան-
 փես. եւ մի անարժանութեամբս
 իմով ընդունայն լիցի զին փրկու-
 թեաննոցա, որոց զոհդ կենարար
 հաճեցար լինել ի փրկութիւն:
 Աւ եւս յառաջ բերեմ, Տէր, եւ
 թէ հայեսցիս հաշտ ակամբ՝ զտա-
 ուսպանս ուսմիաց, զվտանգս ժո-
 ղովրդոց, զհեծութիւնս գերեւոց,
 զթշուառութիւնս որբոց, զկա-
 ըիս պանդխտաց, զկարօտութիւն
 տկարաց, զլքումն հիւանդաց,
 զվհատութիւն ծերոց, զհառա-
 չանս մանկանց, զուխտս կուսա-
 նաց, եւ զողբս այրեաց:

Ի հինգշաբթիս:

Վանգի դու, Տէր, ողորմիս ա-
 մենեցուն, եւ ոչ գարշիս յումեքէ՝
 զոր արարեր: Յիշեա թէ զինչ
 եմք. դու ես հայր մեր, դու Աս-
 տուած մեր. մի ի սպառ բարկա-
 նար մեզ, եւ մի արգելուր ի մէնջ
 զբազում ողորմութիւն զթու-
 թեան քո: Եւ ոչ առ արդարու-
 թեանց մերոց արկանեմք զգութ
 մեր առաջն քո, այլ վասն բա-
 զում զթութեան քո: Բարձ ի
 մէնջ, Տէր, զանօրէնութիւնս մեր,
 եւ վառեա ի մեզ մարդասիրա-
 պէս զհուր Հոգւոյն սրբոյ: Հան
 ի մարմնոյ մերմէ զսիրտ քարեղէն,
 եւ տուր մեզ զսիրտ մարմնեղէն,
 որով զքեզ սիրեսցուք, քեզ
 փափաքեսցուք, քեւ բերկրես-
 ցուք, քեզ հետեւեսցուք, եւ
 քեւ զմայլեսցուք: Հայցեմք, Տէր,
 ի մարդասիրութենէդ քումէ,

նայեաց քաղցրութեամբ յուխտս
հաւատացելոց քոց, որք դէտ
ակն ունին պաշտամանց անուանդ
քում սրբոյ, եւ զն մի ուրուք
ընդունայն լըցին պտղատանք,
կամ հայցուածք ի դերեւ ելա-
նիցեն, դու Տէր ուստ մեզ զա-
ղօթս՝ որոց ունին մատուցանել
եւ զթութեամբ լսել ակորթես:

Յորբան:

Եւ եւս հայցեմք ի քէն Տէր,
չայր սուրբ, վասն հոգւոց հաւա-
տացեալ ննջեցելոց, որպէս զն ե-
ղևցի նոցա խորհուրդս այս մեծ
աստուածապաշտութեան ի փր-
կութիւն, յառողջութիւն, ի
խնդութիւն եւ ի հանգիստ:
Տէր Աստուած իմ, եղևցի նոցա
այսօր մեծ եւ ամենառատ խրախ-
ճան ի քէն ի կենդանի հացեդ,
որ իջեալ յերկնից տաս կեանս

աշխարհի. ի սուրբ եւ ի պատու-
ական մարմնոց դառինդ անարա-
տի, որ բառնաս զմեզս աշխարհի,
որ ի սուրբ եւ ի հրաշափառ ար-
զանդէ երանուհւոց կուսին Մա-
րիամու առեալ է եւ ի Հոգւոյն
սրբոյ յղացեալ, եւ յաղբերէ ան-
տի գթութեան՝ որ զեղարդեամբ
զինաւորին յամենասուրբ կողէ
քումէ բղխեաց. զն անտի կազ-
դուրեալք եւ յաղեալք եւ սփո-
փեալք յօրհնութիւն եւ ի փառս
քո զուարճացին: Հայցեմ, Տէր,
ի քումէ մարդասիրութենէդ.
Իջցէ լեութիւն օրհնութեան քո,
եւ սրբագործութիւն աստուա-
ծութեան քո ի վերայ հային՝
զոր հանդերձեալ եմք քեզ քա-
հանայապործել: Եւջցէ, Տէր, եւ
աներեւոյթ եւ անհասանելի մեծ-
վայելչութիւն Հոգւոյդ քում
սրբոյ, որպէս երբեմն յոգձա-
կէզս նախահարցն, որ զպատա-

րադս մեր մարմին եւ արիւն քո
արասցէ, եւ ուսուցէ ինձ անար-
ժան քահանայիս պաշտել զա-
հաւոր խորհուրդս սրբութեամբ
սրտի, եւ յորդութեամբ արտա-
սուաց, պատկառանօք եւ դո-
ղութեամբ, որպէս զի հաճու-
թեամբ եւ մարդասիրապէս ըն-
կալցիս զպատարագս ի ձեռաց ի-
մոց ի փրկութիւն ամենայն կեն-
դանեաց եւ ննջեցերոց:

Ի շաբաթիս:

Եւ եւս հայցեմ ի քէն Տէր,
վասն սուրբ խորհրդոյ մարմնոց եւ
արեան քո, զոր հանապազօր յե-
կեղեցւոջ քում ճաշակեմք եւ
լընկեմք, որով լուացեալ սրբ-
բիւմք, եւ միոյ զերազոյն աատուա-
ծութեանն լինիմք բաժանորդ.
սուր ինձ զառաքինութիւնս քո
սուրբ, որովք լցեալ ուղեղ մտօք

մատեայց ի սեղան քո, որպէս զի
եղիցին ինձ երկնային խորհուրդքս
ի փրկութիւն եւ ի կեանս: Վասն-
զի դու ասացեր սուրբ եւ ամէն-
օրհնեալ բերանով քո. Հայն
զոր ես տաց՝ մարմին իմ է, վասն
կենաց աշխարհի: Բա եմ հայն
կենդանի, որ յերկնից իջեալ. ե-
թէ որ ուտիցէ ի հացէ յայս-
մանէ, կեցցէ յաւիտեան: Հայ
քաղցրաճաշակ, առողջացո զքիմն
սրտի իմոց, զի ճաշակեցից զքաղ-
ցրութիւն սիրոց քո, եւ ապաքի-
նեա յամենայն ախտից, զի բաց
ի քէն ոչինչ այլ քաղցրութեան
առից զճաշակ: Հայ զերամաքուր՝
առ ամենայն ցանկութիւն բաւա-
կան, եւ առ ամենայն հանդեր-
ձանս ճաշակաց, որ կերակրես
զմեզ հանապազ, եւ մնաս ի
քեզ յաւեա անպատ. հաստա-
տեցի քեւ սիրտ իմ, եւ քաղ-
ցրութեամբ ճաշակաց քոց լիտցի

անձն իմ: Ղաշակէ զքեզ հրեշ-
տակն լին բերանով. ճաշակեսցէ
զքեզ մարդս անմաքուր ըստ չա-
փու պատշաճի իւրոյ, զին մի նըք-
թիցի ի ճանապարհի սովին թո-
շակաւ կազդուրեալ: Հաց սուրբ,
հաց կենդանի, հաց անապական
որ իջեալ յերկնից տաս կեանս
աշխարհի. եկ ի սիրտ իմ, եւ սրբ-
բեա զին յամենայն պղծութենէ
մարմնոյ եւ հոգւոյ: Մուտ ի հո-
գի իմ, բժշկեա եւ սրբեա զին
ներքոյ եւ արտաքոյ: Եւ ա-
պաւէն եւ հանապազորդ փրկու-
թիւն հոգւոյ եւ մարմնոյ իմոյ:
Հալածեա յինէն Տէր զզարա-
նակալ թշնամիս իմ. մերժեսցին
յերեսաց զօրութեան քո, զիներ-
քոյ եւ արտաքոյ քեւ պատապա-
րեալ, ուղիղ զնացիւք ժամանե-
ցից յարքայութիւն քո. ուր ոչ
ի խորհուրդս, որպէս զարդիս,
այլ զէմբանդիման տեսցուք զքեզ,

յորժամ տացես ի ձեռս զթա-
ղաւորութիւնն Աստուծոյ եւ
Հօր, եւ եղիցիս Աստուած ամե-
նայն յամենայնի: Վանզի յայն-
ժամ յագեցուցես զին առ ի
քէն սքանչելի յագմամբ, որպէս
զին մի քարոյեայց եւ մի ծարաւե-
ցայց յաւիտեան: Ար ընդ Հօր եւ
ընդ Հօգւոյ սրբոյ կենդանի ես
եւ թագաւորես յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Ս. Ա. Բ. Ե. Կ. Զ.

Ամենակալ Աստուած յաւիտե-
նական, ահաւասիկ մատչիմ առ
խորհուրդ միաճնի քո Տեառն մե-
րոյ Յիսուսի Վրիստոսի: Մատ-
չիմ որպէս հիւանդ առ բժիշկն
կենդանութեան, որպէս զանմա-
քուր առ աղբիւրն ողորմութեան,
որպէս զաչացու առ լոյսն յաւեր-
ժական պայծառութեան, որպէս

դադ. քատ եւ զտնանկ առ Տէրն
 երկնի եւ երկրի: Աւ արդ հայ-
 ցեմ ի լեռթեանէ անբաւ առա-
 առ թեան քո. առողջացոյ զհիւ-
 անդութիւնս, լուս զանմաքրու-
 թիւնս, լուսաւորեա զիւրու-
 թիւնս, ճոխացոյ զանանկութիւնս,
 զգեցոյ զմերկութիւնս: Որպէս զն
 զհացն հրեշտակաց, զթագաւորն
 թագաւորաց, եւ զՏէրն անբանց,
 պատկատանօք եւ խոնարհու-
 թեամբ, զղջմամբ եւ եռանդիւ-
 սիրոյ, մաքրութեամբ եւ հաւա-
 տով, առաջադրութեամբ եւ
 մտադրութեամբ այնպէս ընկա-
 լացց, որպէս անկ է վերկութեան
 անձին իմոյ: Պաղատիմ առ քեզ՝
 շնորհեա ինձ մի միայն զտէրու-
 նեան մարմնոյ եւ արեան ընդու-
 նել զխորհուրդ, այլ եւ զնսկու-
 թիւնս եւ զզօրութիւնս նորա: Տուր
 ինձ, բարեգութ, զառ ի կուսէն
 Մարիամոյ առեալ զմարմին մի-

ածնի քո Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի այնպէս ընդունել, որ-
 պէս զն արժանի եղէց ընդ խոր-
 հրդական մարմնոյ նորա միանալ,
 եւ խառնել ի թիւս անդամոց
 նորա: Հայր մարդասէր, պար-
 զեւեա ինձ զսիրելի քո զՈրդի,
 զոր այժմ ի ճանապարհի ընդ
 քօղով ունիմ ընդունել՝ յապայն
 զէմբանդիման յաւէտնկատել. որ
 ընդ քեզ, եւ ընդ Հողոյդ սրբ-
 րոյ կենդանի է եւ թագաւորէ
 յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ս. Թ. Ժ. Ա. Կ. Է:



ՅԵՏ ՊԱՏԱՐԱԳԻ

Գոհանամ զքէն, Տէր սուրբ,
 Հայրամենակալ, Աստուած յաւ-
 իտենական, որ զվեղուցեալ եւ
 եւ զանարժան ծառայս քո ոչ
 յիմոց արդեանց, այլ արժանաւ-
 որելով ողորմութեան քո յա-
 գեցուցեր պատուական մարմնով
 եւ արեամբ Որդւոյ քո Տեառն
 մերոյ Յիսուսի Վրիստոսի: Աւ
 արդ աղաչեմ, մի լիցի սա ինձ
 պարտաւորութիւն ի պատիժ,
 այլ միջնորդ փրկարար ի քաւու-
 թիւն. զէն հաւատոյ, եւ վահան
 բարեւէր կամաց: Ախտից իմոց
 բուժումն, ցանկութեան եւ տրու-
 փանաց մերժումն. սիրոյ եւ համ-
 բերութեան, խոնարհութեան եւ
 հնազանդութեան, եւ ամենայն
 սուաքինութեանց աճումն. ի

դարանակալութեանց թշնամեաց
 իմոց երեւելեաց եւ աներեւ-
 ութից անվիանդ պաշտպանու-
 թիւն, շարժմանց իմոց մարմնաւ-
 որաց եւ հոգեւորաց կատա-
 րեալ անդորրութիւն, ի քեզ
 ճշմարիտդ Աստուած անքակ մի-
 այարութիւն, եւ ելից իմոց եր-
 ջանիկ կատարած: Աւ հայցեմ
 այնմ անձառ ուրախութեան կոչ-
 նոցդ արժանի առնել զվեղաւորս,
 ուր ընդ Որդւոյ քո եւ Հոգւոյդ
 սրբոյ սրբոց քոց լոյս ես ճշմարիտ,
 եւ յազուրդ աննիազ, եւ ուրա-
 խութիւն անզուաւ, եւ բերկրու-
 թիւն անսպառ, եւ երանութիւն
 կատարեալ ի Վրիստոս Յիսուս
 ի Տէր մեր, որում վայելէ փառք,
 իշխանութիւն եւ պատիւ, այժմ
 եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
 տենից. ամէն:

Օճանճառելի ողորմութիւն քո,
Տէր Յիսուս Վրիստոս, խոնար-
հեալ աղաչեմ, զի այս խորհուրդ
մարմնոյ եւ արեան քո՝ զոր անար-
ժանս ընկալայ, լիցի ինձ քաւու-
թիւն յանցանաց, զորութիւն
վհատութեան, ամբութիւն յա-
մենայն ի վեշտս կենցաղոյս, ըն-
դունելութիւն թողութեան,
հաստատութիւն շնորհաց, զեղ
կենաց, յիշատակ քոց չարչարա-
նաց, հզօրիչ տկարութեան եւ
պաշար իմոյ պանդխտութեան:
Ի գնալ իմում առաջնորդեսցէ,
ի մոլորելն դարձուցէ, ի դառ-
նայն ընկալցի, ի սայթաքելն լիցի
ձեռնտու, յանկանելն կանգնեսցէ,
եւ ի հանդուգորդելն առաջնոր-
դեսցէ ի փառս: Ո՛վ բարձրալի
Աստուած, երանաւէտներկայու-
թիւն մարմնոյ եւ արեան քո շքե-
ղեսցէ զքիմն սրտի իմոյ. բաց ի
քէն ոչինչ քաղցրութիւն ճա-

շակել, ոչինչ զեղ սիրել, ոչինչ
անարժան սէր խնդրել, ոչինչ
մխիթարութեան ցանկալ, ոչինչ
բերկրութիւն ընդունել, ոչինչ
պատուոյ ի խնդիր լինել, յոչինչ
անդթութենէ երկնչել, որ կեն-
դանի ես, եւ թագաւորես ընդ
շօր եւ սուրբ շողոյն. ամէն:

Ս. Թով. Ահոյ:

Աղաչեմ զքեզ, քաղցրագութ
Տէր իմ Յիսուս Վրիստոս, չար-
չարանք քո լիցի ինձ զորութիւն
ամբացուցիչ եւ հզօրիչ, վերք քո
լիցին ինձ կերակուր եւ ըմպելի,
կերակրել նոքօք, արբենալ եւ
զմայել: Յօղումն արեան քո լիցի
ինձ լուացումն ամենայն յանցա-
նաց իմոյ: Մահ քո լիցի փառք
մշանջենաւոր: Աւ ի սոսին լիցի
ինձ սփոփումն, ցնծութիւն, առ-
ողջութիւն եւ քաղցրութիւն.

որ կենդանի ես, եւ թագաւորես
ընդ Հօր, եւ ընդ սուրբ Հոգւոյդ.
ամէն:

Տէր Յիսուս Քրիստոս, հայր
բողոքագութ, աղաչեմ զքեզ,
վասն սիրոյ խնդութեանն՝ զոր
խնդաց մայր քո սիրելի, յորժամ
երեւեցար նմա յամենասուրբ զի-
շերի զատկին, եւ վասն այն խրն-
դութեանն՝ յորժամ ետես զքեզ
փառաւորեալ լուսով աստուա-
ծութեան, լուսաւորեա զես պար-
զեւօք Հոգւոյդ սրբոյ, զի կարող
եղէց կատարել զկամս քո զամե-
նայն առուրս կենաց իմոց: Ար
կենդանի ես, եւ թագաւորես
ընդ Մատուծոյ Հօր յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Հրաշափառ եւ պայծառագոյն
կոյս Մարիամ, մայր Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, թա-

գուհի երկնի եւ երկրի, որ զարա-
բիչն ամենայն արարածոց արժա-
նի եղեր կրել ի քո սուրբ յորո-
վայնի. զորոյ գնոյն ճշմարիտ մար-
մինն եւ զարիւնն ես անարժանս
առնուլ համարձակեցայ. աղա-
չեմ զքեզ վասն կուսական խո-
նարհութեան քո եւ վասն չար-
չարանաց եւ մահու նորին որ-
դոց քո, բարեխօս լինել առ նա
վասն իմ ողորմելի մեղաւորիս,
զի զորովք ի սուրբ պատարա-
զի նորա անդիտութեամբ, ան-
հոգութեամբ կամ անզգուշու-
թեամբ զանց արարի, ամենա-
սուրբ հայցուածովք քո ներեացի
ինձ. ամէն:

Օրհնեալ է Քրիստոս Արդի
Մատուծոյ, որ պատարագեցաւ
այսօր ի մէջ սուրբ եկեղեցւոյ, աստ
եւ ընդ ամենայն տեղիս, Հօր ի

Հաշտութիւն, եւ մեզ ի քառութիւն, եւ ի թողութիւն մեղաց:

Պարգեւեացե՛ք Վրիստոս Արզիւն Աստուծոյ յամենայն պատարագաց մասն եւ ողորմութիւն մեզ, եւ ծնողաց մերոց, եւ երախտաւորաց ամենեցուն, եւ այնոցիկ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղթս, եւ եւս ամենայն հաւատացելոց՝ կենդանեաց եւ ննջեցելոց:

Աւ ինքն օրհնեալ եղցի ընդ շօր եւ ընդ սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սուրբ Արրորգութիւն ընկալ զպատարագս ընծայեալս քեզ, ի յիշատակ մարմնացելոյ Բանին՝ ծննդեան եւ շարչարանացն, յարութեան եւ համբարձման, եւ ի յիշատակ երանուհի կուսին Մարիամոն, երանելի Յովհաննու մկրտչին, եւ սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, եւ սրբոյ

Հօրն մերոյ Վրիգորի Առասարչին, եւ ամենայն սրբոց. եւ նոքա բարեխօսեացն վասն մեր եւ վասն ծնողաց մերոց, եւ երախտաւորացն ամենեցուն, կամ որք յանձնեալ են ի յաղթս մեր, լեցի մասն ի պատարագէս մերմէ: Աւ դու, Տէր Յիսուս, ընկալցիս զլնդրուածս մեր. եւ քեզ փառք հանդերձ շարք, եւ սուրբ Հոգւովդ յաւիտեանս. ամէն:

Սաղմոս 19.

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Ի Տէր պարծեացի անձն իմ. լուիցեն հեզք, եւ ուրախ եղիցին:

Մեծ արարէք զՏէր ինեւ. եւ բարձր արասցուք զանուն նորա ի միասին:

Խնդրեցի ի Տեսունէ, եւ լու-

աւ ինձ. յամենայն նեղութենէ
խմէ փրկեաց զես:

Մատիք առ Տէր եւ առէք
զոյս. եւ երեսք ձեր մի ամաչեացեն:

Եյս աղքատ կարգաց առ Տէր,
եւ Տէր լուաւ ամա. յամենայն
նեղութենէ սորա փրկեաց զա:

Բանակք հրեշտակաց Տեառն
չուրջ են զերկիւղածովք իւրովք,
եւ պահեն զնոսա:

Ճաշակեցէք եւ տեսէք՝ զի
քաղցր է Տէր. երանեալ է այր՝
որ յուսայ ի նա:

Երկերուք ի Տեառնէ ամենայն
սուրբ նորա. զի ոչ է ինչ պա-
կասութիւն երկիւղածաց նորա:

Մեծամեծք աղքատացան եւ
քաղցեան, բայց ոյք խնդրեն զՏէր
մի պակասեացի ի նոցանէ ամենայն
բարութիւն:

Եկայք, որդեակք իմ, եւ լու-
արուք ինձ. եւ զերկիւղ Տեառն
ուսուցից ձեզ:

Ո՛վ է մարդ որ կամի զկեանս,
եւ սիրէ զաւուրս իւր տեսանել
ի բարութեան:

Լռեցի զնեզու քո ի չարութե-
նէ. եւ շրթունք քո մի խօսեացին
զնեղութիւն:

Խոտորեաց ի չարէ, եւ արա
զբարի. խնդրեա զխաղաղութիւն,
եւ երթ զհետ նորա:

Եչք Տեառն ի վերայ արդարոց,
եւ ականջք նորա ի վերայ աղո-
թից նոցա:

Երեսք Տեառն ի վերայ չարա-
գործաց. սատակել յերկրէ զժի-
շատակս նոցա:

Արդացին արդարքն առ Տէր,
եւ Տէր լուաւ նոցա. յամենայն
նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

Մերձ է Տէր առ այնոսիկ որք
մաշեալ են սրտիւք. եւ զխոնարհս
հոգւով կեցուցանէ:

Բազում նեղութիւնք են այ-
դարոց. յամենայնէ փրկէ զնոսա

Տէր, եւ պահէ զամենայն ոսկերս
նոցա, եւ մի ի նոցանէ մի փշրեսցի:

Մահ մեղաւորին չար է. բայց
ոչք ատեն զարդարն, զղջասցին:

Փրկէ Տէր զանձինս ծառայից
իւրոց. մի զղջասցին ամենեքեան
ոչք յուսացեալք են ի նա:

Սաղմոս ճԽԵ.

Օրհնեա անձն իմ զՏէր. օրհ-
նեցից զՏէր ի կեանս իմ, սաղմոս
ասացից Աստուծոյ իմոյ մինչեւ
եմ ես:

Մի յուսայք յիշխանս եւ մի
յորդիս մարդկան, զի ոչ գոյ փր-
կութիւն ի նոսա:

Ելցէ հողի ի նոցանէ, եւ
զարձցին անդրէն ի հող. եւ
յայնմ աւուր կորիցեն ամենայն
խորհուրդք նոցա:

Երանի ազգի՛ որոյ Տէր Ա-

տուած Յակոբայ օգնական նորա,
եւ յոյս նորա ի Տէր Աստուած է:

Որ արար զերկինս եւ զերկիր,
զձով եւ զամենայն որ է ի նոսա:

Ո պահէ զճշմարտութիւն յաւ-
խտեան, եւ ատնէ իրաւունս զըր-
կերց:


Տայ հայ քաղցերոց, եւ ար-
ձակէ զկապեալս Տէր:

Տէր բանայ զաչս կուրաց, եւ
կանգնէ զգորբեալս Տէր:

Տէր սիրէ զարդարս, Տէր պա-
հէ զպանդուխտս, զորքս եւ զայ-
րիս ընդունի Տէր, եւ զճանա-
պարհս ամբարշտաց կորուսանէ:

Թաղաւորեսցէ Տէր յաւի-
տեան. Աստուած քո Սիոն յազ-
գէ մինչեւ յազգ:





50

117



2509

« Ազգային գրադարան



NL0029552



2430